



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 124 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Գևորգ Բաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրբեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Դավիթ Մելքոնյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Արթուր Չախոյան** ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 12.07.2021թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 5 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՀՀ Նախագահի հրամանագրերով .....	3
---------------------------------	---

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արուսյակ Ալեքսանյան, Արտակ Ղազարյան Քրեական հետապնդման հարուցման սկզբունքի ընտրության և դատավարական միջոցների խնայողության հարցերի մասին .....	5
Դավիթ Օհանյան Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը որպես հափշտակության առարկա դիտարկելու հարցի շուրջ .....	10
Գևորգ Իսրայելյան Երեխայի նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը՝ լանզարոտեյի կոնվենցիայի կարգավորումների տեսանկյունից .....	16
Հասմիկ Սմբատյան Պատմական ակնարկ քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ .....	21

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռոբերտ Մհերյան Նախադեպային իրավունքի կարգավորիչ ազդեցությունը բնակարանի խուզարկության քրեադատավարական հիմնախնդիրներում .....	26
--	----

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավթուհի Ղահրամանյան Անբարեխիղճ մրցակցության էությունը և իրավակարգավորումը .....	35
Սամինե Պետրոսյան Ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տիրապետումը և օգտագործումը .....	40

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լուսինե Սարգսյան Հայցի ապահովման տեսակները ՀՀ քաղաքացիական դատավարությունում .....	46
--	----

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Գյոզալյան իրավական ֆիլցիանների դերը իրավահարաբերությունների կարգավորման գործընթացում ....	51
---	----

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Զավեն Սմբատյան Փաստաբանների և վարչական մարմինների միջև ծագող իրավահարաբերությունների հիմնախնդիրները «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համատեքստում .....	55
---	----

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Карине Давтян Понятие специальных знаний в гражданском и административном процессе РА .....	60
---	----

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լեոնիդ Նահապետյան Զինվորական հանցագործությունների կանխարգելման հատուկ (անհատական) միջոցները.....	64
--	----

## ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նելլի Տեր-Թորոսյան «Պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, դրա տեսական և գործնական նշանակությունը.....	72
--	----

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts .....	76
---	----

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	92
---	----



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**  
**Ս.Հ. ԳԱԼՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Սահմանադրության 137-րդ հոդվածը, «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Սրբուհի Հովհաննեսի ԳԱԼՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հուլիսի 5  
Երևան  
ՆՀ-159-Ա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**  
**Գ.Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Սահմանադրության 137-րդ հոդվածը, «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Գևորգ Սուրենի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հուլիսի 5  
Երևան  
ՆՀ-160-Ա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**  
**Ա.Ա. ԱՖԱՆԴՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Սահմանադրության 137-րդ հոդվածը, «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արմեն Ալբերտի ԱՖԱՆԴՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հուլիսի 5  
Երևան  
ՆՀ-161-Ա



ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

## ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

### Ներածություն

Այն երկրները, որոնք քրեական հետապնդման հարուցումը կառուցել են քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքով, հենց այդ սկզբունքի գործարկմամբ և «դատախազական հայեցողությամբ» հնարավորություն ստացան լուծելու նաև այլ կարևոր խնդիր. սկզբունքի կիրարկման շնորհիվ հնարավոր է լինում խնայել պետական մեղադրանքի ռեսուրսները՝ դրանք կենտրոնացնելով առավել ծանր հանցագործությունների բացահայտման վրա:

Այդպիսով իսկ քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքի առկայությունը լայն հնարավորություն էր ստեղծում ընդհանրապես քրեական դատավարության բեռնաթափման համար:

Այս տեսանկյունից հարցին անդրադառնալով՝ հետաքրքիր տվյալներ է բերում դատավարագետ Լ.Գոլովկոն: Վերջինս նկատում է, որ այն երկրներում, որտեղ համակարգը կառուցված է նպատակահարմարության սկզբունքի հիման վրա, բավականին բարձր են ցուցանիշները, որոնցով հետապնդման հարուցումը մերժվում է հենց քրեական հետապնդման աննպատակահարմարության շարժառիթով և, իբրև ասվածի հավաստում, հեղինակը բերում է հետևյալ վիճակագրությունը. «...Ճապոնիայում խոսքը գնում է մոտավորապես 60% քրեական գործերի մասին, ... Ֆրանսիայում այդ թիվը

դեռ նախանցյալ դարում կազմում էր դատախազություն մտնող բոլոր քրեական գործերի 50%, իսկ մեր օրերում այն երբեմն հասնում է ահռելի չափերի՝ 75-80%»<sup>1</sup>:

Այս տեսանկյունից հարց է առաջանում արդյո՞ք օրինականության սկզբունքը ինքնին բացառում է քրեական վարույթի «բեռնաթափումը», դատավարական ռեսուրսների խնայողությունը՝ առավել ծանր, բարդ հանցագործությունների բացահայտման համար:

Նշված հարցին պատասխանելիս ռուս դատավարագետները (հատկապես հետխորհրդային դատավարագիտության ներկայացուցիչները), թերևս չընկալելով օրինականության սկզբունքի ստեղծման **բուն նպատակը** (քաղաքական իշխանության ազդեցության չեզոքացումը), և շեշտադրումը **փոխելով** սկզբունքի **գործարկման հետևանքի վրա** (հանցագործության փաստական հանգամանքների առկայության պայմաններում՝ **անշեղորեն քրեական հետապնդման հարուցման վրա**), մեր համոզմամբ, ոչ իրավաչափորեն գալիս էին այնպիսի սխալ եզրահանգման, ըստ որի՝ հանրային շահի բովանդակությունը փոփոխվում է կախված քրեադատավարական համակարգի կառուցվածքից՝ այն կառուցված է նպատակահարմարությամբ, թե՛ օրինականության սկզբունքով<sup>2</sup>:

Ըստ այդմ, օրինակ, դատավարագետ Ա.Կոզլովան նկատում է, որ «Քրեական դատավարությունում լեգալության (օրինականու-

<sup>1</sup> См. Головки Л.В. Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. – М.: Правоведение, 2009, էջ 305:

<sup>2</sup> См. Козлова А.Н. Публичность как принцип уголовного судопроизводства: дис. ... к.ю.н., Москва, 2007, էջ 209:

թյան՝ հեղ.) սկզբունքի իշխանության դեպքում հանրային շահը կատարված յուրաքանչյուր հանցագործության բացահայտումն ապահովելու ձգտման մեջ է... քրեական դատավարությունը նպատակահարմարության սկզբունքով կառուցելու պայմաններում հանրային շահը կայանում է. 1) որոշ հանցագործությունների բացահայտման առաջնահերթությանը այլոց նկատմամբ (օրինակ, առաջնահերթությանը տրվում է առավել ծանր, վտանգավոր կամ այդ ժամանակաշրջանում առավել տարածված հանցագործությունների բացահայտմանը), 2) նյութական, դատավարական և ժամանակային ռեսուրսների տնտեսման շնորհիվ աննպատակահարմար դեպքերում դրանք օգտագործելուց հրաժարվելու մեջ...»<sup>3</sup>:

Քրեական հետապնդման հարուցման սկզբունքի հիման վրա հանրային շահի նման տարբերակումն էլ իր հերթին հիմք է տալիս արձանագրելու, որ քրեական իրավունքում քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը հնարավոր է ապահովել միայն դատավարությունը քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի հիման վրա կազմակերպելու պարագայում:

Այդպիսով, գիտական շրջանակներում նշմարվում է որոշակի **հստակ կապ** քրեական հետապնդման հարուցման օրինականության քրեադատավարական և քրեական պատասխանատվության անխուսափելիության քրեաիրավական սկզբունքների միջև<sup>4</sup>:

Սակայն, մենք չենք կիսում այն մոտեցումը, թե ընտրված քրեական հետապնդման հարուցման սկզբունքով պայմանավորված (նպատակահարմարություն թե օրինականություն)՝ տարբեր են հանրային շահի բովանդակություն-

ները, և երկրորդ՝ չենք կարծում, որ առկա է օրգանական կապ քրեական հետապնդման հարուցման օրինականության և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքների միջև:

### 2.1 Քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքը և քրեական հետապնդման մարմնի գնահատման հնարավորությունները

Վերը բերված մոտեցումը հաշվի չի առնում կարևոր մի հանգամանք. քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքը չի բացառում քրեական հետապնդման մարմնի կողմից գնահատման լիազորությունն ընդհանրապես, ավելին՝ այն նույնիսկ որոշակիորեն հիմնված է քրեական հետապնդման մարմնի կողմից գնահատելու հնարավորության վրա:

Այս առնչությամբ Ջ.Լանգբեյնը նկատում է. «Ոչ մի հանրություն չի հանդուրժի պարտադիր քրեական հետապնդման կանոնի (օրինականության սկզբունքի՝ հեղ.) այնպիսի անողորությունը, որ դատախազը հարկադրված լինի քրեական վարույթ հարուցել յուրաքանչյուր դեպքով՝ անկախ նրանից, թե որքան թույլ են ապացույցները»: Հեղինակն ընդգծում է, որ դատախազն ունի ապացույցները գնահատելու լիազորություն, և «երբ նա համոզվում է, որ չի խախտել քրեական օրենքը կամ երբ ապացույցները դատարանին չեն կարող համոզել կասկածյալի մեղավորության մասին, նա (դատախազը՝ հեղ.) այդպիսով հանրային շահը սպասարկում է անհիմն (frivolous) քրեական վարույթի վրա **միջոցներ չծախսելով...**»<sup>5</sup>:

Թե՛ օրինականության և թե՛ նպատակա-

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 209-210:

<sup>4</sup> Այս մասին տե՛ս **Головко Л. В.** Альтернативы уголовному преследованию в современном праве.– СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002, էջ 348, նաև՝ **Козлова А.Н.**, նշվ. աշխ., էջ 227: Ավելին, որոշ գիտնականների ընկալմամբ այդ «կապն» այնչափ ցայտուն է, որ վերջինս ուղղակիորեն արտահայտվում է գրվող ատենախոսությունների վերնագրերում, տե՛ս, օրինակ, **Ковтун Н.Н.**: Обеспечение неотвратимости уголовной ответственности за преступление в стадии возбуждения уголовного дела. Дис. ... канд. юрид. наук, М., 1992:

<sup>5</sup> Տե՛ս **Langbein, John H.** “Controlling Prosecutorial Discretion in Germany,” *University of Chicago Law Review*: Vol. 41: Iss. 3, Article 2, (1974), էջ 440: Համանման դատողություններ տե՛ս **J.Herrmann**, The Rule of Compulsory Prosecution and the Scope of Prosecutorial Discretion in Germany,” *University of Chicago Law Review*: Vol. 41: Iss. 3, Article 3., 1974, էջ 475: Ընդ որում՝ այսպիսի մոտեցումը նոր չէր: Օրինակ՝ Ն.Մուրավյովը, քննարկելով Գերմանիայի 1877թ. քրեական դատավարության կանոնադրության քրեական հետապնդման օրինականության սկզբունքը սահմանող 152-րդ հոդվածը, նկատում է. «*Քողոր* պատժելի արարքներով հետապնդում հարուցելու և իրացնելու պարտականությունը սահմանված է **պայմանով**՝ «որքանով, որ առկա են բավարար փաստական հիմքեր» (152-րդ հոդված): Հեղինակը

հարմարության սկզբունքների դեպքում քրեական հետապնդման մարմինն ունի գնահատման լիազորություն:

Սակայն եթե օրինականության սկզբունքի դեպքում «գնահատումը» տեղ է գտնում մեկ անգամ և մի հարցում («բավարար փաստական հիմքերի» առկայության տեսանկյունից), և այդ հարցը դրականորեն գնահատվելու դեպքում, օրինականության սկզբունքով պայմանվորված, բացառվում է այլևս քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարությունը գնահատելը (այս պարագայում արդեն հանրային շահը ձևականացված է և կայանում է քրեական հետապնդում հարուցելու մեջ), ապա նպատակահարմարության սկզբունքի դեպքում քրեական հետապնդման մարմինը գնահատում է երկու հարց՝ քրեական հետապնդման հարուցման համար «բավարար փաստական հիմքերի» առկայությունը, և երկրորդ՝ քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարությունը:

Հարցը արդեն այս լույսի ներքո դիտարկելու պարագայում, երբ ընդունվում է, որ օրինականության սկզբունքի դեպքում քրեական հետապնդման մարմինը նույնպես գնահատում է իրականացնում (գնահատում է «բավարար փաստական հիմքերի» առկայությունը), և համադրելով այդ «փաստական հիմքերը» **անբավարար** գնահատելու հետևանքով քրեական հետապնդում չհարուցելու մեծաթիվ դեպքերը<sup>6</sup>, մի կողմից խզվում է քրեական պատասխանատվության անխուսափելիության և քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքների «ակնհայտ» թվացող այդ կապը, մյուս կողմից էլ՝ օրինականության սկզբունքի և դատավարական, ժամանակային, կադ-

րային և այլ «միջոցների անխնա վատնման» կապը:

## 2.2 Օրինականության սկզբունքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի զուգակցումը՝ իբրև քրեադատավարական միջոցների խնայողության միջոց

Գերմանական քրեական դատավարության գիտության մեջ դատավարական միջոցների, մասնավորապես դատախազական միջոցների սղության և դրանց խնայողության հարցերը դեռևս 1800-ականներից են բարձրացվել և դրանց լուծման ուղիներ փնտրվել: Ուղիներ, որոնք կլուծեին մեղադրանքի միջոցների խնայողության խնդիրը, սակայն միևնույն ժամանակ կպահպանվեր դատախազի սահմանափակվածությունը քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքով (չբարձրացնելով քաղաքական իշխանության ազդեցության խնդիրը):

Եվ գերմանացիները լուծումը գտան հարյուրամյակների պատմություն ունեցող ինստիտուտին՝ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտին<sup>7</sup> բոլորովին նոր նշանակություն ու հիմնավորում հաղորդելով: Այդպիսով գերմանական գրականության մեջ ծնունդ առավ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող չորս տեսություններից մեկը՝ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունը:

Քննարկվող տեսության հիմնական գաղափարներն առավել արտահայտիչ ու հստակորեն ուրվագծվել են գերմանացի իրավագետ Դոխովի կողմից: Վերջինս, խոսելով «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի մասին, նկատում էր, որ այն չի կարող բացա-

նկատում էր, որ «այդ բավարարության որոշումը կախված էր մեղադրական իշխանության **հայեցողությունից...**» (տե՛ս **Муравьев Н.В.** Прокурорский надзор в его устройстве и деятельности. Пособие для прокурорской службы. Т. 1. Прокуратура на Западе и в России. – М., 1889, էջ 201):

<sup>6</sup> 1970-ականների սկզբներին, օրինակ, գերմանական Բադեն-Վյուրտեմբերգում, ըստ Ջ.Հերմանի, այդ հիմքերով քրեական հետապնդումներ չհարուցելու (այն դադարեցնելու) ցուցանիշները ընկած են եղել 45-61 տոկոսի միջակայքում՝ կախված դատախազական գրասենյակներից, տե՛ս **J.Herrmann**, նշվ.աշխ., էջ 475:

<sup>7</sup> Որոշ հեղինակներ այս ինստիտուտի ծագման բնօրրան են համարում հին գերմանական իրավունքը (տե՛ս, օրինակ, **Головко Л. В.**, Альтернативы уголовному преследованию в современном праве. –СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002, էջ 446), մյուսները ժամանակագրական առումով գնում են ավելի հետ՝ այդպիսի գործերի տարրեր նշմարելով դեռևս հռոմեական իրավունքում (տե՛ս **Фон-Резон А. К.**, О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. СПб., 1882, էջ 13): Այս մասին մանրամասն տե՛ս **Ղազարյան Ա.Ա.**, «Մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցությունը, //«Պետություն և իրավունք», No 2 (80), 2018թ. էջեր 74-75:

տրվել միայն մեկ հիմքով (հիմնավորմամբ), և դրանց գոյությունը պետք է պայմանավորել տարատեսակ հիմքերով, որոնցից մեկն էլ հենց պետական մեղադրանքի միջոցների սակավությամբ է պայմանավորված:

Հեղինակն ընդգծում էր այն հանգամանքը, որ պետական միջոցները միշտ չեն կարող բավարար լինել բոլոր հանցագործությունները հետապնդելու և հանցանք կատարած բոլոր անձանց պատժելու (պատասխանատվության ենթարկելու) համար (փաստացիորեն բացառվում էր պատասխանատվության անխուսափելիությունը), հետևաբար, պետք է ընտրություն կատարել՝ թե որ արարքները հետապնդվեն: Դոխովը նկատում էր, որ հարցի լուծումը պետք է պայմանավորել «պետության շահով», որը տարբեր է՝ կախված հանցավոր արարքի տեսակներից, և որը «...սովորաբար մեծ է ծանր հանցագործությունների, քան թեթևների դեպքում»:<sup>8</sup>

Հեղինակը նկատում էր, որ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում նույնիսկ միևնույն հանցանքը հետապնդելու կամ չհետապնդելու հանրային շահը կարող է տարբերվել, սակայն, միևնույն ժամանակ, հեղինակը ընդգծում էր, որ պետք է խուսափել հանրային շահի գնահատման հարցի լուծումը միմիայն դատախազությանը վերապահելուց<sup>9</sup> (այդպիսով իսկ բացառելով նաև քաղաքական իշխանության հնարավոր ազդեցությունները):

Եվ Դոխովը, իբրև նշված հարցի լուծման եղանակ, տեսնում էր հենց «մասնավոր մեղադրանքի գործերի» ստեղծմամբ՝ օրենքով որոշակի շրջանակի «ոչ ծանր», «թեթև» հանցագործություններ առանձնացնելով (որոնցով «հետապնդման հանրային շահը ապրիորի առավել պակաս է») և այդ գործերով հանրային (պետական) մարմնի կողմից վարույթ (հետապնդում) չհարուցելով, քանի դեռ հանցագործությունից տուժած անձը բողոք չի ներկայացրել:

Ըստ էության, նման մոտեցմամբ միահյուսվում են տուժողի մասնավոր շահն ու հանրային շահը: Նման գործերով տուժողի բողոք

չներկայացնելը անուղղակիորեն վկայում էր նրան ենթադրյալ հանցանքով պատճառված վնասի չնչինության մասին (այդ իսկ պատճառով նա բողոք չի ներկայացնում) և հակառակը՝ բողոքի ներկայացումը վկայում էր պատճառված վնասի մեծ լինելու մասին, որպիսի պարագայում նույն հանրային շահից էր բխում նման մեծ վնասի պատճառ դարձած արարքի առթիվ քրեական վարույթ նախաձեռնելը:

Հարցի նման լուծումը մի կողմից հնարավորություն է տալիս «խնայել» «պետական մեղադրանքի» միջոցները (դրանք ուղղելով ավելի ծանր արարքների հետապնդմանը), մյուս կողմից՝ ապահովում էր նաև ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի մասնավոր շահերի պաշտպանությունը (նրա բողոքով հանրային (պետական) մարմինը պետք է (եթե, իհարկե, առկա են այլ պայմանները) հարուցեր քրեական վարույթ (հետապնդում))՝ միաժամանակ նաև «սահմանափակվում է» քրեական հետապնդման հարցի լուծման դատախազական լայն հայեցողությունը.<sup>10</sup> դատախազությունը գործում էր օրինականության սկզբունքի հիման վրա:

Այս կերպ, օրինականության սկզբունքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի զուգակցմամբ, համադրմամբ գերմանացիները հասնում էին նույն արդյունքին, ինչ ֆրանսիացիները նպատակահարմարության սկզբունքով և դատախազական լայն հայեցողությամբ:

Եթե ֆրանսիացի դատախազը, գործելով «իր հայեցողությամբ», այդպիսով իսկ «թեթև», «ոչ ծանր» գործերով խնայում էր դատախազական միջոցները (քանի դեռ հանցագործությունից տուժողը «չէր հաղթահարում» «դատախազական հայեցողությունը» քաղաքացիական հայց ներկայացնելով), ապա գերմանական լուծման պարագայում **նույն արդյունքին հասնել էր լինում ոչ թե «դատախազական հայեցողության», այլ՝ օրենսդրական հստակ կարգավորման միջոցով.** դատախազը «ոչ ծանր», «թեթև» հանցագործություններով, որոնք ա-

<sup>8</sup> Տե՛ս **Фон-Резон А. К.**, նշվ. աշխ., էջ 43:

<sup>9</sup> Տե՛ս **Тайбер Л. Я.**, Жалоба потерпевшего при преступлениях неофициальных. Харьков: Тип. и лит. М. Зильберг и сыновья, 1909, էջ 341-342:

<sup>10</sup> Դոխովի հայացքները ավելի մանրամասն տե՛ս **Тайбер Л. Я.**, նշվ. աշխ. էջ 342-346:



նանձնացված էին «մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակում», **ի սկզբանե չէր հարուցում գործ, քանի դեռ չկար արտաքին ազգակը (տուժողի բողոքը)՝ այդպիսով իսկ խնայելով դատախազական միջոցները**<sup>11</sup>:

Վերոգրյալը թույլ է տալիս հանգել որոշակի հարցերի պատասխանի. քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքն ինքնին չի ստեղծվել «յուրաքանչյուր հանցագործության դեպքով անկախ հանգամանքներից քրեական վարույթ նախաձեռնելու համար», եվրոպացիներն այն չեն նախազօծել քրեական պատասխանատվության անխուսափելիության «խորհրդային» սկզբունքի ապահովման համար, օրինականության սկզբունքի հիման վրա քրեադատավարական համակարգի կառուցումը ամենևին չի վկայում «դատավարական ռեսուրսների խնայողության» գիտակցության (հանրային շահի) բացակայության մասին, և այն, ինչպես նկատեցինք, ամբողջովին համատեղելի է այդպիսի միջոցների խնայողության հետ<sup>12</sup>, սակայն այդ համատեղումն իրականացվում է որոշակիորեն այլ կերպ և ոչ թե «դատախազական հայեցողությամբ»:

### Եզրակացություն

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգումների.

1. Ելնելով այն հանգամանքից, որ քրեական հետապնդման հարուցման օրինականու-

թյան սկզբունքի գործարկման պայմաններում էլ հնարավոր է կազմակերպել դատավարական միջոցների խնայողություն՝ այդ միջոցները առավել ծանր և բարդ հանցագործությունների քննությանը նպատակաուղղելու համար, սխալ պետք է դիտարկել գիտության մեջ տեղ գտած այն պնդումները, թե նպատակահարմարության և օրինականության սկզբունքների դեպքերում գործ ունենք հանրային շահի տարբեր բովանդակությունների հետ: Օրինականության սկզբունքի գործարկումը չի ենթադրում յուրաքանչյուր հանցագործությամբ անկախ հանգամանքներից քրեական հետապնդման հարուցում: Թե՛ քրեական հետապնդման հարուցման օրինականության, թե՛ նպատակահարմարության սկզբունքների դեպքում հանրային շահի բովանդակությունը, մեր համոզմամբ, չի փոխվում, այլ փոխվում են դրան հասնելու (այն ապահովելու) միջոցները:

2. Օրինականության սկզբունքը չի բացառում որոշ հանցագործություններով քրեական հետապնդման չհարուցումը, հետևաբար՝ կարծում ենք, որ սխալ է կարծրացած այն մոտեցումը, թե օրինականության սկզբունքը քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման քրեադատավարական միջոց է: Այս երկու՝ քրեադատավարական և քրեաիրավական սկզբունքների «անխզելի կապը» պետք է գնահատել որպես թվացյալ:

<sup>11</sup> Պետք է նկատել, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի ծագումն ու գոյությունը հիմնավորող այս տեսությունը այդքան էլ մեծ տարածում չգտավ ոչ մինչևիդափոխական, ոչ էլ հետհեղափոխական հայրենական (ռուսական և հայկական) գրականության մեջ և նշված տեսությանն անդրադարձր գրականության մեջ կատարվում էր առավելապես քննադատական նպատակներով (տե՛ս, օրինակ, **Фон-Резон А. К.**, նշվ. աշխ., էջ 56-57, **Тайбер Л. Я.**, նշվ. աշխ., էջ 341-346, **Полянский Н. Н.** Процессуальные права потерпевшего // Советское государство и право. - 1940. - №12, էջեր 57-58), սակայն հենց իրենք գերմանացիները նաև մեր օրերում «մասնավոր մեղադրանքի գործերով» հիմնական մասնավոր մեղադրանքի գոյությունը հիմնավորում են առավելապես *պետական ռեսուրսների փնտրման նպատակով* (տե՛ս **Вернер Б.**, Уголовно-процессуальное право ФРГ: Учебник. 6-е изд., пер. с нем. Я.М. Плошкиной; Под ред. Л.В. Майоровой. – Красноярск: РУМЦЮО, 2004, էջ 333):

<sup>12</sup> Օրինակ՝ 20-րդ դարի երկրորդ կեսերից գերմանական քրեական դատավարություն ներմուծված, այսպես կոչված, «պատժի կարգադրագրի» ինստիտուտը «կառուցվել է» և «համախառնախանցվել է» քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի գործարկման պայմաններին (այս մասին տե՛ս **J. H. Langbein**, նշվ. աշխ., էջ 458): Եվ հարցի այս լույսի ներքո քննումը, հնարավորություն է տալիս որոշակիորեն քննադատաբար նայել և վիճելի համարել **Լ. Գոլովկոյի** առաջին հայացքից «անվիճելի» թվացող այն պնդումը, թե նպատակահարմարության սկզբունքը դիտարկում է իբրև քրեական հետապնդման այլընտրանքների ծագման «վճռորոշ դատավարական նախադրյալ», և որ այն հանդիսանում է «այլընտրանքային արդարադատության» ծագման անմիջական դատավարական նախադրյալ, և այլն (տե՛ս **Головко Л. В.**, Альтернативы уголовному преследованию в современном праве. – СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002, էջեր 35-36): Գերմանական պատժի կարգադրագրերը, որոնք նույնչափ պետք է դիտարկել քրեական հետապնդման այլընտրանքների համատեքստում, ամբողջությամբ «ներկառուցվել են» քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի գործարկման շրջանակներում:

**ԴԱԿԻԹ ՕՀԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՏ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ**

Ընդհանուր սեփականության և մասնավորապես ընդհանուր համատեղ սեփականության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ գիտական աշխատանքներ և հետազոտություններ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ոլորտում գիտական հետաքրքրությունը սպառվել է և չկան անպատասխան հարցեր: Միգուցե մեր այս պնդումն արդարացված լիներ այս ինստիտուտի մաքուր մասնավոր-իրավական հարթության մեջ: Բայց երբ միմյանց են բախվում մասնավոր և հանրային իրավունքները, պատկերն ամբողջովին փոխվում է: Այդժամ առաջանում են հարցեր, որոնք առնվազն պարզաբանման կարիք ունեն:

Քրեական իրավունքը և հատկապես դրա տեսությունը, որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, ունի իր առջև դրված նպատակները և խնդիրները: Այնուամենայնիվ հանդիպում են իրավիճակներ, երբ քրեական իրավունքն իր «ռեսուրսներով», մեկուսացված, առանց իրավունքի այլ ճյուղերի օժանդակության, չի կարողանում հասնել իր նպատակներին: Նման դեպքերում պետք է օգտվել իրավունքի այլ ճյուղերից, սույն դեպքում՝ քաղաքացիական իրավունքից: Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ քրեական իրավունքը ստորադասում ենք քաղաքացիական իրավունքին: Ամենևին ոչ: Ընդհակառակը, կարծում ենք, որ մասնավոր-իրավական կառուցակարգերը հնարավոր է բերել քրեական իրավունքի դաշտ այն չափով, որ քան թույլ է տալիս քրեական իրավունքը և այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հակասում քրեական իրավունքի էությանը:

Մասնավորապես, հափշտակության առարկա է հանդիսանում ուրիշի գույքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին

մասը սահմանում է՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Հարց է առաջանում՝ կարող է արդյո՞ք ամուսինների միջև ընդհանուր համատեղ գույքը դիտարկվել որպես հափշտակության առարկա: Այս հարցի պատասխանը ստանալու համար, կարծում ենք, պետք է ուսումնասիրել համատեղ սեփականության ինստիտուտի ծագումը, պատմական զարգացումը, դրա շուրջ ձևավորված տեսական մոտեցումները և առկա օրենսդրական կարգավորումները:

Ընդհանուր սեփականությունը ծագել է դեռևս Հին Հռոմում: Միևնույն գույքի պատկանելիությունը երկու և ավելի անձանց հռոմեական իրավունքում անվանվում էր *Communio* (ընդհանրություն): Ընդհանուր սեփականության տակ հասկացվում էր այնպիսի սեփականություն, որը բաժանվում է իդեալական մասերի: Սրա հետ կապված հռոմեացի հայտնի իրավաբան Ուլպիանոսը գրում էր՝ անբաժանելի իրերը մասերի են բաժանվում ավելի շուտ բանականությամբ, քան թե իրականության մեջ<sup>1</sup>:

Դեպքերի մեծամասնությունում ընդհանուր սեփականության հարաբերությունները ենթադրվում էին ոչ երկար և այդ կարճ ժամանակահատվածում համասեփականատիրոջը տրվում էր լիազորված անձի կարգավիճակ, ինչը հնարավորություն էլ տալիս վերջինիս ազդել ընդհանուր գույքի կառավարման վրա: Բացի այդ, միշտ հնարավորություն էր պահպանվում հասնելու ընդհանուր սեփականության վերացմանը<sup>2</sup>:

Պատմական այդ ժամանակահատվածում

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021

<sup>1</sup> См Новицкий И.Б. Римское право. էջ 102:

<sup>2</sup> См Муромцев С. Гражданское право древнего Рима / Лекции. М., 1883. էջ 466:

համասեփականատերերը գույքի նկատմամբ դիտարկվում էին որպես մեկ դեմք: Այդ դեպքում գույքը պատկանում էր ոչ թե կոնկրետ անձանց, այլ նրանց միությանը և միևնույն ժամանակ յուրաքանչյուրն իրավունք ուներ օգտվել այդ գույքից հավասար չափով<sup>3</sup>:

Հին հայկական իրավական աղբյուրներում ամուսինների համատեղ սեփականության իրավական ռեժիմ չէր նախատեսվում, գործում էր անջատության սկզբունքը և ամուսիններից յուրաքանչյուրը, որպես կանոն, կարող էր տնօրինել իր գույքը<sup>4</sup>: Այնուամենայնիվ կան որոշակի իրավական կարգավորումներ, որոնք ինչոր չափով վկայում էին ամուսինների գույքային ընդհանրության մասին: Մասնավորապես, ապահարգանի վերաբերյալ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում գրում է՝ Եվ եթե կինն իր հետ անասուններ բերած լինի, ապա որքան գլուխ որ բերել է, այդքանը և **ած տվածի կեսը վերցնի, իսկ կեսը այրին թողնի՝ աշխատության ու ծախելու համար**: Եվ օժիտն ու ծախսերը, որ միմյանց համար արել են երկու կողմերի ազգականները, թող չհիշվեն և չհիշվի նաև ծախսը հարսանիքի<sup>5</sup>:

Մինչհեղափոխական ժամանակահատվածում ամուսնական գույքային հարաբերություններում գործում էր տարանջատվածության սկզբունքը: Այլ կերպ ասած, ամուսիններն ամբողջովին ազատ էին միմյանց միջև գույքային հարաբերություններում: Սակայն 1920թ.-ից սկսեց շոշափվել կանանց պաշտպանության խնդիրը, քանզի այն ժամանակներում կանայք առավելապես զբաղված էին տնային տնտեսությամբ և գտնվում էին ամուսնուց լրիվ գումարային կախվածության մեջ: Ամբողջը ձեռք էր բերվում վերջինիս դրամական միջոցների

հաշվին և հետևաբար համարվում էր նրա սեփականությունը:

Նման անարդարությունը չէր համապատասխանում ամուսինների հավասարության սկզբունքին, քանզի կինը, զբաղվելով տնային տնտեսությամբ և դաստիարակելով երեխաներին, ոչ պակաս ջանքեր էր գործադրում: Այդ իսկ պատճառով որոշվեց համատեղ ձեռքբերված գույքի մասով ճանաչել նաև կնոջ իրավունքները<sup>6</sup>: Ինչպես իրավագիտորեն նկատում է Ա. Ա. Ելիսեևան՝ կնոջ ջանքերը ընտանիքում համարվում է հանրային օգտակար և ունեցվածքի տեսանկյունից հավասարեցվում է տղամարդու ջանքերին տնտեսության մեջ<sup>7</sup>: Ինչպես տեսնում ենք պատմական այդ ժամանակահատվածում ձեռք բերված գույքի ընդհանրության հիմնական պատճառը թերևս կնոջ իրավունքների պաշտպանությունն էր ինչպես ընտանիքում, այնպես էլ առհասարակ<sup>8</sup>:

Ինչպես տեսնում ենք, պատմական տարբեր ժամանակահատվածներում ամուսինների համատեղ գույքի վերաբերյալ գործել են տարբեր իրավական ռեժիմներ: Սակայն ակնհայտ է, որ պատմական զարգացումը տարել է դեպի համատեղ գույքի ընդհանրության սկզբունքի առավելության:

Իսկ ի՞նչ մոտեցումներ կան այս ինստիտուտի շուրջ մասնավոր իրավունքի դոկտրինայում: Ամուսինների գույքային հարաբերություններին բնորոշ հատկանիշները էականորեն տարբերվում են քաղաքացիական շրջանառության այլ մասնակիցների գույքային հարաբերություններից: Մասնավորապես, դրանք են՝ ընտանիքի անդամների շահերի պահպանությունը, անհատուցելիությունը, անհամարժեքությունը, անձնական վստահելիությունը:

<sup>3</sup> Տե՛ս Новицкий И. Б., նույն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս Ղարախանյան Գ. Հ. – Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք/ Երևանի պետական համալս.- ԵՊՀ հրատ., 2008, էջ 49:

<sup>5</sup> Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, գլուխ Զ, էջ՝ 48:

<sup>6</sup> Տե՛ս Картавенко Т.Н. История регулирования имущественных отношений супругов в России /Нотариальный вестник.– 2010.– №11.– 3-11 էջեր:

<sup>7</sup> Տե՛ս Елисеева, А.А. Равенство супругов в имущественных отношениях: история и современные вызовы / А.А.Елисеева // Актуальные проблемы российского права. - 2017. - №5 (78). - 118-125 էջեր:

<sup>8</sup> Գոյություն ունեն նաև այլ տեսակետներ: Մասնավորապես, Ե. Ա. Չեֆրանովան գտնում էր, որ ամուսնական գույքի ընդհանրության ռեժիմը բխում էր խորհրդային սոցիալիստական կարգից, որի հիմնական նպատակներից մեկը մասնավոր ունեցվածքը նվազագույնի հասցնելն էր: Տե՛ս Чефранова Е.А. Исторический аспект правового регулирования имущественных отношений супругов в российском праве /История государства и права.– 2006.– №11.– 21-22 էջեր: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման մոտեցումը միզուցե նպաստել է, սակայն ինքնին պատճառ չի հանդիսացել:

ՈՒ. Բ. Ֆիլատովան նշում է՝ ընդհանուր սեփականության առկայությունն ինքնին պայմանավորում է համասեփականատերերի անհատական սեփականության բացակայությունը: Ցանկացած գործողություն ընկալվում է որպես ընդհանուրի գործողություն: Ամուսիններից մեկի կողմից որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը դիտարկվում է որպես այդ գույքի նկատմամբ նաև մյուսի համար սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք: Եվ հակառակը, մեկի կողմից գույքի տնօրինումը նույնպես ընկալվում է որպես երկուսի գործողություն<sup>9</sup>:

Միևնույն գույքի նկատմամբ միաժամանակ երկու անձանց սեփականության իրավունքի առկայությունը ենթադրում է նրանց միջև առանձնահատուկ կապի առկայության մասին և հատկապես՝ **անձնական** կապի մասին: Այսինքն, օրենսդիրը իրավական նշանակություն է տալիս համատեղ սեփականության մասնակիցների միջև անձնական-ֆիզուցիար հարաբերություններին: Համատեղ սեփականության մասնակիցներն ինքնին հանդիսանում են այն կոլեկտիվը, որոնք հիմնվում են նման կապի վրա:

Նշված կոլեկտիվն իհարկե չի կարող հանդես գալ որպես սեփականության իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, այնուամենայնիվ, ինքնին դրա գոյությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ դրա մասնակիցների մեջ գոյություն ունի միասնական կամք:

Անձնական կապի ֆենոմենի մասին առավել հաջող հասկացություն է տալիս Ա. Ա. Երոշենկոն՝ անձնական կապի տակ պետք է հասկանալ ոչ միայն կապերը, որոնք կրում են անձնական և վստահելի բնույթ, այլ նաև մարդկանց միավորման այլ միջոցները, որոնք նախադրյալ են հանդիսանում ընդհանուր սեփականության համար: Այսինքն, նյութական ընդհանրությունը միշտ առաջանում է անհատների միջև, ովքեր արդեն իսկ կապված են որոշակի հարաբերություններով<sup>10</sup>:

Անձնական կապի առկայությունը հաղորդում է համատեղ սեփականության կառուցակարգին որոշակի կայունություն, որովհետև դրա մասնակիցները չեն կարող տնօրինել իրենց բաժինները երկու պատճառով. առաջին՝ այդ բաժինները սահմանված չեն, և երկրորդ՝ չեն կարող ընդհանրության մասնակիցներ կազմել նրանք, ովքեր դուրս են գտնվում անձնական կապից<sup>11</sup>:

Համատեղ սեփականության մասնակիցների միջև հարաբերությունները առաջին հերթին իրենցից ներկայացնում են անձերի միասնություն, որոնք չեն կարող փոխարինվել, բացի այդ արտաքին հարաբերություններում նրանք ներկայանում են որպես մեկ միասնություն: Հետևաբար, համատեղ սեփականության համասեփականատերերին պետք է վերաբերվել որպես մեկ ամբողջության և պայմանականորեն հավասարեցնել նրանց անհատական սուբյեկտի:

Համատեղ սեփականության վերաբերյալ տեսական այս մոտեցումները և եզրահանգումները, ըստ էության, ընկած են ներպետական օրենսդրական կարգավորումների հիմքում:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է համատեղ սեփականության մասնակիցները **միասին տիրապետում և օգտագործում** են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը **տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ**, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը<sup>12</sup>:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ համասեփականատիրոջից կողմից միասնության և համաձայնության վերոնշյալ օրենսդրական պահանջները չպահպանելը բավարար հիմքեր են ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը որպես հափշտակության ա-

<sup>9</sup> Տե՛ս Փիլատովա Ս.Ս. Проблема разграничения видов общей собственности // Нотариус. 2011. № 4.4-8 էջեր:

<sup>10</sup> Տե՛ս Երոշենկո Ա. Ա. Личная собственность в гражданском праве. М., 1973. էջ 57:

<sup>11</sup> Տե՛ս Փոգել Վ. Ա. Осуществление права общей собственности в жилищной сфере/ Канд. дис. М. 2003. 62-63 էջեր:

<sup>12</sup> Թերևս տնօրինման միակ ակտը, որը բացառություն է այս ընդհանուր կարգավորումից, հանդիսանում է կտակ կազմելը: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ թե համատեղ սեփականության կառուցակարգով, այլ կտակի՝ որպես միանձնյա գործարք լինելու, կտակի ազատության և կտակի գաղտնիության սկզբունքներով:

նարկա դիտարկելու համար: Իհարկե, համասեփականատիրոջ նման վարքագծի որոշակի դեպքերում կարող են առաջանալ բացասական հետևանքներ քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսքով (օրինակ՝ կնքված գործարքի անվավերություն): Սակայն, արդյո՞ք քաղաքացիական պարտավորության չկատարումը կամ քաղաքացիական պատասխանատվությունն ինքնին հիմքեր են հափշտակության հանցակազմի ձևավորման համար: Կարծում ենք՝ ոչ:

Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին: Մեկնաբանելով այս նորմը ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ համատեղ սեփականության գույքի օտարման դեպքում մյուս մասնակիցների համաձայնության առկայությունը ենթադրվում է՝ **համաձայնության առկայության կանխավարկած**<sup>13</sup>: Ստացվում է, որ այս կանխավարկածի ուժով որոշ դեպքերում նույնիսկ չի առաջանում քաղաքացիական պատասխանատվություն: Նման պարագայում խոսել քրեական պատասխանատվության մասին առնվազն իմաստագուրկ է:

Կցանկանայինք հատկապես ընդգծել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի

4-րդ մասը, որի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով: Ստացվում է, որոշ դեպքերում ամուսնու անձնական սեփականությունը կարող է դառնալ ամուսինների համատեղ սեփականություն: Չնայած, ՀՀ Վճռաբեկ դատարանը այս նորմի կիրառման համար սահմանել է որոշակի ֆիլտրացիոն չափանիշներ<sup>14</sup>, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ նման կարգավորումը բխում է համատեղ սեփականության ընդհանրության սկզբունքից:

Համատեղ սեփականության ընդհանրության սկզբունքի մասին են վկայում ոչ միայն համատեղ կյանքում ամուսինների կողմից ձեռք բերած «ակտիվները», այլ նաև «պասիվները»: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ ամուսինների ընդհանուր գույքի նկատմամբ բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր պարտավորություններով: Եթե դատավճռով հաստատվել է, որ ամուսինների ընդհանուր գույքը ձեռք է բերվել կամ ավելացել է ամուսիններից մեկի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին, ապա բռնագանձումը կարող է տարածվել համապատասխանաբար ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կամ դրա մի մասի վրա:

Համատեղ սեփականության ընդհանրության սկզբունքի վերաբերյալ հետաքրքիր դիրքորոշում է հայտնել ՀՀ Վճռաբեկ դատարանը.

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ. մարտի 30-ի թիվ 3-459(ՏԴ) որոշումը: Սակայն այս որոշումից որոշ ժամանակ անց ՀՀ Վճռաբեկ դատարանը թուլացրեց իր սահմանած կանխավարկածի ուժը: Մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ այդ համաձայնության առկայության կանխավարկածը գործում է բացառապես համատեղ գույքի հատուցելի օտարման ժամանակ, իսկ անհատուց օտարման դեպքում՝ ոչ: Այս մասով տես ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009թ. ապրիլի 17-ի թիվ ԵՔԴ/0256/02/08 որոշումը:

<sup>14</sup> Ըստ Վճռաբեկ դատարանի՝ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ ա) ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը, բ) գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը, գ) կատարված ներդրման և արժեքի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Այս մասով տես ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008թ. հունիսի 20-ի թիվ 3-422/ՎԴ որոշումը:

ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը՝ բացի ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքի<sup>15</sup>:

Հիմնվելով մեր կողմից կատարված պատմական, տեսական և օրենսդրական վերլուծության վրա՝ կարող ենք փաստել, որ համատեղ սեփականությունն իրենից ներկայացնում է մեկ միասնականություն կազմող գույքային հարաբերություն, որը հիմնված է ամուսինների անձնական կապի, վստահության, անհատուցելիության և անհամարժեքության վրա:

Սույն աշխատանքի սկզբում ընդգծել էինք, որ մասնավոր-իրավական կառուցակարգերը ինքնաշխատ կերպով չպետք է տեղափոխել քրեական իրավունքի դաշտ: Հետևաբար, որպեսզի կարողանանք մեր վերոնշյալ եզրահանգումը հիմք ծառայեցնել քրեական իրավունքի համար, պետք է հասկանալ, թե արդյոք այն չի հակասում քրեական իրավունքի էությանն ու ներքին տրամաբանությանը:

Որպես հետևանք՝ հափշտակության հանցակազմում հանդես է գալիս սեփականատիրոջ գույքային ֆոնդի պակասումը, որի հաշվին հանցավորի գույքային ֆոնդը լրացվում է: Այսինքն՝ հափշտակության մեղսագրման համար անհրաժեշտ է հաստատել, որ սեփականատիրոջ գույքային ֆոնդը պակասել է հենց հանցավորի կողմից գույքը վերցնելու հետևանքով<sup>16</sup>: Հափշտակության հանցակազմի պարագայում «ուրիշի գույք» օրենսդրական և քրեական իրավունքի տեսության մեջ տեղ գտած «սեփականատիրոջ գույքային ֆոնդ» եզրույթները համադրելով մեր կողմից վերը ներկայացրած եզրահանգման հետ՝ գտնում ենք, որ **համապետ**

**սեփականության հանդիսացող գույքը չի կարող դիտարկվել որպես հափշտակության առարկա:**

Այնուամենայնիվ, մեր օրենսդիրը համատեղ սեփականության մասով ընտրել է մասնակի ընդհանրության սկզբունքը: Այլ կերպ ասած, օրենսդիրը հնարավոր է համարում համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերվելիք որոշակի գույքի սոսկ անհատական բնույթը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը տալիս է երկու բացառություն՝

1. Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

2. Անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվում է այս երկու բացառությունը, պրակտիկայում շատ հաճախ բարձրացվում էր այն հարցը, թե արդյո՞ք սեփականաշնորհման արդյունքում ամուսիններից մեկի ստացած գույքը կարող է համարվել ամուսինների ընդհանուր գույք, թե՞ այն ներառվում է հոդվածի նշված մասով ամրագրված նվեր ստացած գույքի կազմի մեջ: Վճռաբեկ դատարանն այդ հարցի կապակցությամբ նշեց. սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության կարգավիճակը չի գործում: Սեփականաշնորհման ընթացքում ամուսինների ստացած գույքը հանդիսանում է նրանցից յուրաքանչյուրի սեփականությունը<sup>17</sup>:

Ստացվում է, որ այս երեք դեպքերի նկատմամբ համատեղ սեփականության իրավական

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2006թ. հունիսի 1-ի 3-415(ՎԴ) որոշումը:

<sup>16</sup> Տե՛ս Մ. Մարկոսյան, Հափշտակության և գտած գույքին տիրանալու սահմանազատման չափանիշները, Օրենքի պատվար ամսագիր, 2017թ., թիվ 3, 25-40 էջեր:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ. մարտի 30-ի թիվ 3-506 (ՎԴ) որոշումը:

ռեժիմը չի գործում և դրանք ամուսինների անհատական սեփականությունն են: Հետևաբար, դրանց նկատմամբ ցանկացած ոտնձգություն ենթակա է որակման քրեաիրավական ընթացակարգերով ընդհանուր հիմունքներով:

Պրակտիկայում որպես հափշտակությունների առարկա հաճախ հանդես են գալիս դրամական միջոցները: Այդ համատեքստում կցանկանայինք առանձնահատուկ անդրադառնալ համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված դրամական միջոցները որպես հափշտակության առարկա դիտարկելու հնարավորության հարցին: Դրամական միջոցների որպես համատեղ սեփականություն հանդիսանալու հարցին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը. օրենսդիրը, նախատեսելով «գույք» հավաքական եզրույթը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանափակումներից բացի, այլ բացառություն չի նախատեսել, հետևաբար ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում կարող են ներառվել նաև **դրամական միջոցները**:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է **գույքը**՝ ներառյալ **դրամական միջոցները**, արժեթղթերը և գույքային իրավունքները:

Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, մի դեպքում դրամը կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունը, գտնում է, որ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝

- ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, հոնորար, շահաբաժին կամ այլ եկամուտ.
- անուղղակիորեն, որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով<sup>18</sup>:

Ամբողջությամբ կիսելով ՀՀ Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը՝ գտնում ենք, որ համատեղ սեփականություն հանդիսացող դրամական միջոցները ևս չեն կարող հանդիսանալ հափշտակության առարկա:



<sup>18</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014թ. մայիսի 8-ի թիվ **ԵԿԴ/1418/02/12** որոշումը:

**ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս

**ԵՐԵՒԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՍԵՌԱԿԱՆ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝  
ԼԱՆՉԱՐՈՏԵՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Միջազգային հանրության առջև դրված կարևոր խնդիրներից է երեխայի անվտանգության և լավագույն շահերի ապահովումը, նրա իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Հայտնի է, որ իրավունքների ու ազատությունների խախտման առավել վտանգավոր դրսևորումներն երեխայի դեմ ուղղված հանցավոր ոտնձգություններն են, այդ թվում՝ սեռական հանցագործությունները:

«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակներից է երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը: Պայքարի գործիքակազմը ներառում է նաև քրեաիրավական միջոցները: Կոնվենցիայի 6-րդ գլուխը վերնագրված է «Նյութական քրեական իրավունք»: Կոնվենցիայի 18-ից 23-րդ հոդվածները վերաբերում են որոշակի արարքների համար քրեական պատասխանատվության սահմանմանը: Այդպիսի իրավական միասնականության ապահովման պահանջն իրագործման դեպքում հեշտացնում է հանցավորության դեմ պայքարի կազմակերպման գործընթացը միջազգային և ազգային մակարդակներում:

Վերը նշված հոդվածների դրույթների վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել երեխաների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների հիմնական քրեաիրավական հատկանիշները.

1) Հասարակական վտանգավորությունը երեխայի նկատմամբ կատարվող սեռա-

կան հանցագործությունների հասարակական վտանգավորությունը դրսևորվում է Կոնվենցիայի և ներքին իրավունքի նորմերով նկարագրված եղանակներով մարդու սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հարաբերությունների խախտումներով: Կատարվելով երեխաների նկատմամբ՝ նշված հանցատեսակները խաթարում են վերջինների նորմալ սեռական զարգացումը, առաջացնում են հոգեւետական զարգացման ընթացքի շեղումներ: Եթե վերոգրյալին հավելենք նաև այն հանգամանքը, որ երեխային նկատմամբ բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունները գրեթե միշտ ուղեկցվում են առողջությանը տարատեսակ վնաս պատճառելով, առավել քան ակնհայտ է դառնում այս հանցատեսակների հանրային բարձր վտանգավորությունը:

2) Հակաօրինականությունը

Այս հատկանիշը ենթադրում է տվյալ ժամանակահատվածում Կոնվենցիայի և ներքին իրավունքի նորմերով արարքի նախատեսված լինելը:

3) Դիտավորությամբ կատարվելը

Այս հատկանիշը ցույց է տալիս հանցավորի յուրահատուկ հոգեբանական վերաբերմունքն երեխայի նկատմամբ կատարվող սեռական ոտնձգության նկատմամբ:

4) Սեռական հարաբերությունների ոլորտում կատարվելը

Սեռական հանցագործությունների հիմքն են կազմում պատմական կոնկրետ ժամանակաշրջանում կոնկրետ հանրույթում պատմականորեն ձևավորված և կայացած մարդկանց միջև այն փոխհարաբերությունների տարրերը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021



որոնք առաջացել են նրանց սեռական պահանջմունքների բավարարման գործընթացում: Դրանք են.

- սեռական զուգընկերների քանակը,
- սեռական շփման մեջ մտնելիս բոլոր զուգընկերների կամավորությունը և իրավահավասարությունը,
- բոլոր զուգընկերների՝ որոշակի տարիքային սահմանի և սեռական հասունության հասած լինելը,
- զուգընկերների միջև մոտ կենսաբանական ազգակցության բացակայությունը,
- սեռական հարաբերությունների մասնակիցների կողմից՝ ինչպես այդ հարաբերությունների էության, այնպես էլ դրանց հնարավոր կենսաբանական և սոցիալական հետևանքների գիտակցումը,
- սեռական շփման մեջ մտնելու անթույլատրելիությունը մյուս զուգընկերոջ անօգնական վիճակի կամ կախյալ դրության օգտագործմամբ<sup>1</sup>:

Ստորև անդրադարձ կատարվի երեխայի նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների տեսակներին:

Կոնվենցիայի 18-րդ հոդվածում նկարագրվում է երեխայի նկատմամբ սեռական բնույթի բռնությունը: Այդ հոդվածում տարբերակվում է երեխայի նկատմամբ սեռական բռնության երկու տեսակ՝

1. 1-ին կետի «ա» ենթակետում քրեորեն պատժելի է դիտարկվում այն երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողությունների մեջ ներգրավվելը, որը, ազգային իրավունքի համապատասխան դրույթների համաձայն, չի հասել սեքսուալ բնույթի գործողությունների համար օրենքով սահմանված տարիքին:

Նշված հոդվածում շեշտվում է, որ Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ որոշում է այն տարիքը, որից ցածր հասակի դեպքում արգելվում է երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավվելը:

1-ին կետի «ա» ենթակետում սահմանված դրույթները նախատեսված չեն անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ սեքսուալ բնույթի գործողությունների կարգավորման համար: Այլ կերպ ասած, Կոնվենցիայում

նպատակ չի դրվում քրեական պատասխանատվություն սահմանել սեքսուալ բնույթի այն գործունեության համար, որն իրականացվում է սեռական հասունացման գործընթացում սեռական կյանք և միմյանց հետ սեռական կապի մեջ մտած անչափահասների կողմից: Այն կոչված չէ ընդգրկելու միևնույն տարիքի և զարգացման աստիճանի սեքսուալ բնույթի գործունեությունը: «Սեքսուալ բնույթի գործունեություն» եզրույթն ընդգրկում է սեռական շփման ձևերը՝ սեռական հարաբերությունը, սեքսուալ բնույթի գործողությունները:

2. 1-ին կետի «բ» ենթակետում քրեորեն պատժելի է համարվում երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողությունների մեջ ներգրավվելը, եթե՝

1) Գործադրվել է հարկադրանք, ուժ կամ սպառնալիք

Սա նշանակում է համապատասխան տարիքի հասած՝ սեռական ազատություն ունեցող երեխայի կողմից սեռական հարաբերության մեջ մտնելու կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար համաձայնության բացակայություն:

2) Բռնությունը կատարվել է երեխայի նկատմամբ վստահության, իշխանության կամ ազդեցության՝ ընդունված դիրքի օգտագործմամբ, այդ թվում՝ ընտանիքում

Սա նշանակում է, որ որոշակի հարաբերությունների շրջանակներում երեխան պետք է պաշտպանված լինի, նույնիսկ այն դեպքերում, երբ նա հասել է սեռական ազատության տարիքի, և սեռական բնույթի գործողություններ կատարող անձը չի կիրառում հարկադրանք, ուժ կամ սպառնալիք: Նման իրավիճակներում չարաշահվում է երեխայի մոտ ունեցած վստահությունը՝ հիմնված բնական, անձնական կամ հոգևոր հեղինակության վրա, որը թույլ է տալիս վերահսկել երեխային, պատժել կամ պարզևատրել նրան հուզականորեն, ֆինանսապես և նույնիսկ ֆիզիկապես: Այդպիսի վստահության հարաբերություն սովորաբար գոյություն ունի երեխայի և նրա ծնողների, քույրերի ու եղբայրների, որդեգրողների, ուսուցման և դաստիարակության պարտականություններ կատարող անձանց միջև:

<sup>1</sup> См. Агафонов А.В. Половые преступления.– М.: Издательство «Юрлитинформ», 2009, էջեր 123-124:

«Այդ թվում՝ ընտանիքում» արտահայտությունը նշանակում է, որ խոսքը նաև ընտանիքում սեռական բռնության դրսևորման մասին է: Գիտական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ այն երեխայի նկատմամբ առավել հաճախ հանդիպող և հոգեբանորեն գերբացասական ազդեցություն ունեցող բռնության տեսակն է, որը երկարատև հետևանքներ է առաջացնում երեխայի համար: Բացի այդ, «ընտանիք» եզրույթը տարածվում է նաև երեխայի մոտ ու հեռավոր ազգականների վրա<sup>2</sup>:

3) Բռնությունը կատարվել է՝ օգտվելով երեխայի առանձնապես խոցելի իրավիճակից՝ պայմանավորված մասնավորապես մտավոր կամ ֆիզիկական արատներով կամ կախյալ վիճակով

Կարծում ենք, որ այստեղ խոսքն այն իրավիճակների մասին է, երբ տուժողը, որոշակի հանգամանքների ուժով, մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից: Ըստ այդմ՝ խոցելի վիճակը կարելի է դասակարգել երկու տեսակի՝ ֆիզիկական և հոգեկան:

Ֆիզիկական խոցելի վիճակում տուժողը հասկանում է, որ իր հետ իր կամքին հակառակ սեռական ակտ են կատարվում, սակայն ի վիճակի չէ դրան դիմադրել: Այս վիճակին դասվում են տուժողի հոգեկան գործունեության խանգարման հետ չկապված այնպիսի հիվանդությունը, որը նրան զրկում է դիմադրելու հնարավորությունից (օրինակ՝ մասնակի անդամալուծությունը, բարձր ջերմությունը և այլն), ֆիզիկական թերությունները (խոլ և համր լինելը, կուրությունը և այլն) և այլն:

Հոգեկան խոցելի վիճակ, որպես կանոն, առկա է լինում մտավոր հետամնացության, շիզոֆրենիայի, դեմենցիաների և այլ հիվանդությունների դեպքում: Սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ տուժողի մոտ հոգեկան հիվանդության առկայությունը միշտ չէ, որ հանգեցնում է խոցելի վիճակի: Հոգեկան հիվանդության որոշ տեսակների (երկբևեռ աֆեկտիվ խանգարումներ, հիպոմանիա, ցիկլոտիմիա և այլն) առկայության դեպքում հիվանդները ոչ միայն ունակ են գիտակցելու իրենց հետ կատարվող գործողությունների բնույթը, այլև բնորոշվում են սեռականության աճով, բարոյականության շրջանակներն անցնող վարքով, ինչի արդյունքում դրդում են իրենց հետ սեռական բնույթի գործողության<sup>3</sup>: Հոգեկան խոցելի վիճակի հիմքում կարող են ընկած լինել նաև տարբեր տեսակի ժամանակավոր բնույթ կրող անգիտակից վիճակները՝ քունը, հիպնոսի վիճակը: Հոգեկան անօգնական վիճակը պայմանավորվում է նաև տուժողի մանկահասակության գործոնով<sup>4</sup>:

«Կախյալ վիճակ» ասելով պետք է հասկանալ երեխայի մոտ ալկոհոլի ու թմրամիջոցների հանդեպ հակման առկայությունը, ինչպես նաև իր կամ հանցավորի գործողությունների արդյունքում դրանք օգտագործած վիճակում գտնվելը, որից օգտվում է հանցավորը<sup>5</sup>: Բացի այդ, կարծում ենք, որ քննարկվող հասկացությունն ընդգրկում է նաև տուժողի նյութական կախվածությունը (տուժողի գտնվելը է հանցավորի լրիվ կամ մասնակի խնամառության տակ), ինչպես նաև կախվածության այլ տեսակները, որոնք բնութագրվում են ինքնուրույնության լրիվ կամ մասնակի բացակայությամբ, ուսումնական կամ այլ ենթակայության հարաբերությունների առկայությամբ:

<sup>2</sup> Տե՛ս Пояснительный комментарий к Конвенции Совета Европы о защите детей от сексуальной эксплуатации и сексуального насилия //https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e0&fbclid=IwAR0i7\_E-g6pzenzhLJ3vgs8pFIW0aCBpWYaspLtqMCU6hWMstCapAYxvC8s (վերջին մուտք՝ 07.05.2021):

<sup>3</sup> Տե՛ս Клиническая психология /Под ред. М. Пеппе, У. Бауманна.– СПб, Питер, 2002, էջ 801:

<sup>4</sup> Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 138-ի 4-րդ մասը սահմանում է. «Սույն օրենսգրքի 138-րդ և 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում (...) 12 տարին չլրացած անձը»:

<sup>5</sup> Տե՛ս Пояснительный комментарий к Конвенции Совета Европы о защите детей от сексуальной эксплуатации и сексуального насилия //https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e0&fbclid=IwAR0i7\_E-g6pzenzhLJ3vgs8pFIW0aCBpWYaspLtqMCU6hWMstCapAYxvC8s (վերջին մուտք՝ 07.05.2021):

Կոնվենցիայի 22-րդ հոդվածում քրեորեն հետապնդելի է համարվում համապատասխան տարիքին չհասած երեխային սեռական նպատակներով սեռական բնույթի բռնությանը կամ սեքսուալ բնույթի գործողություններին ականատես լինելուն դիտավորյալ դրդելը՝ նույնիսկ առանց դրանց մասնակցելու: Տվյալ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում սեքսուալ բնույթի գործունեությամբ զբաղվելու համապատասխան նվազագույն տարիքի չհասած երեխային այլ երեխաների նկատմամբ սեռական բռնություն կամ մեծահասակների սեքսուալ բնույթի գործունեություն դիտելուն դրդելու համար: Ընդ որում, երեխայի մասնակցությունը սեքսուալ բնույթի գործունեությանը պարտադիր չէ: «Դրդել» եզրույթը Կոնվենցիայում չի մեկնաբանվում: Մեր կարծիքով, այդ հասկացությունը ներառում է այն բոլոր միջոցները, որոնց գործադրման արդյունքում երեխան ականատես է դարձվում վերոհիշյալ գործողություններին, օրինակ՝ խոստում, խաբեություն և այլն:

Կոնվենցիայի 23-րդ հոդվածը նվիրված է երեխաներին սեռական նպատակներով առաջարկ անելուն (սոլիսիթինգ): Առաջարկը նշանակում է երեխային նախապատրաստել սեռական բռնության ենթարկվելուն: Ինչպես ուղակիորեն ամրագրված է նշված հոդվածում, առաջարկն արվում է չափահասի կողմից, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով երեխային հանդիպելու նպատակով՝ երեխայի նկատմամբ 18-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» կետին կամ 20-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» կետին համապատասխան սահմանված հանցագործություններից որևէ մեկի կատարման նպատակով: Ընդ որում, առաջարկին պետք է հետևեն հանդիպմանը հանգեցնող գործնական քայլեր: Նախապատրաստական գործողությունները կարող են դրսևորվել երեխայի հետ ընկերական հարաբերությունների հաստատմամբ, ինտիմ թեմաների քննարկմամբ և այլ ձևերով:

Քրեական պատասխանատվություն առաջացնելու համար վերը թվարկված բոլոր գործողությունները պետք է կատարվեն մեղքի դիտավորյալ ձևով: «Դիտավորյալ» բառի մեկնաբանությունը որոշվում է ազգային իրավունքով, սակայն դիտավորյալությամբ հանցանքի կատար-

ման պահանջն ընդհանուր է Կոնվենցիայի բոլոր կողմերի համար:

Կոնվենցիայում թվարկված մյուս հանցատեսակները, ինչպես օրինակ՝ մանկական պոռնկության և պոռնոգրաֆիայի հետ կապված արարքները, մեր կարծիքով, սեռական հանցագործություններին չեն դասվում: Հայրենական իրավական համակարգում և քրեական օրենսդրության մեջ հանցագործությունների դասակարգման հիմք է հանցավոր ոտնձգության օբյեկտը: Այս տեսանկյունից, մեր երկրում երեխայի նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների շրջանակը որոշելու հարցում անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի դրույթներով և որպես երեխային նկատմամբ կատարվող սեռական հանցագործություններ դիտարկել «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ոտնձգող հանցագործություններ» գլխով նախատեսված հանցատեսակները՝ բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ, անառակաբար գործողությունները:

Սեռական ազատությունը տասնվեց տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու, թե ում հետ և ինչ ձևով բավարարի իր սեռական պահանջմունքները:

Սեռական անձեռնմխելիությունը բարոյաիրավական արգելք է՝ սեռական շփման մեջ մտնել այնպիսի անձանց հետ, ովքեր օժտված չեն սեռական ազատությամբ, քանի որ ունակ չեն հասկանալու իրենց նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի գործողությունների նշանակությունը և հետևանքները կամ ղեկավարելու իրենց գործողությունները սեռական շփման ոլորտում:

Սեռական հանցագործությունները ոտնձգում են նաև փոքրահասակների նորմալ սեռական զարգացման ապահովման հարաբերությունների դեմ: Փոքրահասակների նորմալ սեռական զարգացումը ներառում է նրանց սե-

ռական համակարգի նորմալ ֆիզիոլոգիական զարգացումը, սեռական հարաբերությունների ոլորտում նրանց բարոյական (տվյալ հասարակության բարոյականության տեսակետից) ձևավորումը, հասարակության կողմից ստեղծված պայմանները, որոնցում տեղի է ունենում այդ զարգացումն ու ձևավորումը:

Որոշ պետությունների օրենսդիրները ընդլայնում են սեռական հանցագործությունների շրջանակը: Այսպես, Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրքը սեռական հանցագործությունների թվին դասում է նաև պոռնկությամբ զբաղվելը կազմակերպելը և (կամ) օգտագործելը կամ պոռնկությամբ զբաղվելու համար պայմաններ ստեղծելը (հոդված 171), պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը կամ պոռնկությամբ զբաղվելը շարունակելուն հարկադրելը (հոդված 171.1), Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգիրքը՝

պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (§180a), մարդկանց առևտուրը (§180b), մարդկանց առևտրի ծանր դեպքը (§181), կավատությունը (§181a), Իսպանիայի քրեական օրենսգիրքը՝ պոռնկագրական նյութեր տարածելը, վաճառելը կամ ցուցադրելը տասնվեց տարին չլրացած կամ հոգեկան շեղումներ ունեցող անձանց (հոդված 186) և այլն:

Վերը շարադրվածի հիման վրա երեխայի նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունները կարելի է բնորոշել որպես նյութական (քրեական) օրենսդրությամբ նախատեսված դիտավորությամբ կատարվող հանրորեն վտանգավոր արարքներ, որոնք ուղղված են սեռական անձեռնմխելիության, սեռական ազատության և փոքրահասակների նորմալ սեռական զարգացման պաշտպանությունն ապահովող հարաբերությունների դեմ:



**ՀԱՄԻԿ ՍՄԲԱՅԱԼ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ժամանակն ու տարածությունը կեցության այն հիմնական ձևերն են, որոնցում «ապրում է» քրեական օրենքը: Որքան ճկուն է օրենսդրական փոփոխություններ իրականացնելու մեխանիզմը, մի օրենքի փոխարինումը մյուսով, այնքան անխուսափելի կերպով արդիական են դառնում ժամանակի ընթացքում օրենքի գործողություն հետ կապված հիմնահարցերը, հետևաբար նաև օրենքի հետադարձ ուժի հետ կապված խնդիրները: Իր հետազոտության մեջ պրոֆեսոր Ա. Ա. Տիլլեն իրավամբ նշում է, որ օրենքի հետադարձ ուժի գործոնով է պատմականորեն ծագում և զարգանում ժամանակի ընթացքում օրենքի գործողության խնդիրը<sup>1</sup>:

Օրենքի հետադարձ ուժի մասին առաջին փաստաթղթային վկայություն, թերևս, կարելի է համարել մ.թ.ա. 6-րդ դարի Հին Հունաստանում հայտնի հռետոր և քաղաքական գործիչ Դեմոսթենեսի ճառը, որում վերջինս վճռականորեն հանդես էր գալիս օրենսդրական այն նախագծերի դեմ, որոնք վերաբերում էին արդեն ավարտված գործերին<sup>2</sup>:

Խնդրո առարկայի շուրջ բավական հետաքրքիր դիրքորոշում է հայտնել Հին Հռոմի կայսերական հեղինակավոր իրավաբան Տուլիոս Ցիցերոնը (մ. թ. ա. 1-ին դար), ում աշխատությունները տեսակետը հետագայում դիտվեցին որպես իրավունքի աղբյուր: Վերջինս դեմ էր հանդես գալիս քաղաքացիական օրենքներին հետադարձ ուժի տրմանը, մինչդեռ քրեական օրենքի դեպքում այն համարում էր թույլատրելի. «...և ոչ մի օրենք չի տարածվում անցյալի գործողությունների վրա, եթե միայն դրանք այնքան հանցավոր և հրեշավոր չեն, որ նրան-

ցից պետք է հնարավորինս խուսափել, եթե նույնիսկ գոյություն չունենային օրենքները<sup>3</sup>:

Առավել ուշ՝ Հռոմեական կայսրության ժամանակահատվածում, Թեոդոսիոս 1-ինը Սահմանադրությամբ ամրագրեց քրեական օրենքի անդառնալիության սկզբունքը (393թ): Այնուհետև երևան եկավ, այսպես կոչված, «թեոդոսիական նորմը» (440), որը կապվում էր Թեոդոս 2-րդ կայսեր անվան հետ: Ըստ այդմ ամրագրված էր, որ ցանկացած օրենք գործում է միայն ապագա ժամանակներում, եթե միայն օրենսդիրն ուղղակի կերպով չի մատնանշում դրան հետադարձ ուժ տալու առավելություն: Օրենսդրական այս նախատիպը հետագայում ներառվեց Հուստինիանոսի օրենսգրքում<sup>4</sup>:

Հռոմեական կայսրության անկմամբ, որն, ըստ էության, հասել էր իրավական մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև օրենքի գրավոր ձևի ստեղծմանը, կորստյան մատնվեց իրավունքի հիմնական աղբյուրի գերակա դերը: Այդ դարաշրջանում իրավական ակտերի գործողության սահմանված կանոնները, այդ թվում նաև հետադարձության վերաբերյալ, ճանաչվեցին ոչ արդիական:

Վաղ միջնադարում իրավունքի հիմնական աղբյուր հանդիսացավ ավանդույթը: Այսպես, 5-6-րդ դարերում Ֆրանկների երեք թագավորների կողմից կազմված «Սալիկ ճշմարտություն»-ը իր վերջաբանում բովանդակում է հետևյալ գաղափարը. «...գրվածքը պահպանվի անփոփոխ, ինչպես և ավելի վաղ սահմանվածը...»: Նշենք, որ նման մոտեցումն ամենևին չէր կաշկանդում նոր օրենքների կիրառումը, այդ թվում

<sup>1</sup> Տիլլե Ա. А. Тилле Время, простанство, закон М., 1965 էջ 5:  
<sup>2</sup> Տիլլե Демосфен. Речи: в 3 томах /отв. Ред. Е.С.Голубцова, Л. П. Маринович, Э. Д. Фролов, М.: Памятники исторической мысли. 1994. Т.1 էջ 242-262:  
<sup>3</sup> Տիլլե Цицерон. Полное собрание сочинений в русском переводе. Т.1, 1901. էջ 154:  
<sup>4</sup> Տիլլե А. А. Тилле Время, простанство, закон М. 1965 էջ. 5-6:

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 124 2021

նաև քրեաիրավական նորմերի, հանդեպ այն փաստերի, որոնք տեղի էին ունեցել մինչ այդ ակտերի ընդունումը<sup>5</sup>:

Ձևական իրավունքի տարածման հետ մեկտեղ ավանդույթն իր «կենսունակությունը» պահպանեց ողջ միջնադարի ընթացքում: Այսպես, Անգլիական «Ստատուտը» (1360-1361թթ) հաշտարար դատավորներին վերապահեց հետևյալը. «...լսել և որոշել թագով հարուցված բոլոր գործերը, բոլոր տեսակի քրեական հանցագործությունների և իրավախախտումների վերաբերյալ, որոնք կատարվել են կոմսությունում՝ համաձայն տվյալ կոմսության օրենքների և ավանդույթների»<sup>6</sup>: Գահ բարձրանալով՝ թագավորները երդվում էին հարգել և հետևել հնագույն ավանդույթներին:

Միջնադարյան Եվրոպայի իրավական համակարգում օրենքի անհապաղ կիրառման պահանջ կար՝ չնախատեսելով որևէ հետադարձության կանոն ժամանակի ընթացքում: Այսպես՝ Ֆրանսիայի Ֆրանցիսկոս առաջին թագավորի «Արդարադատության ուղարկման մասին» հրովարտակը (1539), ամրագրելով նյութական և դատավարական բնույթի նորմեր, հռչակում էր իր գործողությունների մասին «հավերժական ժամանակով», որում մասնավորապես ասվում էր. «Մեր և նախորդների այլ հրովարտակները, որոնք ավելի վաղ տրվել էին քրեական գործերի վերաբերյալ, պահպանում են իրենց ուժն ու նշանակությունը այն հատվածներում, որոնք չեն հակասում և չեն խախտում սույն հրովարտակով սահմանված կանոնները»<sup>7</sup>:

Կազիմիր Մեծի (14-րդ դար) լեհական ստատուտների ամբողջական հավաքածուն, որը միևնույն ժամանակ հանդիսանում է որպես քրեական օրենքի նյութական աղբյուր, բովանդակում է հետևյալը. «...Քանի որ բոլոր վճիռները և ստատուտները նախատեսում են ապագա գործերը, այլ ոչ թե անցյալ, ապա մենք

ցանկանում ենք, որ մեր բոլոր Վճիռները... վերաբերեն ոչ թե անցյալին, այլ միայն ներկա և ապագա գործերին»<sup>8</sup>: Այս ժամանակահատվածում իրավական ակտերին հետադարձ ուժ տալը փաստացի կախված էր գերագույն իշխանության կամքից. նրանից բխող հրամանների պարտադիր լինելը և դրանց տարածումը «հավերժական ժամանակների» վրա անվիճելի էր, և ինքն իրենով ընկալվում էր որպես իրավական ավանդույթ:

Միջնադարյան ժամանակաշրջանի համար բնութագրական էր նաև այն, որ իրավաստեղծ ոլորտում մարդու ընկալումը հասարակության մեջ հավասարազոր էր ոչ թե ինքնարժեք անձի, այլ որպես հլու հպատակի, ով պարտավոր է աներկբա կերպով ենթարկվել պետության և եկեղեցու կամքին, ով զուրկ է որևէ իրավունքից, առավել ևս՝ իր նկատմամբ որոշակի օրենք կիրառելու պահանջից: Ասել է, թե քրեական օրենքի հնարավոր պատժիչ ազդեցությունից, որը կիրառվել է հետադարձության ուժով, միջնադարյան պետություններում ոչ ոք ապահովագրված չէր, ինչպիսին էլ որ լինեին նրա սոցիալական կարգավիճակը<sup>9</sup>:

Խնդրի համանման մոտեցում արտացոլված է նաև միջնադարյան Ռուսաստանում: Մինչ 16-րդ դարը օրենսդրական ամրագրում չունեին այն մոտեցումը, որ իրավական ակտերը գործում են ապագայում և ենթակա էին կիրառման դրանցով նախատեսվող բոլոր փաստերի նկատմամբ: Այստեղից հետևում էր, որ իրավական ակտերին հետադարձ ուժի տրման ուղիղ հնարավորությունն ակնհայտ է և բխում է իշխանության կամքից: 1550 թվականի «Դատաստանագիրը» (դատական գիրքը), ձևականորեն սահմանում էր օրենքի՝ ժամանակի մեջ գործողության հիմնական սկզբունքը՝ օրենքը հետադարձ ուժ չունի: Այս դիրքորոշումն իր շարունակությունը գտավ Ֆեոդոր Իվան թագավորի «Դատաստանագրքում» (1589), ապա

<sup>5</sup> Sfn Хрестоматия по Всеобщей истории государства и права. В 2-х томах /Под ред. К.И.Батыра, Е.В. Поликарповой. Т.1. М.: Юристь., 1996. էջ 258:

<sup>6</sup> Sfn Из статута, изданного в парламенте, заседавшем в Вестминстере в 34 году правленич Эдуарда 3 /Указ. Хрестоматия Т. 1. էջ 380:

<sup>7</sup> Sfn Хрестоматия по истории государства и права зарубежных стран Древность и средние века (составитель д.ю.н., проф. В.А.Тосминов, М. Зерцало) 2000 էջ 258, 259:

<sup>8</sup> Sfn Указ. Хрестоматия էջ 369:

<sup>9</sup> Sfn Шаргородский М.Д. Обратное действие уголовного закона М. էջ 220:

նաև եկեղեցու օրենսդրությունում (1649թ.): Չնայած այն հանգամանքին, որ օրենքի հետադարձության սկզբունքն օրենսդրորեն ամրագրվեց, բայց այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկար դրա բացարձակ կիրառում, մասնավորապես՝ 1637 թվականին հանցագործներին խարանելու վերաբերյալ հրամանը, որով ներմուծվեց բոլորովին նոր մի պատժատեսակ, որը նախկինում երբևէ չէր կիրառվել, փաստացի ունեցավ հետադարձ ուժ արդեն հանցանք կատարած անձանց նկատմամբ:

17-18-րդ դարերում եվրոպական բուրժուական ժողովրդավարական հեղափոխությունները թևակոխեցին պատմական նոր ժամանակաշրջան: Հասարակության հրամայականը դարձավ բարեփոխումներ իրականացնել ոչ միայն տնտեսական, կրթական, այլ նաև դատական ոլորտներում: Այդուհետ օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ հիմնահարցը դարձավ առաջնային, միևնույն ժամանակ նաև անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտ և անքակտելի երաշխիքներից մեկը:

17-րդ դարակեսին հեղափոխական Անգլիայի ակտիվ հրապարակախոս Ջոն Լիլբերնը իր «Անգլիայի բնածին իրավունքի պաշտպանությունը» պամֆլետում պահանջում էր արգելել օրենքների կիրառումն այն փաստերի նկատմամբ, որոնք նախորդել են դրա հրապարակմանը. «Ոչ մի ազատ մարդուց չի կարելի պահանջել, որպեսզի նա իմանա օրենքներն ավելի վաղ, քան դրանք կիրապարակվեն: ...Եթե օրենքը հրապարակված չէ, ապա չկա նաև դրա խախտում»<sup>10</sup>: Ավելի ուշ իր դիրքորոշումն այդ կապակցությամբ Լիլբերնը հայտնում է որոշակի օրենսդրական առաջարկների տեսքով<sup>11</sup>:

Համանման առաջարկներով է հանդես եկել նաև Ջոն Լոկը. «Պետության կառավարման անհրաժեշտությունը միայն ժողովրդին հայտնի օրենքների միջոցով՝ առանց դրան հե-

տադարձ ուժի տրման իրավունքի»<sup>12</sup>: Չնայած այդ հիմնավորումների՝ հեղափոխական Անգլիայում օրենսդրական ամրագրումներ օրենքի՝ ժամանակի մեջ գործողության և դրա հետադարձության վերաբերյալ այդպես էլ չհաջողեցին:

Օրենքի հետադարձ ուժի սկզբունքային արգելքի զարգացող գաղափարն ընդունեց ԱՄՆ-ն: 1787 թվականին առաջինը մարդկության պատմության մեջ ընդունելով գրված Սահմանադրություն, ԱՄՆ-ում հռչակվեց դաշնային օրենսդրական սկզբունք. «Օպալի մասին ոչ մի բիլ կամ օրենք, որն ունի հետադարձ ուժ, չպետք է կիրառվի»<sup>13</sup>: Այս գաղափարն իր տարածումը գտավ մյուս նահանգների օրինաստեղծ գործընթացում:

1789 թվականին համանման նորմեր հայտնվեցին նաև Եվրոպայի մի շարք երկրների Սահմանադրություններում: Ուշագրավ է օրենքի հետադարձ ուժի տրման առավել կատեգորիկ արգելքը, որը առաջարկում էր Յակոբինների (1793 թ.) Սահմանադրությունը. «Օրենքը, որը պատժում է հանցագործության համար, որը կատարվել է մինչև դրա տպագրումը, տիրանական օրենք է: Այդպիսի օրենքին հետադարձ ուժ տալն ինքնին հանցագործություն է»<sup>14</sup>: 1804 թվականի Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրված էր. «Օրենքը սահմանում է կանոններ միայն ապագա ժամանակի համար, այն չունի հետադարձ ուժ»<sup>15</sup>: Ավելի ուշ՝ 1810 թվականին, նկատում ենք նույն գաղափարը Ֆրանսիայի քրեական օրենսգրքում. «Ոչ մի խախտում, ոչ մի արարք, ոչ մի հանցագործություն չի կարող պատժվել պատժով, որը սահմանված չէր մինչև դրանց կատարումը»<sup>16</sup>: Սրանով իսկ Ֆրանսիան օրենսդրական արգելք դրեց հետադարձ ուժ տալն այն օրենքներին, որոնք պատասխանատվություն էին սահմանում կամ խստացնում էին արարքի պատժելիությունը:

<sup>10</sup> Տե՛ս Джон Лильберн Памфлеты М 1937 էջ 37:

<sup>11</sup> Տե՛ս Джон Лильберн Памфлеты М. էջ 114:

<sup>12</sup> Տե՛ս Дж Локк Указ. Соч. էջ 55, 74-76:

<sup>13</sup> Տե՛ս Соединенные Штаты Америки: конституция и законодательные акты: Пер. с англ. / Сост. В.И. Лафитский, под ред О.А.Жидкова М. Прогресс, Универс, 1993. էջ 34:

<sup>14</sup> Տե՛ս Хрестоматия по истории государства и права зарубежных стран /Новое и новейшее время/ сост-ль д.ю.н. проф. Н.А.Крашенинникова М. Изд-во Зерцало 1999 էջ 89:

<sup>15</sup> Տե՛ս Хрестоматия по всеобщей и истории государства и пража. Т 2 էջ 171:

<sup>16</sup> Տե՛ս Хрестоматия по всеобщей и истории государства и пража. Т 2 էջ 251:

Նույն ժամանակահատվածում էլ առաջ են գալիս նոր գաղափարներ կապված մեղմ օրենքների հետադարձ ուժ տալու խնդրի հետ: Այդ իմաստով Ֆրանսիայի օրենքներում որևէ ամրագրում չկար, բայց աստիճանաբար մեղմացնող օրենքներին հետադարձ ուժով օժտելու մոտեցումը զարգացավ վճռաբեկ պրակտիկայով, այն է՝ օրենքները, որոնք մեղմացնում են պատասխանատվությունը, միշտ ստանում են հետադարձ ուժ<sup>17</sup>:

Ֆրանսիական մոտեցման սույն նորույթը հետագայում իր արտացոլումն ունեցավ մի շարք երկրների իրավական համակարգերում, մասնավորապես՝ Հոլանդիայում, Բելգիայում, Հունգարիայում, Իտալիայում, առանձին նորմեր սահմանվեցին, որոնք հետադարձ ուժ էին հաղորդում հատկապես մեղմացնող պատիժներ սահմանող օրենքներին:

Ռուսաստանի իրավաստեղծ պրակտիկայում 1817 թվականին կայսերական որոշմամբ հաստատվեց և հետայդու առաջին անգամ նորմատիվորեն ընդունվեց «Ոչ մի օրենք հետադարձ ուժ չունի» դրույթը<sup>18</sup>: Ավելի ուշ՝ 1845 թվականին, «Քրեական և ուղղիչ պատիժների մասին հրահանգը» ներառում էր նորմ, որը կարգավորում էր դրա գործողությունը ժամանակի ընթացքում: Այն ուժի մեջ մտավ 1846 թվականին և կիրառելի էր այն գործերի նկատմամբ, որոնք մինչ այդ պահը չէին ստացել վերջնական լուծում, բացառությամբ այն դեպքերի, երբ «Հրահանգով» որոշվող պատիժն ավելի խիստ էր մինչ այդ գործող օրենքներով նշանակվածից: Նման դեպքերում դատապարտյալների վերաբերյալ տարածվում էր այն օրենքը, որը գործել էր իր կողմից հանցագործության կատարման ժամանակ<sup>19</sup>: Ընդհանուր առմամբ «Հրահանգն» անդրադառնում էր այն հարցին, որ կիրառման միշտ ենթակա էր նոր օրենքը, սակայն օրենքին, որը սահմանում էր պատասխանատվություն կամ պատժի խստացում, հետադարձ ուժ չէր տրվում: Նման դեպքերում գործողության էր ենթակա հին՝ հանցագործության կատարման ժամանակ գործող օրենքը:

Այսպիսով, ամփոփելով քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ իրավական կարգավորումների էվոլյուցիան, հանգում ենք հետևյալին՝

- Քրեական օրենքի հետադարձ ուժի մասին առաջին փաստաթղթային վկայությունը տրվել է մ.թ.ա. 6-րդ դարում, Հին Հունաստանում, առավել ուշ քրեական օրենքի հետադարձության վերաբերյալ գաղափարը տարածվել է Հռոմեական կայսրությունում:
- Նշված ժամանակահատվածում ընդունված նոր օրենքները կիրառվել են հետադարձ ուժով, ինչն էլ քննադատվել է ժամանակի մտածողների կողմից, քանի որ նոր օրենքները տարածվել են նաև մինչ դրա ընդունումը հանցանք կատարած անձանց վրա, որոնք ընդհուպ նախատեսում էին առավել խիստ պատիժներ:
- Վաղ միջնադարում քրեական օրենքի հետադարձության վերաբերյալ հիշատակություններ և վկայություններ չկան, և այդ ժամանակահատվածում այդ խնդիրը դիտվել է որպես ոչ արդիական:
- Քրեական օրենքի վերաբերյալ իրավական մոտեցումները կրկին գլուխ են բարձրացրել 5-6-րդ դարերում:
- Միջնադարյան տարբեր երկրներում՝ Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն, օրենսդրորեն արգելք է դրվել քրեական օրենքի հետադարձությանը, քանի որ նոր օրենքները կիրառելի էին համարվում ընդհուպ այն դեպքերում, երբ նախատեսում էին առավել խիստ պատիժներ, որոնք տարածվում էին մինչ այդ օրենքի ընդունումը հանցանք կատարած անձանց վրա: Այս ժամանակահատվածի համար հատկանշականն այն էր, որ իրավական ակտին հետադարձ ուժ տալը կախված էր գերագույն իշխանության կամքից:
- Քրեական օրենքի հետադարձ ուժն իրենից ներկայացնում է պահանջների ամբողջություն, որոնք ներկայացվում

<sup>17</sup> Տե՛ս Н.С.Таганцев Русское уголовное права Часть общая Т 1 Тула: Автограф 2001 էջ 238:

<sup>18</sup> Տե՛ս А.Д.Градовский Собрание Сочинений Т 7 Начала русского государственного права Часть 1. 1901 էջ 100:

<sup>19</sup> Տե՛ս Н.С.Таганцев Русское уголовное права Часть общая Т 1 Тула: Автограф 2001 էջ 238:



էին հասարակության կողմից պետությանը՝ մարդու և քաղաքացու բնական իրավունքների ու ազատության ապահովման իրավամշակութային և իրավակիրառ գործունեության հիմքում:

- 17-18-րդ դարերում բուրժուական հեղափոխությունից հետո նոր թափ է ստացել քրեական օրենքի հետադարձ ուժի հետ կապված հիմնահարցերի քննարկումը՝ մի շարք երկրներում արգելվել է կիրառել քրեական օրենքի հետադարձության կանոնը:

- Առաջին անգամ Ֆրանսիայում 1810 թվականից հետո ի հայտ եկավ նոր՝ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու գաղափարը, որն իր տարածումը գտավ այլ երկրներում ևս՝ Իտալիա, Բելգիա, հոլանդիա և այլն:
- Քրեական օրենքի հետադարձ ուժի զարգացման պատմությունը ցույց է տալիս նրա անմիջական կապը անձի իրավունքների ապահովման ոլորտում պետության դիրքորոշման հետ:



**ՈՌԲԵՐՏ ՄՇԵՐՅԱՆ**

Արդարադատության ակադեմիայի ունկնդիր, դատախազի թեկնածու  
Իրավագիտության մագիստրոս

**ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԽՈՒՉԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 31-րդ գլխով կարգավորված են խուզարկության (ինչպես նաև՝ առգրավման) կատարման քրեադատավարական կառուցակարգերը<sup>1</sup>: Գործի համար նշանակություն ունեցող առարկաների, փաստաթղթերի որոնմանը (գտնելուն) և վերցնելուն ուղղված քրեադատավարական այս «գործիքը» դասվում է այն քննչական գործողությունների շարքին, որոնք էականորեն սահմանափակում են անձի իրավունքներն՝ ընդհանրապես, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ մասնավորապես: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ներպետական օրենսդրությամբ միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ նախատեսված են դրա օրինականության և արդարացիության ապահովմանն ուղղված մի շարք կարգավորումներ, որոնք իրենց հերթին անձանց իրավունքների ապահովման երաշխիքներ են: Օրենսդիրը, բնակարանի խուզարկությունը դասելով նախնական դատական վերահսկողության օբյեկտների շարքին, հստակ սահմանել է ինչպես դրա կատարման թույլտվություն տալու, այնպես էլ այն իրականացնելու ընթացակարգին առաջադրվող մի շարք պահանջներ:

Նախքան խուզարկության կատարման հիմնական պահանջներին անդրադառնալը, հարկ է քննարկման առարկա դարձնել «խուզարկություն կատարել» եզրույթը: Մասնագիտական գրականությունում առկա գերիշխող տեսակետի համաձայն՝ խուզարկության կատարման սկիզբ է համարվում ոչ թե խուզարկություն կատարելու

մասին որոշում ընդունելը, այլ առաջին որոնողական գործողություններն սկսելը, որոնք ուղղված են առարկաների, անձի հայտնաբերմանը<sup>2</sup>: Հատկանշական է, որ Օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերի բովանդակության վերլուծությունից ևս բխում է, որ «խուզարկություն կատարել» հասկացության մեջ չեն մտնում՝

- քննիչի կողմից խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշումը ներկայացնելը,
- վերցման ենթակա առարկաները (որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար) կամավոր հանձնելու առաջարկը,
- վերը նշված առաջարկից հետո այդ առարկաները հանձնելը<sup>3</sup>:

Բուն խուզարկության կատարման մեկնարկից առաջ քննիչը պարտավոր է անձին, ում մոտ կատարվում է խուզարկությունը, ծանոթացնել խուզարկություն կատարելու մասին որոշմանը, դրա կապակցությամբ վերջինիցս վերցնել ստորագրություն: Որոշման ներկայացումը և հրապարակումը կարևորվում է ոչ միայն հատկապես անձի՝ իր բնակարանի անձեռնմխելիության, անձնական կյանքի միջամտության իրավաչափությանը՝ փաստական և իրավական հիմքերին ծանոթանալու առումով, այլ նաև իր՝ քրեադատավարական օրենսդրությամբ ապահովված իրավունքի՝ նախնական դատական վերահսկողության կարգով բնակարանում խուզարկություն կատարելու մասին քննիչի միջնորդությունը բա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021

<sup>1</sup> Սույն աշխատանքի շրջանակներում անդրադառնում ենք գլխավորապես բնակարանի խուզարկության քրեադատավարական հիմնախնդիրներին:  
<sup>2</sup> **Рыжиков А. П.** Обыск: основания и порядок производства. Изд-во “Феникс”, Ростов-на-Дону, 2006, էջ 19:  
<sup>3</sup> **Ենգիբարյան Վ.**: «Խուզարկության կատարման քրեադատավարական և տակտիկական հիմնական պայմանները»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան.- Եր., ԵՊՀ, 2017, էջ 446:

վարարելու մասին դատարանի որոշման բողոքարկման իրավաբանական հիմքի ծագման փաստի առումով. օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում է առաջին աստիճանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ *հրապարակվելու պահից* տասնօրյա ժամկետում: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, Տիգրան Հովհաննիսյանի գործով որոշման համաձայն՝ Օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը<sup>4</sup>: Նշված դիրքորոշումն իր զարգացումն է ապրել Վահե Գրիգորյանի գործով որոշմամբ, ըստ որի. «(...) Տ. Հովհաննիսյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը [կ]իրառելի է նաև մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման նկատմամբ: Այսինքն մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու անձի իրավունքը ծագում է այն պահին, երբ նրան փաստացի հասու է դառնում նշված դատական ակտը:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատարանը հաստատված կհամարի, որ անձն անբարեխղճորեն է օգտվել քրեական գործի նյութերին, այդ թվում՝ վիճարկվող դատական ակտին ծանոթանալու իր իրավունքից, ապա իրավասու է ըստ էու-

թյան չքննարկել ներկայացված բողոքը և այն թողնել առանց քննության: Մինչդեռ այն դեպքերում, երբ կհաստատվի, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի առաջացման և այդ իրավունքի փաստացի իրացման միջև առկա ժամանակային խզումը պայմանավորված է օբյեկտիվ (հարգելի) պատճառներով, և բողոքը ներկայացվել է ակտը ստանալու պահից սահմանված ժամկետում, դատարանը պարտավոր է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ստուգման ենթարկել վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է հրապարակվել նշված դատական ակտը<sup>5</sup>»:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մոտեցումները՝ բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ դատական ակտի վերաքննիչ բողոքարկման առումով արտահայտվել են նաև «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործով որոշմամբ, ըստ որի, քննարկվող ակտի վերաքննիչ բողոքարկման համար նախատեսված ժամկետի հաշվարկի հիմքում դրված իրավաբանական փաստը դատական ակտի հրապարակման պահն է: Հետևաբար, առաջին աստիճանի դատարանի՝ խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ որոշման բողոքարկման՝ օրենքով նախատեսված ժամկետն սկսում է հոսել այդ որոշման մասին շահագրգիռ կողմին պաշտոնապես ծանուցելու, այն է՝ խուզարկությունն սկսելու պահից<sup>6</sup>:

Ամփոփելով բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ դատական ակտի վերաքննիչ բողոքարկման վերաբերյալ նախադեպային իրավունքում առկա մոտեցումները, կարող ենք եզրահանգել, որ Վճռաբեկ դատարանի մոտեցումներն ուղիղ կերպով կոչվել են ապահովելու անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, թույլ չտալու և նվազագույնի հասցնելու դատական պաշտպանության իրավունքի ցանկացած անհամաչափ սահմանափակման վտանգ:

<sup>4</sup> Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշում, 23-րդ կետ:

<sup>5</sup> Վահե Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ Ս-930/05 որոշում, 15-16, 20 կետեր:

<sup>6</sup> «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/1133/07/11 որոշում, 16-րդ կետ:

Խուզարկություն կատարելիս որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո քննիչն առաջարկում է հանձնել որոնվող առարկաները և փաստաթղթերը կամ թաքնված անձին: Եթե դրանք կամովին հանձնվում են, ապա այդ մասին նշվում է խուզարկության արձանագրության մեջ: Հակառակ դեպքում, եթե որոնվող առարկաները, փաստաթղթերը կամ թաքնված անձին կամովին չեն հանձնում կամ էլ հանձնում են ոչ ամբողջովին, ապա կատարվում է խուզարկություն: Այս պարագայում քննիչը որևէ կերպ սահմանափակված չէ անձի հանձնածով և միաժամանակ այն պնդմամբ, թե իբրև խուզարկության առարկան ամբողջապես հանձնվել է. եթե փաստացի որոնվողն ամբողջությամբ չի հանձնվել (օրինակ՝ որոնվում է 2 ատրճանակ և 1 նոնակ, սակայն փաստացի դրանցից հանձնվել են մեկական), ապա քննիչն ազատ է սկսելու որոնողական գործողությունները:

Անդրադառնալով խուզարկություն կատարելու թույլտվություն տալու փուլին առաջադրվող հիմնական պահանջներին՝ դրա կատարման փաստական և իրավական հիմքերին, նշենք, որ վերջիններիս հիմքում ունենալով Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ որպես փաստական հիմքի սահմանման աղբյուր, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասը՝ որպես իրավական հիմքի սահմանման աղբյուր՝ դրանք սահմանել և մանրամասն քննարկման առարկա է դարձրել Վճռաբեկ դատարանը Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի վերաբերյալ գործով: Մասնավորապես, անդրադառնալով բնակարանի խուզարկության կատարման փաստական և իրավական հիմքերին Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Բնակարանի խուզարկության կատարման փաստական հիմքն այն բավարար տվյալներն են, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ:

(...) Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ այս

փուլում տվյալի գնահատման չափանիշներին ներկայացվում են ավելի ցածր պահանջներ, քան անձի մեղավորության հարցի գնահատման ժամանակ ապացույցների գնահատմանը:

(...) Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին՝ անհրաժեշտ է նշել, որ (...) [բ]ոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք: (...) [Ա]յն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել:

(...) [Խ]ուզարկության կատարման փաստական հիմք են «բավարար տվյալները»: Այլ խոսքով՝ տվյալների առկայությունն ինքնին խուզարկության կատարման փաստական հիմք չէ, քանի դեռ չի համապատասխանում բավարարության վերաբերյալ պահանջին:

(...) [Խ]ուզարկության կատարման իրավական հիմքը խուզարկություն կատարելը թույլատրելու մասին դատարանի որոշումն է: Ընդ որում, դատարանի որոշման համար առիթ է հանդիսանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին նախաքննական մարմնի որոշումը:

(...) [Ո]րպես բնակարանի նույնականացման տվյալ պետք է նշվի դրա տեսակը (<< քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետ), գտնվելու վայրը՝ հասցեն, ինչպես նաև՝ ում է պատկանում կամ ում կողմից է մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում (սուբյեկտը, ում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը ենթակա է սահմանափակման): Դատարանին նշված տվյալների տրամադրումը և վերջինիս կողմից դրանց ստուգումը և դատական ակտում արտացոլումը երաշխիք է անձի՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով

նախատեսված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար<sup>7</sup>»:

Վճռաբեկ դատարանի վերը մեջբերված նախադեպային որոշումը միտված էր որոշակի պարզություն մտցնել մինչ այդ գործող պրակտիկայի ոչ միատեսակ մոտեցումների հարցում՝ կապված խուզարկության հիմք հանդիսացող փաստակազմի, այդ թվում օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալների օգտագործման առումով, ապահովել օրենքի միատեսակ կիրառումը գործնականորեն: Պետք է փաստել, որ բնակարանի խուզարկության հիմնավորվածության գնահատումը պահանջում է մեծածավալ և տարաբնույթ (այդ թվում՝ հավանական բնույթ կրող) տեղեկատվության, ինչպես նաև քննչական իրադրության մանրագնին վերլուծություն և կշռադատված գնահատում՝ բացառելով ինտուիտիվ գնահատականները, համակրանքի և հակակրանքի հիման վրա որոշումներ կայացնելու պրակտիկան<sup>8</sup>:

Այնուամենայնիվ, հարկ է ուշադրության արժանացնել վերջին տարիների՝ մասնավորապես 2016-2020 թվականների՝ խուզարկությունների վերաբերյալ վիճակագրությունը, ըստ որի, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ ներկայացվել են համապատասխանաբար 4247, 4478, 5201, 5303, 5657 բնակարանի խուզարկության միջնորդություններ, որոնցից բավարարվել են համապատասխանաբար 3927-ը, 4274-ը, 4832-ը, 4856-ը և 5088-ը<sup>9</sup>, այսինքն, ընդհանուր առմամբ մոտ 92%-ը: Նշված թվերը խոսուն ապացույցն են դատական վերահսկողության անարդյունավետության, դրանից հետևող՝ անձի իրավունքների անհիմն սահմանափակումների, ընդ որում, նկատելի է նաև տարիների առումով ներկայացվող միջնորդությունների քանակի աճը:

Ներկայացվածը համակցության մեջ վերցրած հիմք է տալիս գալ այն համոզման, որ

բնակարանի խուզարկության նկատմամբ դատական վերահսկողությունը փաստացի կորցրել է իր՝ դատական վարույթի դերը՝ որպես նախաքննական մարմնի միջնորդության հիմքում դրված փաստական հիմքի, միջնորդության հիմնավորվածության և օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, դարձել այսպես ասած «թույլտվության» ընթացակարգ, և անաչառ դիտորդի մոտ կարող է ստեղծել ողջամիտ տպավորություն առ այն, որ դատարանն այս հարցում ունի առավելապես մեղադրական թեքում:

Քննարկման համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև «բնակարան» հասկացության քրեադատավարական բնորոշման հիմնախնդիրներին: Օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետով տրված բնակարան հասկացությունը թեև բավականին ընդգրկուն է, այնուամենայնիվ պրակտիկայում դրա ընկալման և կիրառման հետ կապված առաջանում են խնդիրներ: Նշված խնդիրների լուծմանն է ուղղված Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները բնակարանում խուզարկություն կատարելու համատեքստում, որոնց կանդիդատներն են ստորև:

Համաձայն Եվրոպական դատարանի մոտեցումների՝ բնակարանն ինքնուրույն հասկացություն է, որը կախված չէ ներպետական իրավունքում տրված դրա դասակարգումներից<sup>10</sup>: Որոշելու համար, թե արդյո՞ք որևէ բնակելի տարածք «բնակարան» է համարվում և ենթակա է պաշտպանության Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին մասով, կախված է այնպիսի փաստական հանգամանքներից, ինչպիսիք են՝ որոշակի վայրի հետ բավարար և շարունակական կապերի գոյությունը<sup>11</sup>: Եվրոպական

<sup>7</sup> Մեպուի Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշում, 22-24 կետեր:

<sup>8</sup> **Մարաբյան Ս.**: «Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման որոշ հարցեր բնակարանում խուզարկություն կատարելիս»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. –Եր., ԵՊՀ, 2016, էջ 383

<sup>9</sup> <https://court.am/hy/statistic>

<sup>10</sup> Chiragov and others v. Armenia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13216/05, կետ 206

<sup>11</sup> Prokopovich v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 58255/00, կետ 36:

կոնվենցիայի 8-րդ հոդվածի անգլերեն տարբերակում առկա «home» բառը չունի նեղ մեկնաբանություն, քանի որ ֆրանսերեն համարժեք «domicile» բառն ունի ավելի լայն երանգավորում<sup>12</sup>: Ուստի, «բնակարանը» պետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի մասնավոր անհատի կողմից գործարկվող ընկերության գրանցված գրասենյակը և իրավաբանական անձի գրանցված գրասենյակը, մասնաճյուղերը և այլ առևտրային տարածքներ<sup>13</sup>: «Բնակարանը» տարածվում է նաև անձի մասնագիտական գործունեության այնպիսի գրասենյակների վրա, ինչպիսիք են՝ օրինակ՝ թերթի խմբագրության տարածքը<sup>14</sup>, նոտարական գրասենյակի տարածքը<sup>15</sup> կամ դասախոսի գրասենյակը<sup>16</sup>:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով իրականացվող միջամտությունը պետք է լինի «օրենքով նախատեսված», ինչն ընդգրկում է օրինական ընթացակարգի<sup>17</sup> և սահմանված երաշխիքների պահպանում<sup>18</sup>: Միջամտությունը նաև պետք է հետապնդի Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված օրինական նպատակներից մեկը<sup>19</sup> և լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում<sup>20</sup>:

Խուզարկության մասին որոշումները, որքանով հնարավոր է, պետք է լինեն ձևակերպված այն հաշվարկով, որպեսզի դրանց ազդեցությունը տարածվի ողջամիտ սահմաններում:

Բացի այդ, խուզարկության վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է պարունակի որոշակի նվազագույն տեղեկություններ, որոնք կապահովեն խուզարկություն կատարող անձանց գործողությունների օրինականության հետագա ստուգման հնարավորությունը<sup>21</sup>:

Վերլուծելով և մեջբերելով Եվրոպական դատարանի վերը մեջբերված իրավական դիրքորոշումները բնակարան հասկացության վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը թիվ ՇԴ/0525/07/18 գործով քննարկան և վերլուծության առարկա է դարձրել դրանք՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային բաժանմունքի տարածքը քրեադատավարական առումով բնակարան դիտարկելու համատեքստում: Տվյալ գործով ստորադաս դատարանները մերժել էին քննիչի միջնորդությունը Գյումրու 3115 փոստային բաժանմունքում խուզարկություն կատարելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ փոստային ամբողջ բաժանմունքը (բաժանմունքի տարածքը) Օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի իմաստով չի հանդիսանում բնակարան, ուստի նշված տարածքում խուզարկություն կատարելու թույլատրելիության հարցի քննարկումը դատարանների իրավասության մեջ չի մտնում:

Վճռաբեկ դատարանը համաձայնել է ստորադաս դատարանների այդ դիրքորոշման հետ, միևնույն ժամանակ ընդգծելով, որ փոստային բաժանմունքի տարածքում խուզարկություն կա-

<sup>12</sup> Niemietz v. Germany գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 30:

<sup>13</sup> Եվրոպական դատարանի՝ Buck v. Germany գործով 2005 թվականի ապրիլի 28-ի վճիռը, գանգատ թիվ 41604/98, կետ 31, Socit Colas Est and Others v. France գործով 2002 թվականի ապրիլի 16-ի վճիռը, գանգատ թիվ 37971/97, կետեր 40-41, Niemietz v. Germany գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 30:

<sup>14</sup> Saint-Paul Luxembourg S.A. v. Luxembourg գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 18-ի վճիռը, գանգատ թիվ 26419/10, կետեր 37-39:

<sup>15</sup> Popovi c. Bulgarie գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 39651/11, կետ 103:

<sup>16</sup> Steeg v. Germany գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2008 թվականի հունիսի 3-ի որոշումը, գանգատներ թիվ 9676/05 10744/05 41349/06:

<sup>17</sup> L.M. c. Italie գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 60033/00, կետեր 29 և 31:

<sup>18</sup> Panteleyenko v. Ukraine գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2006 թվականի հունիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 11901/02, կետեր 50-51:

<sup>19</sup> Smirnov v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 40:

<sup>20</sup> Camenzind v. Switzerland գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1997 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատներ թիվ 136/1996/755/954, կետ 47:

<sup>21</sup> Van Rossem v. Belgium գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41872/98, կետ 45, Iliya Stefanov v. Bulgaria գործով 2008 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 65755/01, կետ 41:

տարելու հարցը չի կարող առհասարակ դուրս լինել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտից: Մասնավորապես, փոստային բաժանմունքը, ընդհանուր տարածքներից բացի, կարող է ներառել, և կոնկրետ դեպքում ներառում է աշխատանքի համար հատկացված տարածքներ, որոնք կարող են դիտարկվել իբրև բնակարան՝ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի իմաստով: Ուստի, գործով հետաքրքրություն ներկայացնող տվյալների որոնման նպատակով փոստային բաժանմունքում կամ համանման՝ *անձնական կյանքի անձեռնմխելիության երաշխիքով պաշտպանված մի շարք տարածքների համալիր ընդգրկող այլ շինությունում* խուզարկություն կատարելու միջնորդություն ներկայացնելիս՝ քննիչը պետք է միջնորդությամբ նախանշի միջամտության ենթարկվող տարածքի սահմանները, ինչպես նաև հստակեցնի, թե կոնկրետ ում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ է իրականացվում միջամտությունը, այլապես, անձանց և տարածքների չորոշակիացման պայմաններում դատարանի կողմից քննիչի միջնորդության բավարարումը կհանգեցնի ինչպես դատական վերահսկողության սահմանների, այնպես էլ միջամտության համաչափության պահանջի խախտմանը:

Մեջբերված գործով Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել նաև Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Օրենսգրքի 6-րդ կետի 46-րդ կետում որպես բնակարանի տարատեսակ ներկայացվող «ծառայողական անձնական աշխատասենյակ» հասկացության վերաբերյալ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել էր, որ «(...) [S]վյալ ձևակերպումից պարզ է դառնում, որ «բնակարան» համարվելու համար *աշխատասենյակը միաժամանակ պետք է լինի ծառայողական և անձնական*: Ընդ որում՝ բնակարան է համարվում միայն այն աշխատասենյակը, որն անձին հատկացվել է ծառայության բերումով, այլ ոչ թե ուղղակի որոշակի աշխատանք կատարելու համար, իսկ անձնական է համարվում միայն այն աշխատասենյակը, որը հատկացվել է միայն տվյալ անձին, որտեղ անձը կարող է կազմակերպել իր հան-

գիստը, պահել իր անձնական իրերը և այլն: Այլ խոսքով՝ անձնական է համարվում ոչ թե այն տարածքը որտեղ անձն ուղղակի աշխատում է, այլ այն աշխատասենյակը, որտեղ խուզարկություն կատարելով՝ կարող է վտանգվել անձի անձնական կյանքը: Հակառակ դեպքում՝ օրենսդիրը կսահմաներ ոչ թե «ծառայողական անձնական աշխատասենյակ» եզրույթը, այլ օրինակ՝ ուղղակի «աշխատասենյակ» կամ «ծառայողական աշխատասենյակ» ձևակերպումները»:

Վճռաբեկ դատարանը, ըստ էության ընդունելի համարելով Վերաքննիչ դատարանի՝ մեջբերված դիրքորոշումները, Եվրոպական դատարանի՝ արդեն իսկ ներկայացված նախադեպային իրավունքի հաշվառմամբ, հարկ է համարել նկատել, որ որոշակի տարածք մշտապես կամ ժամանակավորապես զբաղեցնելը բնակարանի անձեռնմխելիության երաշխիք տրամադրելու հանգամանքը կանխորոշող հիմնական պայման չէ: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, խուզարկություն կատարելու թույլտվություն տրամադրելիս այս կամ այն տարածքը որպես բնակարան դիտարկելու հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել ոչ թե կոնկրետ անձին այն հատկացված լինելու, այլ փաստացի այդ տարածքը զբաղեցնելու, դրա հետ որոշակի կապեր ունենալու հանգամանքները, որոնց ուժով անձը կարող է ունենալ անձեռնմխելիության երաշխիքների լեգիտիմ ակնկալիք<sup>22</sup>:

Կարող ենք արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի վերը մեջբերված իրավական դիրքորոշումները մեծարժեք իրավական նշանակություն ունեն՝ անձնական կյանքի անձեռնմխելիության երաշխիքով պաշտպանված մի շարք տարածքների *համալիր ընդգրկող այլ շինությունում* խուզարկություն կատարելու քննիչի միջնորդությամբ անձանց և տարածքների որոշակիացման, աշխատասենյակի՝ միաժամանակ *ծառայողականի և անձնականի չափանիշներին* համաժամանակյա համապատասխանության պարտադիր փաստման, անձի՝ *բնակարանի անձեռնմխելիության երաշխիքների լեգիտիմ ակնկալիքի* ապահովման տեսանկյունից:

Գործնական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև տարբեր անձանց բնա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 124 2021

<sup>22</sup> Վճռաբեկ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՇԴ/0525/07/18 որոշում, 6-7, 16-16.1 կետեր. սույն որոշման պաշտոնական հրապարակման օրն է 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

կարաններում խուզարկություն կատարելու վերաբերյալ դատարանի կողմից մեկ որոշմամբ թույլատրելու իրավաչափության հարցը: Անդրադառնալով տվյալ հիմնախնդրին և վերլուծության ենթարկելով առկա իրավակարգավորումները դրա վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Չ]նայած ուղղակի օրենսդրական արգելքի բացակայությանը՝ նպատակահարմար չէ մեկ որոշմամբ տարբեր անձանց պատկանող բնակարաններում խուզարկություններ կատարելու թույլտվություն տալը, քանի որ այդ դեպքում հնարավոր կլինի իրավիճակ, երբ առաջին խուզարկությունը սկսելու ժամանակ հրապարակվեն նաև մնացած անձանց բնակարաններում խուզարկություն կատարելու և դրա նպատակի վերաբերյալ փաստերը, ինչը կնվազեցնի տվյալ քննչական գործողության արդյունավետությունը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարացված կլինի, եթե վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր անձին պատկանող բնակարանի կապակցությամբ ներկայացնի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու առանձին միջնորդություն, իսկ դատարանը, իր հերթին, յուրաքանչյուր անձի մասով քննարկի խուզարկության թույլատրելիության հարցը և կայացնի առանձին որոշում<sup>23</sup>»:

Ամբողջությամբ կիսելով և արդարացի համարելով Վճռաբեկ դատարանի մեջբերված որոշմամբ արտահայտված դիրքորոշում-մտահոգությունը, կարծում ենք, որ քննության արդյունավետության շահերից ելնելով առավել արդյունավետ կլինի, որպեսզի յուրաքանչյուր անձի բնակարանի մասով քննիչի կողմից հարուցվի առանձին միջնորդություն և դատարանի կողմից համապատասխանաբար կայացվի առանձին որոշում, և այդ մոտեցմանը հարկավոր է տալ իմպերատիվ ամրագրում գործող Օրենսգրքով: Բանն այն է, որ Վճռաբեկ դատարանի քննարկվող դիրքորոշմամբ տրված չպարտադրող, խորհրդատվական բնույթի ձևակերպումներն ըստ էության հայեցողության դրսևորման հնարավորություն են ստեղծում նախաքննա-

կան մարմնի համար՝ տարբեր անձանց մասով մեկ կամ համապատասխան անձանց քանակով մի քանի միջնորդություն հարուցելու հարցում, որպիսի պայմաններում, նախաքննական մարմնի կողմից մեկից ավելի անձանց մասով մեկ միջնորդություն հարուցելու և դատարանի կողմից այն բավարարելու պարագայում, առաջին անձի բնակարանում խուզարկությունն սկսելուց առաջ այդ որոշման հրապարակումն առնվազն ռիսկի տակ է դնում մյուս անձանց բնակարաններում խուզարկության կատարման հանկարծակիությունը՝ այդ անձանց տվյալ տեղեկատվությունը վաղօրոք հայտնի դառնալու փաստի ուժով, ինչն էլ, ի թիվս այլնի, կարող է հանգեցնել գործի քննության համար նշանակություն ունեցող առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը համապատասխան անձանց կողմից ոչնչացնելուն կամ թաքցնելուն կամ հետախուզվող, հանցագործության մեջ կասկածվող անձանց թաքնվելուն: Դեռ ավելին, իրադարձությունների նման զարգացումը, այսինքն՝ առաջ քաշված ռիսկերի գործնականում չհաղթահարումը, հատկապես այն դեպքում, երբ խուզարկությամբ պարզման ենթակա հանգամանքների պարզումը քրեական գործի համար ունեին կենսական, առանցքային և որոշիչ նշանակություն, քննիչը որևէ սահմանափակվածություն, ըստ էության չի կրում քննարկվող որոշմամբ առկա դիրքորոշմամբ, ուստի և այդ հանգամանքները չպարզելու՝ խուզարկության ծախսողման և գործը փակուղի բերելու համար ևս չի կարող կրել որևէ տիպի պատասխանատվություն: Հետևաբար առկա հիմնավորումներով, քննության արդյունավետության շահով և հանցագործությունների օրինական ճանապարհով բացահայտելիության նպաստմամբ պայմանավորված, անհրաժեշտ է օրենսդրական ուժ տալ տարբեր անձանց մասով մեկ միջնորդությամբ և համապատասխանաբար դատարանի մեկ որոշմամբ խուզարկության կատարման անթույլատրելիությանը:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 4-րդ մասն ուղղված է խուզարկության գաղտնիության ապահովմանը: Մասնավորապես, նշված նորմի համաձայն՝ քննիչը պարտավոր է ձեռնարկել

<sup>23</sup> «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0867/07/14 որոշում, 12-րդ կետ:



միջոցներ, որպեսզի չհրապարակվեն առգրավման և խուզարկության փաստը, ինչպես նաև դրանց արդյունքները և խուզարկվողի մասնավոր կյանքի հանգամանքները: Որպես չհրապարակմանն ուղղված միջոցներ, բնականաբար, կարող են հանդիսանալ օրենքով չարգելվածները՝ ի թիվս այնի՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված կարգով քննչական գործողության մասնակիցներին գրավոր նախազգուշացները՝ խուզարկության փաստի, արդյունքների, խուզարկվողի մասնավոր կյանքի մասին առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացները: Ինչ վերաբերում է մասնավոր կյանքի «հանգամանքներ» հասկացությանը, ապա դրա կապակցությամբ տեսության մեջ կա տեսակետ<sup>24</sup>, որ դա փաստաթղթավորված՝ այսինքն խուզարկության արդյունքում փաստաթղթին հանձնված տեղեկատվությունն է: Կարծում ենք, որ սա նեղ մեկնաբանություն է. խուզարկության ընթացքում կարող են լինել բազմաթիվ հանգամանքներ և իրադարձություններ, որոնք օբյեկտիվորեն տեղ չգտնեն փաստաթղթերում, ուստի նման հանգամանքները ևս պետք է դիտարկել մասնավոր կյանքի հանգամանքներ գաղափարի ներքո:

Քննիչն իրավունք ունի խուզարկության վայրում գտնվող անձանց արգելել հեռանալու այդ տեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը: Ընդ որում, քննիչի նշված իրավունքի իրացումը կարող է դրսևորվել և՛ բանավոր զգուշացմամբ, և՛ գրավոր, որպիսի հանգամանքը կարող է ֆիքսվել առանձին փաստաթղթի տեսքով, կամ տեղ գտնել խուզարկության արձանագրության մեջ՝ հավաստվելով անձի ստորագրությամբ: Բոլոր դեպքերում այդ հանգամանքը պետք է արտացոլվի խուզարկության արձանագրության մեջ:

Խուզարկություն կատարելիս քննիչն իրավունք ունի բացել փակված շինություններն ու

պահեստարանները, եթե դրանց տերը հրաժարվում է կամովին բացել դրանք, ինչը թույլ կտա քննիչին և (կամ) համապատասխան մասնագետին հասու դարձնել դրանցում գտնվող առարկաները, զննել դրանք, անհրաժեշտության դեպքում վերցնել: Բացելիս կարող են օգտագործվել անհրաժեշտ և համաչափ տեխնիկական միջոցներ՝ խուսափելով փականքները, դռները և այլ առարկաներն առանց անհրաժեշտության վնասելուց: Նշված տեխնիկական միջոցների կիրառման մասին ևս պետք է նշվի խուզարկության արձանագրության մեջ:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում է, որ խուզարկության ընթացքում հայտնաբերված և վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը ներկայացվում են քննչական գործողության մասնակիցներին, մանրամասն նկարագրվում են արձանագրության մեջ, իսկ *անհրաժեշտության դեպքում՝ կնքվում քննիչի կնիքով*: Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն առարկային իրեղեն ապացույցի նշանակություն է տալիս միայն այն դեպքում, եթե դրա մանրամասն նկարագրությամբ, կնքելով և այն ձեռք բերելուց անմիջապես հետո կատարված այլ մանրամասն գործողություններով բացառվել է առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, կամ եթե դատարանում հետազոտվելուց անմիջապես առաջ այն ճանաչել են կասկածյալը, մեղադրյալը, տուժողը կամ վկան: Առարկաների կնքման համատեքստում վերլուծության ենթարկելով մեջբերված նորմերը՝ Վճռաբեկ դատարանը Հարություն Հակոբյանի գործով եկել է հետևյալ իրավական դիրքորոշմանը. «(...) Ինչ վերաբերում է վերցված առարկաների և փաստաթղթերի կնքմանը, ապա հոդվածի (228-րդ հոդվածի 8-րդ մաս) վերլուծությունից երևում է, որ դա իրականացվում է միայն անհրաժեշտության դեպքում: Այսինքն, ՀՀ քրեադատավարական օրենքը, կիրառելով «անհրաժեշտության դեպքում» արտահայտությունը, առգրավված կամ խուզարկության արդ-

<sup>24</sup> Дьяченко М. С. Обыск. Выемка. Наложение ареста на почтово-телеграфные отправления. Контроль и запись переговоров. // Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник. Отв. ред. П.А. Лупинская. Изд-во «ЮристО», М., 2003, էջ 396-397:

յունքում հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի կնքման իմպերատիվ պահանջ չի նախատեսել: Կնքման անհրաժեշտության առկայության կամ բացակայության հարցը յուրաքանչյուր դեպքում որոշում է քննիչը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, հայտնաբերված առարկայի առանձնահատկություններից, ՀՀ քրեական դատավարության օրենսդրության սկզբունքներից և ապացուցումը սահմանող օրենսդրական պահանջներից:

Շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ վկայակոչված հոդվածի իմաստով կնքման պահանջը վերաբերելի է այն դեպքերին, երբ գործի կոնկրետ հանգամանքների և հայտնաբերված առարկայի առանձնահատկությունների գնահատմամբ կողմնակի դիտորդին ակնհայտ է, որ խուզարկության կամ առգրավման արդյունքում վերցվող առարկայի կնքումը անհրաժեշտ է դրա նույնականությունը ողջամտորեն հիմնավորելու համար<sup>25</sup>»:

Մեջբերված գործով Վճռաբեկ դատարանը հստակեցում մտցրեց խուզարկության կամ առգրավման արդյունքում վերցված առարկաների կնքման պարտադիրության հարցում՝ դա պայմանավորելով օբյեկտիվ անհրաժեշտությամբ, և միևնույն ժամանակ իրավացիորեն սահմանափակելով վարույթն իրականացնող մարմնի՝ կնքման «անհրաժեշտության» հայեցողական մեկնաբանման հնարավորությունը:

Խուզարկության կատարման ողջ ընթացքը՝ սկսած կատարմանը նախորդող գործողություններից, բուն կատարողական գործողություններից և վերջացրած ավարտական և այլ քրեադատավարական գործողություններով, ներառվում են քննիչի կողմից կազմվող արձանագրության մեջ և, ի թիվս նկարագրված իրադարձությունների, դրանում մանրամասն նկարագրվում են քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել որոնվող առարկաները և անձինք, խուզարկություն կատարող ան-

ձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերականների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը: Խուզարկության ընթացքում ամբողջ վերցվածի մասին պետք է նշվի քննչական գործողության արձանագրության մեջ՝ ճշգրիտ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները, իսկ եթե խուզարկության ընթացքում դրանք ոչնչացնելու կամ հայտնաբերված առարկաները կամ փաստաթղթերը թաքցնելու փորձեր են եղել, ապա այդ մասին ևս նշվում է արձանագրության մեջ: Արձանագրությունը կազմելուց հետո այն քննիչի կողմից պարտադիր կերպով պետք է ծանոթացման ներկայացվի քննչական գործողության բոլոր մասնակիցներին, ովքեր ծանոթանալուց հետո ստորագրում են այն և իրավունք ունեն պահանջել դրանում մտցնելու իրենց դիտողությունները: Նշված գործողությունների ավարտից հետո խուզարկության արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվում է քննչական գործողությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ այն բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին, որի տարածքում կատարվել է քննչական գործողությունը:

Ամփոփելով, կարող ենք եզրահանգել, որ բնակարանի խուզարկության վերաբերյալ գործող օրենսդրությամբ առկա կարգավորումների և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պատշաճ կիրառման պայմաններում հնարավոր է ամբողջապես ապահովել անձի իրավունքներն ու օրինական շահերը, խուսափել դրանց անհիմն սահմանափակումներից և, ի վերջո, ապահովել քննչական գործողության պատշաճ ընթացքն ու դրա արդյունքում ձեռք բերվող ապացույցների անվիճելի թույլատրելիությունը քրեական վարույթում:

<sup>25</sup> Հարություն Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԲԴ/0128/01/09 որոշում, 28-29 կետեր:

**ԴԱՎԹՈՒՇԻ ՂԱՐԱՄԱՆՅԱՆ**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի

**ԱՆՔԱՐԵՆԻՂԾ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

ՀՀ Սահմանադրությամբ անմիջականորեն նախատեսվում է ինչպես տնտեսական գործունեությամբ ազատորեն զբաղվելու, այնպես էլ նախատեսված են երաշխիքներ տնտեսական գործունեությամբ ազատորեն զբաղվելու համար, այդպիսիք են՝ մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահում, անբարեխիղճ մրցակցություն և հակամրցակցային համաձայնություններն արգելելը, որը նշված է ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ կետով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ հոդվածով ևս նշված է, որ անբարեխիղճ մրցակցությունը արգելվում է:

Այսինքն կարող ենք եզրահանգել, որ արգելելով անբարեխիղճ մրցակցությունը օրենսդրի նպատակն է խթանել բարեխիղճ տնտեսական մրցակցության ստեղծմանը և սպառողների շահերի արդյունավետ պաշտպանմանը:

Նախ մինչև անբարեխիղճ վարքագծին անցնելը հասկանաք, թե ինչ է իրենից ներկայացնում բարեխիղճ վարքագիծ:

Ե.Ն.Կուլաչևան նշում է, որ «բարեխիղճությունը» համարվում է իրավահարաբերությունների համակարգում գլխավոր սկզբունքներից մեկը, որոնք կարգավորվել են ինչպես ռուսական, այնպես էլ արտասահմանյան իրավունքի տարբեր ոլորտների կողմից, սակայն ոչ մի նորմատիվ ակտ չի սահմանում «բարեխիղճ» հասկացությունը և չկա միանշանակ դոկտրինալ դիրքորոշում գիտնականների և մասնագետների շրջանակում<sup>1</sup>:

**Ն.Գ. Ելիսևի** պատկերացմամբ վարքագի-

ծը բարեխիղճ է այնքանով, որքանով այն ուղղորդվում է բարու և սիրո ցանկությամբ, ինչպես նաև նշում է, որ բարեխիղճ վարքում վճռորոշ է ոչ միայն արարքի արտաքին կողմը, այլ նաև նրա դրդապատճառները, նրա կանխատեսվող արդյունքների բարոյական գնահատականը<sup>2</sup>:

**Ի.Ա. Գրեբենկինայի** տեսանկյունից քաղաքացիական իրավունքի սուբյեկտը պետք է լինի ոչ միայն բարեխիղճ, այլ նաև հոգատար վերաբերմունք դրսևորի իր կոնտրագենտին և այն անձանց ում մատուցում է ծառայություններ, վաճառում է ապրանք կամ կատարում է աշխատանք<sup>3</sup>:

Այլ կերպ ասած, սուբյեկտիվ իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը պետք է իրականացվի այնպես, որ չվնասեն իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը: Այսինքն այս դեպքում բարեխիղճության սկզբունքը պահանջում է ուշադիր և հարգալից վերաբերմունք ուրիշների իրավունքների և օրինական շահերի նկատմամբ:

Իսկ հիմա անդրադառնաք անբարեխիղճ մրցակցության էության պատմական ակնարկին հասկանալու համար ինչ զարգացում և ինչ նշանակություն է ունեցել հին ժամանակներից սկսած մինչ այսօր:

«Անբարեխիղճ մրցակցություն» հասկացությունը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել Ֆրանսիայում 1850 թվականին: Ֆրանսիական դատարանները, հիմք ընդունելով երկրի քաղաքացիական օրենսգր-

<sup>1</sup> Стн **Шестакова Е.В.** Применение принципа добросовестности в судебной практике. - “Право Доступа”, 2017 г. / [<sup>2</sup> Стн Принцип добросовестности-новый нравственный ограничитель гражданских прав, Журнал российского права № 6 – 2013, М., էջ 4:](https://study.garant.ru/#/document/77650854/paragraph/310/doclist/1485/showentries/0/highlight/%D0%9F%D1%80%D0%B8%D0%BD%D1%86%D0%B8%D0%BF%20%D0%B4%D0%BE%D0%B1%D1%80%D0%BE%D1%81%D0%BE%D0%B2%D0%B5%D1%81%D1%82%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8:19, 05.03.2021թ.</a></p>
</div>
<div data-bbox=)

<sup>3</sup> Стн նույն տեղում:

քի 1382-րդ հոդվածի ընդհանուր դրույթները, որոնք հակաօրինական գործողությունների կատարման դեպքում նախատեսում էին վնասների փոխհատուցում, կարողացան ստեղծել անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության համապարփակ և արդյունավետ համակարգ: Ավելի ուշ այս եզրույթը հստակեցվեց և տարբեր երկրներում կիրառվեց «սովերային, անօրինական, համապարփակ մրցակցություն» նշանակությամբ: Արդյունաբերական սեփականության ոլորտի ֆրանսիացի իրավաբան Պոլեն Ռուբեն անբարեխիղճ մրցակցությունը սահմանել է որպես «գործողություն, որը հանգեցնում է ապակողմնորոշման, շփոթության, վարկաբեկման, ձեռնարկությունների մրցակիցների ներքին կազմալուծման և ընդհանուր շուկայի կազմալուծման»<sup>4</sup>:

Տնտեսագիտական գրականության և գործարար շրջանառության մեջ «անբարեխիղճ մրցակցություն» հասկացությունն ունի բավականին լայն մեկնաբանություն՝ մրցակցի հանդեպ շուկայի սուբյեկտի ցանկացած նպատակաուղղված գործողություն, որն ուղեկցվում է անթույլատրելի մեթոդներով<sup>5</sup>:

Տարբեր հեղինակներ իրենց տեսակետներն են հնչեցրել անբարեխիղճ մրցակցության հասկացության վերաբերյալ և կարող ենք արձանագրել, որ այդ հասկացության միանշանակ ընկալում դեռևս գոյություն չունի:

Յ.Ի.Սվյադոսը անբարեխիղճ մրցակցություն սահմանեց որպես արդյունաբերական և առևտրային հարցերում այնպիսի գործողությունների կատարում, որոնք ուղղված են գույքային օգուտներ քաղելը անբարեխիղճ, ազնիվ կանոններին և գործուղության սովորույթներին հակառակ, կապիտալիստական շրջանառության մեջ գտնվող մրցակիցների նկատմամբ:

Վ.Ի.Էրեմենկոն ձևակերպում է անբարեխիղճ մրցակցության սահմանումը՝ համարելով, որ այդպիսին է ցանկացած մեղավոր արարք, որն տեղի է ունենում տնտեսական գոր-

ծունեության ընթացքում մրցակցության նպատակով և հակասում է գործառության սովորույթներին, մասնագիտական էթիկային կամ պարկեշտությանը, որն էլ առաջացնում կամ կարող է վնաս պատճառել:

Յ. Կասյանովը անբարեխիղճ մրցակցությունը սահմանում է որպես ապրանքային շուկայում անկախ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցություն, որն է տնտեսական առավելություն ստանալու նպատակով կամ բացասական կարծիք ձևավորելով սպառողների մոտ իրենց մրցակիցների ապրանքների նկատմամբ կամ իր ապրանքների վերաբերյալ տեղեկություններ հրապարակել, որն չի համապատասխանում իրականությանը<sup>6</sup>:

Ստացվում է, որ անբարեխիղճ մրցակցությունը առաջանում է ֆինանսատնտեսական այն հարաբերություններում, որտեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողները դիմելով տարբեր անօրինական մեթոդների կամ ձևերի, փորձում են ավելի շատ եկամուտ կուտակել, հաշվի չառնելով մյուսների շահերը լինի սպառողը, թե մյուս տնտեսվարող սուբյեկտը:

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-րդ մասի՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:

Օրենսդրական հասկացության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել անբարեխիղճ մրցակցության հետևյալ հատկանիշները. 1)անբարեխիղճ մրցակցության օրենսդրությամբ նախատեսված հասկացության մեջ պարունակում է այնպիսի գործողություններ, որոնք ոչ միայն հակասում են գործող օրենսդրության

<sup>4</sup> Տե՛ս **Вилкова Н.** Регламентирование недобросовестной конкуренции в праве Франции // “Хозяйство и право”. М., 1995, էջ 112:  
<sup>5</sup> Տե՛ս **Միքայելյան Մ.**, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, Երևան, 2011, էջ 5:  
<sup>6</sup> Տե՛ս Юридическая сущность недобросовестной конкуренции, научно-практический электронный журнал Российское конкурентное право и экономика N2(11)2014, часть 3, М., 2014, էջեր 43-44:

կարգավորումներին և գործարար շրջանառության սովորույթներին, այնպես էլ բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքների պահանջներին,

2) անբարեխիղճ մրցակցությունը, ի տարբերություն մենաշնորհային գործունեության, կարող է իրականացվել միայն ակտիվ գործողություններով, անգործության տեսքով պասիվ վարքագծի հնարավորությունը նախատեսված չէ,

3) անբարեխիղճ մրցակցության սուբյեկտներ կարող են լինել միայն տնտեսավարող սուբյեկտները, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող հայկական և օտարերկրյա կազմակերպությունները, ինչպես նաև անհատ ձեռնարկատերեր,

4) անբարեխիղճ մրցակցության սուբյեկտների ակտիվ գործողությունների նպատակն է այլ մրցակիցների նկատմամբ ստանալ առավելություն ձեռնարկատիրական գործունեությունում, իսկ օրինակ մենաշնորհային գործունեության նպատակը՝ մրցակցության կանխումը, սահմանափակումը կամ վերացումն է:

Թիվ ՎԴ/11331/05/18 քաղաքացիական գործով Վարչական դատարանը արձանագրել է, որ անբարեխիղճ մրցակցության գործողություններ են սույն օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություններ»:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է ազատ տնտեսական մրցակցությունը խրախուսելու, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու, ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելու և սպառողների շահերի պաշտպանելու նպատակով:

Օրենքով սահմանվել է անբարեխիղճ մրցակցության հասկացությունը, մասնավորա-

պես՝ վերջինս ենթադրում է օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որով խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

*Նշվածից հետևում է, որ իրավական ակտերի ոչ բոլոր խախտումները կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող վարքագիծը կարող են դիտարկվել որպես անբարեխիղճ մրցակցություն, այլ միայն այնպիսիք, որոնց արդյունքում խախտվում է տնտեսավարող սուբյեկտի և մրցակիցների կամ սպառողների միջև բարեխղճության սկզբունքը:*

Միևնույն ժամանակ Օրենքով ստույգ սահմանվել են այն գործողությունները, որոնք համարվում են անբարեխիղճ մրցակցություն, դրանք են՝ նաև Օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված դեպքերը<sup>7</sup>:

Անբարեխիղճ մրցակցության հասկացության ձևակերպման մեջ ավելի շատ պարունակում են այնպիսի հատկանիշներ, որոնք դժվարացնում և սահմանափակում են պրակտիկայում այն կիրառելու համար: Եվ տնտեսավարող սուբյեկտների իրականացրած ցանկացած գործողություն, որն ուղղված է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ընթացքում առավելություն ստանալուն և առանց օրենսդրորեն ամրագրելով դիտավորությամբ այն կարող է իրականացվել, թե անզգուշությամբ, ապա նշանակում է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջանալու դեպքում հայցվորը պարտավոր է դատարանում ներկայացնել պատասխանողի կողմից դիտավորությամբ կատարելը ապացուցող փաստեր, որով պրակտիկայում դժվարանում է անբարեխիղճ մրցակցության բացահայտմանը:

Ֆրանսիական պոզիտիվ իրավունքում անբարեխիղճ մրցակցություն հասկացությունը նոր-

<sup>7</sup> Տե՛ս թիվ ՎԴ/11331/05/18 քաղաքացիական գործ, 12.09.2019թ. ք.Երևան, Դոնբաց դատական նիստում, քննության առնելով վարչական գործն ըստ հայցի «Սվետա» ՍՊ ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ վարչական ակտն անվավեր կամ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին:

մատիվորեն ամրագրված չէ, այդ պատճառով անբարեխիղճ մրցակցության հասկացության վերլուծության համար կենտրոնական աղբյուրներ են համարվում դատական պրակտիկան և դոկտրինան: Ֆրանսիական առևտրային իրավունքի մասնագետներ՝ Ժ.Ռիպպերոմ ու Ռ.Ռոբլոն անբարեխիղճ մրցակցությունը մեկնաբանում են, որպես շուկայում դրսևորվող այնպիսի վարքագիծ, որը հակասում է առևտրային սովորույթներին կամ գործող օրենքներին (կանոնակարգերին)<sup>8</sup>:

Եվ Ֆրանսիայի օրենսդրությամբ նախատեսվում է անբարեխիղճ մրցակցության իրականացումը մեղքի տարբեր ձևերով, ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ կատարելը: Այդպիսով մրցակիցները ոչ միայն չպետք է դիտավորությամբ չդիմեն օրենսդրությամբ արգելված անբարեխիղճ մրցակցության գործողություններին, այլև պարտավոր են մրցակցության տարբեր մեթոդների կիրառման ժամանակ ձեռնարկեն այնպիսի գործողություններ, որոնք չառաջացնի անբարեխիղճ մրցակցություն<sup>9</sup>:

Կարելի է առանձնացնել անբարեխիղճ մրցակցության հետևյալ հատկանիշները, որոնց վրա հիմնվում է ֆրանսիական դատական նախադեպը և դոկտրինան, այսպիսով.

1) անբարեխիղճ մրցակցության տերմինի կիրառման ոլորտն ընդգրկում է տնտեսական հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը,

2) տնտեսական ոլորտում որպես անբարեխիղճ գործողությունների սուբյեկտ հանդես է գալիս մրցակիցը,

3) անբարեխիղճ մրցակցությունը դիտվում է որպես որոշակի իրավական հետևանքներ առաջացնող վարքագիծ,

4) այդ գործողությունը ապացուցելիս հաշվի է առնվում նրա սուբյեկտի մեղքը,

5) իրավական տեսանկյունից վարքագծի

բովանդակությունը հանդես է գալիս մրցակցին տրամադրված ազատության չարաշահումով,

6) անբարեխիղճ գործողությունների օբյեկտ է համարվում մրցակցի հաճախորդը (հաճախորդները),

7) տուժողի համար նման վարքագծի հնարավոր կամ իրական հետևանքներն արտահայտվում են համապատասխանաբար վնաս պատճառելու կամ պատճառելու հնարավորության մեջ:

Ինչ վերաբերում է սպառողների շահերին, ապա Ֆրանսիայում, ի տարբերություն ԵՄ այլ երկրների (օրինակ՝ Բելգիայի կամ Գերմանիայի), դրանք չեն դիտարկվում որպես անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի գլխավոր նպատակ և պաշտպանության օբյեկտ<sup>10</sup>: Հայաստանի Հանրապետությունում նույնպես անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանելու սուբյեկտներ են համարվում նաև սպառողները, որի մասին անմիջապես անդրադարձ է կատարվում Օրենքի հոդված 1-ի նպատակներում:

Իսկ օրինակ «Սեփականության պաշտպանության» Փարիզյան կոնվենցիայով նշվում է, որ անբարեխիղճ մրցակցության ակտ է համարվում մրցակցության յուրաքանչյուր ակտ, որը հակասում արդյունաբերական և առևտրային բարեխիղճ գործառության սովորույթներին:

Մասնավորապես, ենթակա են արգելքի՝

ա) տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը,

բ) այնպիսի գործողություններ, որոնք հասարակությանը կարող են մոլորեցնել,

գ) կեղծ տեղեկություններ ներկայացելը, որով կարող է վնասել տնտեսվարող սուբյեկտի համբավի, վարկարժեքի վրա<sup>11</sup>:

Այսինքն ստացվում է, որ Փարիզյան կոն-

<sup>8</sup> Տե՛ս **К.Ю. Тотьев**, Недобросовестная конкуренция по современному французскому праву, М., 2006, էջ 5:

<sup>9</sup> Տե՛ս **Ильмира Ахметзянова**, ПРАВОВАЯ КОНСТРУКЦИЯ НЕДОБРОСОВЕСТНОЙ КОНКУРЕНЦИИ: ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ, научная газета «Влась», Москва, 2007, էջ 69:

<sup>10</sup> Տե՛ս **К.Ю. Тотьев**, Недобросовестная конкуренция по современному французскому праву, М., 2006, էջ 7:

<sup>11</sup> Տե՛ս Paris Convention for the Protection of Industrial Property (of March 20, 1883, as revised at Brussels on December 14, 1900, at Washington on June 2, 1911, at The Hague on November 6, 1925, at London on June 2, 1934, at Lisbon on October 31, 1958, and at Stockholm on July 14, 1967, and as amended on September 28, 1979)/[https://www.unido.org/sites/default/files/2014-04/Paris\\_Convention\\_0.pdf](https://www.unido.org/sites/default/files/2014-04/Paris_Convention_0.pdf)

վենցիայով անբարեխիղճ մրցակցության հասկացությունը ավելի լայն հասկացություն է, չի սահմանափակվում բարեխիղճության սկզբունքով, գործարար շրջանառության սովորույթներով և հղում է անում անբարեխիղճ մրցակցության որոշ տեսակներին:

Եվ եթե ուսումնասիրենք միջազգային փորձը, ապա կտեսնեք, որ մի շարք պետությունների օրենսդրությամբ անբարեխիղճ մրցակցության հասկացությունը ձևակերպելիս օրենսդիրը չի օգտագործում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ազնվությունը, արդարությունը, ճշմարտությունը: Օրինակ Շվեդիայի «Անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի մասին» օրենքով անբարեխիղճ մրցակցության տակ հասկացվում է այնպիսի մրցակցային միջոցներ, որոնք հակասում են օրենքի և գործարար շրջանառության սովորույթներին, որն իրականացվել է դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնաս հասցնելով մրցակիցներին<sup>12</sup>:

Եթե ամփոփելու լինեք կարող ենք նշել, որ բարեխիղճության սկզբունքը համարվում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների իրականացման հիմքը: Այդ սկզբունքով սահմանափակվում է քաղաքացիաիրավական սուբյեկտների կողմից իրականացվող գործողությունների շրջանակը: Բարեխիղճության սկզբունքը ավելի կիրառելի է տնտեսական իրավահարաբերություններում, որպեսզի պետությունում հաս-

տատվի տնտեսական կայունություն և մրցակիցների միջև բարիդրացիական մթնոլորտ և որի արդյունքում էլ կստեղծվի որակյալ տնտեսական հետևանք, այն է՝ որակյալ աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում կամ ապրանքների վաճառք, այդպիսով պաշտպանելով սպառողների իրավական շահերը: Ինչպես նաև սպառողների համար կստեղծվի ընտրության հնարավորություն՝ ընտրել որակյալը, ընտրել մատչելին:

Քննարկելով տարբեր դոկտրինաներում առկա անբարեխիղճ մրցակցության հասկացությունները, պարզ է դառնում, որ բոլոր մոտեցումների համար միանշանակ է համարվում, որ տնտեսվարող սուբյեկտների համար արգելված է անբարեխիղճ մրցակցության դիմելը և կարևոր պայմաններից է այն, որ անբարեխիղճ մրցակցության հետևանքով պատճառվել կամ կարող է պատճառվել վնաս սպառողին կամ տնտեսվարող սուբյեկտին, ուստի առաջարկել ենք հետևյալ փոփոխությունը:

*Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարված, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին և պատճառվել կամ կարող է պատճառվել վնաս սպառողին կամ տնտեսվարող սուբյեկտին:*



<sup>12</sup> См. Ильмира Ахметзянова, ПРАВОВАЯ КОНСТРУКЦИЯ НЕДОБРОСОВЕСТНОЙ КОНКУРЕНЦИИ: ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ, научная газета “Власть”, Москва, 2007, էջ 70:

**ՍԱՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Արարատի մարզի դատախազության դատախազ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՉՏՆՎՈՂ  
ԳՈՒՅՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել, որ իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրվի ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը տիրապետող և օգտագործող մյուս մասնակիցներից պահանջել վնասների հատուցում:

Գույքի տիրապետման և օգտագործման բովանդակությունը բացահայտված է Օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով, մասնավորապես, օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, գնաճի և այլ ձևերով:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում ու բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

Օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից պարտավոր է իր բաժնին

համաչափ մասնակցել ընդհանուր գույքից գանձվող հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման այլ ծախսերին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սեփականատերերից մեկի կողմից, առանց մյուսների համաձայնության, կատարած անհարկի ծախսերը մնացած սեփականատերերի կողմից չեն հատուցվում: Այդ կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են դատական կարգով:

Վերոգրյալ քաղաքացիաիրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը մասնակիցները կարող են տիրապետել և օգտագործել միայն փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում վեճը կարող է լուծվել դատական կարգով: Ինչը նշանակում է, որ նշված իրավական նորմը հնարավորություն է վերապահում համասեփականատերերին փոխադարձ համաձայնությամբ սահմանելու ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետելու և օգտագործելու միասնական կարգ, որի բացակայության դեպքում կողմերի միջև վեճը լուծվում է դատական կարգով:

ՀՀ օրենսդրությունը նաև կարգավորում է ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները բաշխելու կարգը, մասնավորապես, բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում ու բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաչափ, ընդ որում, նշված կանոնը նախատեսում է բացառություն, այն է՝ բաժնային սեփականության մասնակիցների համաձայնությամբ հնարավոր է անհամաչափ բաշխում:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021



Միևնույն ժամանակ կարևոր է այն հանգամանքը, որ բաժնային սեփականության ցանկացած մասնակից ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավունքներից բացի ունի նաև պարտավորություններ, որն ամրագրված է Օրենսգրքի 194-րդ հոդվածում, և որը կրում է իմպերատիվ բնույթ, ավելին, օրենսդիրը, կարևորելով բաժնային սեփականության ցանկացած մասնակցի կամաարտահայտությունը, նախատեսել է սեփականատերերից մեկի կողմից, առանց մյուսների համաձայնության, կատարած անհարկի ծախսերը մնացած սեփականատերերի կողմից չհատուցելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ փոխադարձության սկզբունքը գործում է բացառապես անհարկի ծախսերի դեպքում, իսկ ընդհանուր գույքից գանձվող հարկերը, տուրքերը և մյուս վճարները, ինչպես նաև գույքի պահպանման այլ ծախսերը կատարելու պարտավորությունը կրում է պարտադիր բնույթ ցանկացած մասնակցի համար իր բաժնին համաչափ:

Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի իրավագործությունների խնդրին անդրադարձ է կատարել ՀՀ Սահմանադրական դատարանը 2012 թվականի փետրվարի 24-ին թիվ ՍԴՈ-1009 որոշմամբ, որում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի բովանդակությունը պետք է մեկնաբանվի այնպես, որ դրա պաշտպանությունը համարժեք լինի անձի սեփականության իրավունքի պաշտպանության համար նախատեսված պաշտպանությանը: Ընդհանուր սեփականության (բաժնային և համատեղ) պարագայում համասեփականատերերից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես գույքային իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ՝ օժտված սեփականության սուբյեկտիվ իրավունքով և վերջինիս բովանդակությունը կազմող՝ իր հայեցողությամբ օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավագործությամբ: Հետևաբար, ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ տնօրինման, ինչպես և՛ օգտագործման և տիրապետման, ի-

րավագործությունը կարող է իրացվել միայն բոլոր համասեփականատերերի փոխհամաձայնությամբ, յուրաքանչյուր համասեփականատիրոջ կամաարտահայտության հիման վրա<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տիրապետման և օգտագործման բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է հղում կատարել Օրենսգրքի 163-րդ հոդվածով ամրագրված կարգավորմանը, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ Օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմի իրացման համար կիրառելի է Օրենսգրքի 163-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կանոնը: Ինչը նշանակում է, որ սույն դեպքում կիրառելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված կարգավորումները, մասնավորապես, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, իր բազմաթիվ որոշումներում նշել է, որ այն բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն, ընդհանուր շահից ելնելով, վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում<sup>2</sup>:

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե

1. նախատեսված է օրենքով
2. բխում է հանրային շահից

<sup>1</sup> Տես ՀՀ Սահմանադրական դատարանի Որոշում թիվ ՍԴՈ-1009, 23.02.2012թ., կետ 5:

<sup>2</sup> Տես Սպորրոնզը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 1982 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, կետ 61:

3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում<sup>3</sup>:

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից<sup>4</sup>:

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից<sup>5</sup>:

Վերոգրյալից հետևում է, որ բաժնային սեփականության ցանկացած մասնակից կարող է անարգել օգտվել իր սեփականությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ի շահ հանրության, ընդ որում, «հանրության շահ» եզրույթը չի կարող մեկնաբանվել կամայական, որպիսի պայմաններում Եվրոպական դատարանը սահմանել է այն չափորոշիչները, որոնց կիրառման պայմաններում

այն կարող է համարվել իրավաչափ և ընդունելի:

Հարկ է արձանագրել, որ համասեփակա՜նատերերը ընդհանուր գույքին համապատասխան կարող են կամ տիրապետել և օգտագործել ամբողջ գույքը ընդհանուր գույքի մի մասը բնեղենով, կամ տիրապետել և օգտագործել ամբողջ գույքը սահմանված հերթականությամբ: Օրինակ, բնակելի տան համասեփականատերերն ինքնուրույն են տիրապետում և օգտագործում իրենց հատկացված մասը (բնակարանը), իսկ ընդհանուր օգտագործման վայրերից օգտվում են կայացված համաձայնության հիման վրա: Մինչդեռ ավտոմեքենայի համասեփականատերերն այն օգտագործում են հերթականությամբ, իրենց բաժինների չափին համապատասխան<sup>6</sup>:

Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցների համաձայնության անհրաժեշտությունը գույքի տիրապետման ու օգտագործման առնչությամբ նշանակում է, որ անկախ բաժինների մեծությունից սեփականատերերի իրավագործությունները հավասար են և իրականացվում են ընդհանուր համաձայնությամբ: Ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի սեփականության իրավունքում իր բաժնին համաչափ տիրապետել և օգտագործել ընդհանուր գույքի մասը, իսկ եթե դա անհրաժեշտ է, ապա սեփականատերն իրավունք ունի այդ գույքը տիրապետող և օգտագործող մյուս մասնակիցներից ստանալ դրամական կամ այլ փոխհատուցում: Ընդ որում, ընդհանուր սեփականության մասնակիցները կարող են վերանայել գույքի բաշխումը՝ կախված ընդհանուր գույքի մեծացման մեջ նրանցից յուրաքանչյուրի կատարած ներդրումից կամ այլ հիմքերով<sup>7</sup>:

Ընդհանուր սեփականության մասնակիցները գույքի տիրապետման և օգտագործման հարցերը լուծելիս, անկախ ունեցած բաժնի չա-

<sup>3</sup> Տե՛ս Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67:

<sup>4</sup> Տե՛ս Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83:

<sup>5</sup> Տե՛ս Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, կետ 32, Բեյելերն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 05.01.2000 թվականի վճիռը, կետ 98, Իսմայլովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 06.11.2008 թվականի վճիռը, կետ 28:

<sup>6</sup> Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք, Երևան, 1978, հատոր 1, էջ 361:

<sup>7</sup> Տե՛ս Նազարյան Վ., ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000, էջ 64:

փից, օգտվում են հավասար ձայնի իրավունքից: Համասեփականատերերը կարող են տիրապետել և օգտագործել գույքի մի մասը բնեղենով կամ ամբողջ գույքը սահմանված հերթականությամբ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի բնույթին համապատասխան: Օրինակ, բնակելի տան յուրաքանչյուր համասեփականատեր ինքնուրույն տիրապետում, տնօրինում և օգտագործում է իր զբաղեցրած բնակելի մակերեսը, իսկ ընդհանուր օգտագործման տարածքները և օժանդակ հարմարությունները՝ համասեփականատերերի կայացրած համաձայնությանը համապատասխան: Մինչդեռ ավտոմեքենայի համասեփականատերերը այն կարող են օգտագործել կամ բոլորը միասին, կամ սահմանված հերթականությամբ<sup>8</sup>:

Շինության սեփականատերերն ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետում, օգտագործում և տնօրինում են «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված կարգով:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ շինության սեփականատերն իրավունք չունի պահանջել, որ իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրվի ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս կամ բա-

ժանել ընդհանուր բաժնային սեփականությունը:

Նույն հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը տնօրինելուց, տիրապետելուց և օգտագործելուց ստացված միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում՝ բաժնային սեփականության սեփականատերերի բաժիններին համամասնորեն, որոնք ուղղվում են պարտադիր նորմերի կատարմանը և շենքի կառավարմանը:

Շինության սեփականատերն իրավունք ունի սահմանված նորմերի պահպանմամբ, առանց մյուս սեփականատերերի համաձայնության, օգտագործել իր շինության ներքին պատերը:

Շինության սեփականատերն իրավունք ունի նախօրոք, սույն օրենքով նախատեսված կարգով, իրազեկելով շենքի կառավարման մարմնին կամ շինության սեփականատերերին, իր ուժերով վերացնել ընդհանուր բաժնային սեփականության այն թերությունները, որոնք անմիջական վտանգ են սպառնում ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ անձանց գույքին, մարդկանց կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին: Նշված թերությունների վերացման ծախսերը պետք է հատուցվեն շինությունների սեփականատերերի կողմից այն չափով, որքան դրանք կլինեն հիմնավորված, համաչափ և չեն գերազանցի պատճառվելիք վնասի չափը թերությունները չվերացնելու դեպքում:

Այսպիսով, բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարող է պատկանել նաև տվյալ կամ այլ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք, ինչպես նաև հողամաս, շարժական, անշարժ կամ ցանկացած այլ գույք:

Բնակելի տան համասեփականատերերից ամեն մեկին օգտագործման համար ամրացված տան մասը պետք է համապատասխանի նրա բաժնի չափին: Սակայն միշտ չէ, որ դա հնարավոր է, քանի որ տան ճարտարապետական-շինարարական առանձնահատկությունները, տան օգտագործման կարգը, համասեփա-

<sup>8</sup> Տե՛ս Բարսեղյան Ս., ՀՀ քաղաքացիական իրավունք, Ե., 2009, էջ 366:

կանատերերի կարիքավոր լինելու աստիճանը և այլ հանգամանքներ կարող են խանգարել դրան: Եթե անհնարին է ամեն մեկի բաժնի չափին համապատասխան հատկացնել տան ռեալ մաս, ապա մասնակիցները կարող են համաձայնության գալ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինների չափի վերանայման համար, կատարելով անհրաժեշտ հաշվարկ՝ դրամական հատուցում տալ և այլն<sup>9</sup>:

Ընդհանուր բաժնային սեփականությունը կարող է օտարվել կամ օգտագործման հանձնվել կամ դրա նկատմամբ սերվիտուտ սահմանվել, եթե այն օգտագործվելու է իր նպատակային նշանակությանը համապատասխան և չի խոչընդոտելու կամ վնաս պատճառելու շինության սեփականատերերին՝ իրենց շինությունները տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու ժամանակ: Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը տնօրինելուց, տիրապետելուց և օգտագործելուց ստացված միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում՝ բաժնային սեփականության մասնակիցների բաժիններին համամասնորեն, որոնք ուղղվում են պարտադիր նորմերի կատարմանը և շենքի կառավարմանը<sup>10</sup>:

Ակնհայտ է, որ բազմաբնակարան շենքում սեփականություն ձեռք բերելու դեպքում անձը միաժամանակ ձեռք է բերում ընդհանուր տարածքների նկատմամբ բաժնային սեփականություն, սակայն հիմնական առանձնահատկությունը պայմանավորված է նշված տարածքների նկատմամբ առկա իրավական կարգավորմամբ<sup>11</sup>:

Տվյալ դեպքում ներպետական օրենսդրությամբ հստակ ամրագրված է ոչ միայն բազմաբնակարան շենքի սահմանումը, այլ նաև թվարկված են բաժնային սեփականության իրավունքով պատկանող շենքը կրող կառուցվածքները, ընդ որում, անհրաժեշտ է փաստել, որ թվարկված կառուցվածքները չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2012 թվականի ապրիլի 27-ին թիվ ԵԿԴ/0389/02/11 որոշմամբ

իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրը նախատեսել է բազմաբնակարան շենքի կառավարման՝ այդ թվում ընդհանուր բաժնային սեփականության օգտագործման և տնօրինման առանձին կարգ: Միաժամանակ այդ կարգն ամենևին չի վերացնում բաժնային սեփականության մասնակիցների իրավունքները, այդ թվում դրանց պաշտպանության իրավունքը, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Հետևաբար բազմաբնակարան շենքի սեփականատերերի իրավունքների և դրանց իրականացման առանձնահատուկ կարգի (ընդհանուր ժողովի կողմից կառավարման հարցերի լուծում) միջև պետք է գտնվի ողջամիտ հավասարակշռվածություն՝ օրենսդրության տրամաբանությունը չխախտելու համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ հավասարակշռվածությունը դրսևորվում է հետևյալ կանոնի պահպանմամբ՝ քանի դեռ սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից վերջինիս իրավասությանը վերապահված հարցը որոշմամբ լուծում չի ստացել, մյուս բաժնային սեփականության մասնակիցներն իրավունք ունեն պաշտպանելու ընդհանուր բաժնային սեփականության իրենց իրավունքի ցանկացած խախտում: Նշված դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից, որի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ<sup>12</sup>:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի, մասնավորապես, նկուղների և ձեղնահարկի օգտագործման իրացման մեխանիզմների թերի կարգավորված լինելը պրակտիկայում առաջացնում է մի շարք խնդիրներ, օրինակ ստացվում է այնպես, որ ձեղնահարկը օգտագործում են վերջին հարկի բնակիչները, իսկ նկուղները՝ առա-

<sup>9</sup> Տե՛ս Ղարախանյան Գ.Հ., Ընդհանուր սեփականության իրավունք, Երևան, 1971, էջ 39:

<sup>10</sup> Տե՛ս Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրավունքներ և պարտականություններ, Գյումրի, 2005, էջ 11:

<sup>11</sup> Տե՛ս Կурбанов Р.А., Богданов Е.В., Жилищное право, Проспект, 2015:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանը 2012 թվականի ապրիլի 27-ին թիվ ԵԿԴ/0389/02/11 որոշում:

ջին: Արդյունքում խախտվում են բազմաբնակարան շենքի մյուս սեփականատերերի իրավունքները:

Ակնհայտ է, որ ընդհանուր գույքից գանձվող հարկերն ու գանձույթները, կառավարելու ու պահելու ծախսերը դրվում են բաժնային սեփականության բոլոր մասնակիցների վրա, ինչն առաջացնում է բաժնային սեփականության մասնակիցների պարտավորությունների անհամաչափ բաշխում:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է առավել հստակեցնել բաժնային սեփականության օգտագործման կանոնները, մասնավորապես, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները, որոնք փաստացի որևէ մեկի սեփականություն չեն հանդիսանում, բացառել ցանկացած անձի մշտական հիմունքերով օգտագործման հնարավորությունը՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրե-

լով նշված բովանդակությամբ իրավական նորմեր, որոնք կկրեն պարտադիր բնույթ:

Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տիրապետման բովանդակության բացահայտման համար Օրենսգրքի 163-րդ հոդվածով ամրագրված կարգավորման բովանդակությունից պարզ է դառնում, որ «Տիրապետել» եզրույթը սահմանված է տրամաբանական կանոնների խախտմամբ, այլ կերպ ասած, նշված հասկացությունը բացահայտվում է միևնույն հասկացության օգտագործմամբ, այն է՝ տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է, որպիսի պայմաններում առաջանում է լրացուցիչ մեկնաբանության անհրաժեշտություն:



**ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

Փաստաբան, Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ

**ՀԱՅՑԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀՅ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածը նախատեսում է հետևյալ հայցի ապահովման միջոցները՝ 1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագահի չափով արգելանք դնելը, 2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը, 3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը, 4) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը, 5) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը, 6) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը, 7) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

Այսպիսով, նշված հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով որպես հայցի ապահովման միջոցներ նախատեսված է պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը, իսկ 3-րդ կետով այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը: Գտնում ենք, որ այս երկու հայցի ապահովման միջոցները խելամիտ կլինի միացնել մեկ հոդվածում, քանի որ, ըստ էության, երկուսն էլ նույն հայցի ապահովման միջոցն են, որի նպատակն է արգելել վեճի առարկայի վերաբերյալ որոշակի գործողությունների կատարելը: Միակ տարբերությունը, որը կարելի է նկատել գործող հոդվածի կարգավորումից այն է, որ պատասխանողի պարագայում ուղղակի նշված է որոշակի գործողությունների կատարման արգելք, իսկ այլ անձանց համար՝ միայն վեճի առարկային վերաբերող գործողությունների կատարման արգելք: Գտնում ենք, որ երկուսի պարագայում էլ արգելքը կարող է վերաբերել միայն վեճի առարկային վերաբերող գործողությունների կատարմանը: Հակառակ պարագայում այսպիսի մոտեցումը կարող է իրավունքներ

րի չարաշահման առիթ դառնալ և պատասխանողին կարող են արգելել ցանկացած գործողության կատարում (այդ թվում նաև վեճի առարկայի հետ կապ չունեցող): Ոստի, առաջարկում ենք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը միացնել և ձևակերպել այն այսպես. **պատասխանողին կամ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը:**

Անդրադառնանք, հայցի ապահովման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ 1-ին մասի հոդվածի 5-րդ կետով նախատեսված՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացման կասեցմանը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը սահմանում է, որ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Տվյալ գործերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դատարանի կողմից նման պահանջով գործերի վարույթը հարուցվում է կատարողական վարույթի ընթացքում, երբ արգելանքի տակ գտնվող գույքը պետք է իրացվի: Ինչ վերաբերում է գույքի իրացմանը, ապա այն իրենից ներկայացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընթացակարգի բաղադրիչ տարր, որն իրականացվում է աճուրդի կամ գույքի ուղղակի վաճառքի միջոցով: Գույքի իրացման կասեցումը, որպես հայցի ապահովման միջոց, հասցեագրված է հարկադիր կատարողին և ուղղված է բռնագանձման ենթակա գույքի իրացմանն ուղղված գործողությունների կասեցմանը: Գտնում ենք, որ այս հայցի ապահովման միջոցն ընդհանրապես պետք է դուրս գա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 124, 2021

քի 129-րդ հոդվածի հայցի ապահովման միջոցների տեսակների ցանկից, քանի որ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելուց՝ **գույքի իրացումը կասեցվում է օրենքի ուժով**, այլ ոչ թե հայցվորի միջնորդության հիման վրա: Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետի՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե՝ հայց է ներկայացվել դատարան՝ այն գույքն արգելանքից հանելու մասին, որի վրա բռնագանձում է տարածվել կատարողական թերթով: Այսպիսով, հարկադիր կատարողի համար գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելն արդեն իսկ հիմք է այդ գույքի իրացումը կասեցնելու համար:

Հաջորդ հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ՝ դատական պրակտիկայում, հաճախ կիրառվող հայցի ապահովման հետևյալ միջոցն է՝ պատասխանողին գույքի տնօրինման ուղղված գործողություններ կատարել արգելելը, որը նման է գույքի վրա արգելանք դնելու հայցի ապահովման միջոցին: Գտնում ենք, որ այս երկու հայցի ապահովման միջոցների տարբերակման չափանիշը պետք է լինի դրանց կիրառման նպատակները: Գույքի վրա արգելանք դնելը հետապնդում է երկու նպատակ. առաջինը՝ հայցապահանջով բռնագանձման ենթակա գույքի պահպանումն է մինչև վերջնական դատական ակտ կայացնելը, իսկ երկրորդ նպատակը՝ վեճի առարկա հանդիսացող գույքի պահպանումն է անփոփոխ վիճակում՝ գույքային պահանջով հայցը ապահովելու համար: Ինչ վերաբերում է որոշակի գործողություններ կատարել արգելելուն՝ ապա այս հայցի ապահովման միջոցի նպատակն է պահպանել որոշակի դրություն, որը գոյություն է ունեցել մինչև դատական գործընթացը, ինչպես նաև կանխարգելել հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած անձի իրավունքների կամ օրինական շահերի հնարավոր խախտումները:

Գույքի վրա արգելանք դնելու և վեճի առարկայի հետ կապված որոշակի գործողություններ կատարելու արգելքի միջև տարբերակման երկրորդ չափանիշը դրանց առարկան է: Արգելանքը կարող է դրվել պարտապանին պատկանող գրեթե ցանկացած գույքի վրա, անկախ նրանից, հանդիսանում է այն վեճի ա-

ռարկա թե՛ ոչ: Որոշակի գործողություններ կատարելու արգելքը կարող է կիրառվել միայն վիճարկվող գույքի հետ կամ ոչ գույքային իրավունքների հետ կապված:

Եվ վերջապես, երրորդ տարբերությունը այն անձանց շրջանակն է, որոնց ուղղված է գույքի արգելանքը, և որոշակի գործողություններ կատարելու արգելքը: Գույքի նկատմամբ արգելանք դնելու պարագայում արգելվում է գործողություններ կատարել անսահմանափակ թվով մարդկանց համար, որոշակի գործողություններ կատարելու արգելքը ուղղված է միայն որոշակի թվով անձանց:

Բացի այդ, գույքի վրա արգելանք դնելը և վեճի առարկայի հետ կապված որոշակի գործողություններ կատարելու արգելքը տարբերվում են նաև իրենց բովանդակությամբ: Այսպես, համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի՝ պարտապանի գույքի կամ պարտապանի մոտ գտնվող՝ հայցվորին (պահանջատիրոջը) պատկանող գույքի վրա արգելանք դնելը ներառում է դրա գույքագրումը, գույքը տնօրինելն արգելելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելը: Որոշակի գործողություններ կատարելու արգելքը տեսականորեն կարող է ներառել վեճի առարկային վերաբերող ցանկացած գործողություն:

Գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ի տարբերություն նախկինում գործող օրենսգրքի, նախատեսում է հայցի ապահովման միջոցների ոչ սպառիչ ցանկ, ինչը նշանակում է, որ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից՝ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով չնախատեսված հայցի ապահովման միջոցներ: Ամեն դեպքում այլ հայցի ապահովման միջոցները պետք է նախատեսված լինեն օրենքով և չեն կարող հանդիսանալ գործին մասնակցող անձի կողմից առաջարկված պատահական տարբերակ: Որպես այդպիսին կարող է լինել օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 853-րդ հոդվածով նախատեսված վեճի առարկա՝ գույքի պահատվությունը (սեկվեստր): Իրավաբանական գրականության մեջ սեկվեստրը (լատ. sequestrum) սահմանվում է որպես «չեզոք միջնորդ, վստահելի անձ կողմե-

րի համար, որին նրանք ընդհանուր փոխհամաձայնությամբ փոխանցել են վիճելի գույքը»<sup>1</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 853-րդ հոդվածը նախատեսում է սեկվեստրի երկու տեսակ՝ պայմանագրային և դատական: Պայմանագրային սեկվեստրի դեպքում, երբ երկու կամ ավելի անձանց միջև գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճ է առաջացել, այդ գույքը հանձնում են երրորդ անձի, որը պարտականություն է ստանձնում, վեճը լուծվելու դեպքում, գույքը վերադարձնել այն անձին, ում դա կհատկացվի դատարանի վճռով կամ բոլոր վիճող անձանց համաձայնությամբ: Դատական սեկվեստրի դեպքում, երբ երկու կամ ավելի անձանց միջև վեճի առարկա գույքը, կարող է սեկվեստրի կարգով ի պահ հանձնվել՝ դատարանի վճռով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս դատական սեկվեստրը չի օգտագործվում իրավակիրառողների կողմից որպես հայցի ապահովման միջոց, առաջարկում ենք այն ուղղակիորեն նախատեսել ՀՀ քաղ. դատ. օրով՝ լրացնելով ՀՀ քաղ. դատ. օր. 129-րդ հոդվածը հետևյալ հայցի ապահովման միջոցով՝ վիճելի գույքը հայցվորին կամ այլ անձի պահատվության հանձնելը: Այս հայցի ապահովման միջոցի նախատեսումը հնարավորություն կտա առավելագույնս երաշխավորել այն դատական ակտերի կատարումը, որոնք ընդունվել են շարժական գույքի վեճերից բխող քաղաքացիական գործերից:

Որպես մեկ այլ հայցի ապահովման միջոց, որն ուղղակիորեն նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, կարելի է դիտարկել նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 96-րդ հոդվածով նախատեսված ալիմենտի բռնագանձումը՝ մինչև դատարանի կողմից վեճի լուծումը: Ինչպես և սեկվեստրի, այնպես էլ (մինչև դատարանի կողմից վեճի լուծումը) պատասխանողից ալիմենտի բռնագանձ-

ման դեպքում, օրենքում չկա ուղիղ նշում դրանց հայցի ապահովման միջոց հանդիսանալու վերաբերյալ: Այն, որ դրանք իրենց բնույթով, այնուամենայնիվ, հանդիսանում են հայցի ապահովման միջոցներ, հիմնավորվում են այն հանգամանքներով, որ այս միջոցները հայցի ապահովման միջոցների նման կրում են անհապաղ բնույթ, ինչպես նաև ժամանակավոր են և գործում են մինչև գործով վերջնական դատական ակտ կայացնելը: Ի տարբերություն քաղաքացիական և ընտանեկան օրենսգրքով նախատեսված վերը նշված հայցի ապահովման միջոցների՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը նշում է, որ որպես հայցի ապահովման միջոց, բացառիկ դեպքերում, գործի քննության առանձնահատկություններից ելնելով, դատարանը՝ կիրառելով հայցի ապահովման միջոց, կարող է գույքը հանձնել պետության տիրապետությանը: Գույքը, որպես հայցի ապահովում, կարող է հանձնվել պետությանը, եթե 1) առկա է հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել. 2) առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար. 3) գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկությամբ պայմանավորված՝ առկա է հավանականություն, որ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է անհնարին դարձնել կամ էականորեն դժվարացնել գույքի հետագա բռնագանձումը<sup>2</sup>:

Իրավաբանական գրականության մեջ հայցի ապահովման միջոցների ոչ սպառիչ ցանկի սահմանումը տարբեր գնահատականների է արժանացել: Այսպես, գիտնականների մի խումբ դա իրավունքների չարաշահման հնարավորություն է համարում, իսկ մյուս խումբը, ընդհակառակը, դրական է գնահատում այս կարգավորումը<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **А.В. Цихоцкий** Секвестр как вид обеспечительных мер в современном гражданском процессе // Пролог: журнал о праве /Prologue: Law Journal. 2013. N4. էջ 15:  
<sup>2</sup> Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 16.04.2020 թ. Ուժի մեջ է մտել 11.05.2020 // ՀՀ ՊՏ 2020.05.13/50 (1605). Հոդ.580. Հոդված 25, 2-րդ մաս:  
<sup>3</sup> Տե՛ս **Шварц М.З.** Обеспечение иска в новых ГПК и АПК РФ // АПК и ГПК 2002г: Сравнительный анализ и актуальные проблемы правоприменения. Материалы Всероссийской научно-практической конференции Москва 2-4 апреля 2003г. М. 2004. էջ 264; **Ткачева Н.Н.** Проблемы обеспечения иска в гражданском судопроизводстве (по материалам практики): дисс... канд. юрид. наук. Саратов, 2004. էջ 85; **Майкова Л.** Право. Грабеж под судебским прикрытием // Российская газета. 3 марта 2004 г. էջ 10:



Գտնում ենք, որ օրենսդիրի կողմից հայցի ապահովման միջոցների ոչ սպառիչ ցանկ սահմանելը արդյունավետ է, քանի որ նյութական իրավունքի հետագա զարգացումը կարող է պահանջել նոր հայցի ապահովման միջոցների նախատեսում և յուրաքանչյուր այդպիսի միջոցի համար պետք չի լինի փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Անդրադառնանք նաև հայցի ապահովման միջոցների դասակարգման հարցին: Դատավարագիտության մեջ ընդունված է առանձնացնել հայցի ապահովման միջոցների տեսակները՝ ըստ տարբեր չափանիշների: Օրինակ՝ Ն. Տկաչևան բաժանում է հայցի ապահովման միջոցները գույքի վրա արգելանք դնելու և անձին որոշակի գործողություններ կատարելը արգելելու հետ կապված հայցի ապահովման միջոցների, դրանք անվանելով ունիվերսալ հայցի ապահովման միջոցներ և այլ հայցի ապահովման միջոցներ, որոնք անվանում է «նեղ ուղղվածություն» ունեցող հայցի ապահովման միջոցներ<sup>4</sup>: Ըստ բնույթի հայցի ապահովման միջոցները կարող են դասակարգվել գույքային և ոչ գույքային հայցի ապահովման միջոցների: Գույքային և ոչ գույքային բնույթի մասին են խոսում արդեն իսկ այդ միջոցների անվանումները, օրինակ՝ գույքային է գույքի վրա արգելանք դնելը, ոչ գույքային՝ պատասխանողին կամ այլ անձի որոշակի գործողություններ կատարել արգելելը կամ գույքի իրացման կասեցումը՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում:

Հայցի ապահովման միջոցների դասակարգման մեկ այլ չափանիշ է հանդիսանում անձանց շրջանակը, որոնց դեմ կիրառվում են այդ միջոցները: Այսպես, տարբերակում են հայցի ապահովման միջոցներ, որոնք ուղղակիորեն կիրառվում են պատասխանողի դեմ (ՀՀ Քաղ. դատ. օր-ի 129-րդ հոդվածի 2-րդ մաս) և հայցի ապահովման միջոցներ, որոնք կիրառվում են այլ անձանց դեմ, այդ թվում նաև հայց-

վորի դեմ (ՀՀ Քաղ. դատ. օր-ի 129-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 7-րդ մասեր):

Վերջապես, հնարավոր է հայցի ապահովման միջոցները դասակարգել նաև հաշվի առնելով դրանց կիրառման փուլը՝ պահանջը դատարան ներկայացնելուց առաջ (հայցի նախնական ապահովման միջոցներ) և պահանջը դատարան ներկայացնելու հետ միաժամանակ կամ դատավարության ցանկացած փուլում՝ առաջին ատյանի դատարանում (հայցի ապահովման միջոցներ): Կախված հայցի ապահովման ծավալից՝ հնարավոր է դրանք դասակարգել պահանջի ամբողջ ծավալով կիրառվող հայցի ապահովման միջոցների և պահանջի մասնակի բավարարման ապահովման միջոցների<sup>5</sup>: Վ.Վ.Կոտլյարովան առաջարկում է հայցի ապահովման միջոցները դասակարգել կախված դատավարության վարույթի տեսակից՝ հայցի ապահովման միջոցներ, կիրառվող հայցային վարույթում և հայցի ապահովման միջոցներ, կիրառվող այլ վարույթներում<sup>6</sup>:

Քանի որ հայցի ապահովման միջոցները տարբեր են նաև իրենց արտաքին դրսևորումով, այսինքն՝ ձևով, առաջարկում ենք դրանք ըստ ձևի դասակարգել 3 տեսակի՝ 1. *Արգելող բնույթի հայցի ապահովման միջոցներ*, 2. *Պարտավորեցնող բնույթի հայցի ապահովման միջոցներ*, 3. *Սահմանափակող բնույթի հայցի ապահովման միջոցներ*: Արգելող են համարվում այն հայցի ապահովման միջոցները, որոնք անձին արգելում են որոշակի գործողությունների կատարում, օրինակ՝ պատասխանողին և այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը որպես հայցի ապահովման միջոց: Պարտավորեցնող են համարվում հայցի ապահովման այն միջոցները, որոնք պարտավորեցնում են անձին՝ կատարել որոշակի գործողություն: Օրինակ՝ պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը: Սահմանափակող են համարվում հայցի ապահով-

<sup>4</sup> Տե՛ս **Ткачева Н.Н.** Проблемы обеспечения иска в гражданском судопроизводстве (по материалам практики): Дисс... канд. юрид. наук. Саратов, 2004. էջ 26:  
<sup>5</sup> Տե՛ս **Фомичева Р.В.** Меры по обеспечению исполнения решений в арбитражном процессе: дисс...канд.юрид.наук.Саратов. 2007. էջ 19:  
<sup>6</sup> Տե՛ս **Котлярова В.В.** К вопросу об основания классификации обеспечительных мер в арбитражном процессе//Вестник Самарского государственного университета. 2014.էջեր 315-319:

ման այն միջոցները, որոնք սահմանափակում են անձի որոշակի իրավունքները, օրինակ՝ գույքի տնօրինման իրավունքը: Հայցի ապահովման միջոցների այս տեսակին կարելի է դասել գույքի վրա արգելանք դնելը, քանի որ այն սահմանափակում է անձի՝ գույքը իր հայեցողությամբ տնօրինելու, իսկ որոշակի դեպքերում նաև օգտագործելու և տիրապետելու իրավունքները:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 1-ին հոդվածը (օրենսգրքի գործողության ոլորտը) սահմանում է, որ օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են ՀՀ սնանկության դատարանում սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» և «Սնանկության մասին» ՀՀ օրենքներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր վերը նշված վարույթների շրջանակում ևս կիրառվում են հայցի ապահովման միջոցներ, նպատակահարմար ենք գտնում, քաղաքացիական դատավարությունում նախատեսված հայցի ապահովման միջոցները դասակարգել՝ կախված քննվող գործերի տեսակներից՝ 1. Քաղաքացիական գործերով կիրառվող հայցի ապահովման միջոցներ, 2. Սնանկության գործերով կիրառվող հայցի ապահովման միջոցներ, 3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցի ապահովման միջոցներ:

Վերը նշված դասակարգման մեջ չենք ընդգրկել վարչական և քրեական դատավարությունների ընթացքում կիրառվող հայցի ապահովման միջոցները, քանի որ դրանց կիրառման կանոնները կարգավորված են համապատասխանաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչը դուրս է մեր հետազոտման առարկայից:

Օրենսդիրը նախատեսում է, որ անհրաժեշտության դեպքում, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց: Այս կամ այն հայցի ապահովման միջոցի ընտրությունը, բնականաբար, կապված է հայցի առարկայի հետ: Օրինակ՝ եթե հայցի առարկա է հանդիսանում ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելը, ապա բնականաբար որպես հայցի ապահովման միջոց ճիշտ է կիրառել պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը, կամ եթե ներկայացվել է գումարի բռնագանձման հայց՝ ապա պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով բոլոր վերը նշված առաջարկները ուղղված ՀՀ քաղ. դատ. օր.-ի 129-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխությանը, առաջարկում ենք այն վերջնական ձևակերպել այսպես. *հայցի ապահովման միջոցներն են՝ 1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը. 2) պատասխանողին և այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը 3) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը. 4) վիճելի գույքը հայցվորի կամ այլ անձի պահպալության հանձնելը. 5) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը. 6) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:*



**ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԼՅԱՆ**

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ՖԻԿՏԻՎՆԵՐԻ ԴԵՐԸ  
ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

«Ֆիկցիա» բառը արդի հայերեն բացատրական բառարաններում բնորոշվում է որպես պատրանք, մտացածին՝ անիրական բան<sup>1</sup>: Ավելին, ըստ լեզվաբանական իմաստի ֆիկցիան այնպիսի մի բան է, որն իր ամրագրման պահից զուրկ է իրականությունից<sup>2</sup>: Օտարերկրյա բառերի բառարանում ֆիկցիան (*լատ. fictio*) բնորոշվում է՝ 1) հորինվածք, մտացածին բան, հնարովի բան, երևակայության արգասիք, 2) եղանակ, ըստ որի իրականությունը պայմանավորված է որոշակի պայմանական ֆորմուլայով<sup>3</sup>:

Հաճախ ֆիկցիան դիտարկվում է կենցաղային մակարդակում, որն ընկալվում է որպես ամենապարզ սուտը: Եթե փորձենք հարց տալ թե ինչ է ֆիկցիան, ապա ամենայն հավանականությամբ մարդկանց մեծ մասը կասի, որ այն սուտն է, ոչ իրականը, ապատեղեկատվությունը և այլն: Այդուհանդերձ, ինչպես կտեսնենք ստորև, ֆիկցիան ոչ միայն սուտը չէ, այլև ունի մի շարք օգտակար հատկություններ, որոնք օգտագործվում են իրավական կարգավորումներում և առհասարակ կյանքի տարբեր ոլորտներում: Այս տեսակետից մենք կվերցնենք իրավունքի ճյուղը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական ֆիկցիաներն օժտված են կարևոր դերով իրավահարաբերություններ

ի կարգավորման գործընթացում: Իրավական ֆիկցիաները հիմնականում ուսումնասիրվում և հետազոտվում են իրավունքի կոնկրետ ճյուղերում: Որոշ հեղինակներ ֆիկցիաներին վերաբերվում են թշնամաբար, համարելով, որ դրանք անհրաժեշտ չեն և վնասակար են իրավաբանության համար<sup>4</sup>: Հեղինակների մեկ այլ խումբ բացառում է ֆիկցիաների օգտագործումը իրավունքի տարբեր ճյուղերում, քանի որ ըստ նրանց, դրանք ճշմարիտ չեն և տեղ չունեն ճշմարիտ իրավաբանական գիտության մեջ: Հիմնական մոտեցումն այն է, որ ֆիկցիան անիրականը դարձնում է իրական և հակառակը, ուստի այն ամենասովորական սուտն է<sup>5</sup>: Անշուշտ, դժվար է համաձայնվել այդ մոտեցումների հետ, քանի որ ֆիկցիան և սուտը անհամատեղելի հասկացություններ են: Ֆիկցիայի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ ճշմարտությունից շեղումը թույլատրվում է բոլորի կողմից և որևէ մեկը դրա հետ կապված չի խաբվում և այն կոչված է հնարավորինս արդյունավետ կարգավորելու կոնկրետ իրավահարաբերության մասնակիցների շահերը և հանրության շահը լայն իմաստով: Օրինակ, Օ. Ա. Բարշովան նկատում է, որ իրավական ֆիկցիան իրավունքի նորմ է, որը կոչված է կարգավորելու օբյեկտիվ իրականությունը<sup>6</sup>: Լ. Ա. Դուշակովան, իր հերթին, նշում է, որ իրավա-

<sup>1</sup> Տե՛ս **Աղայան Է.Դ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Հայաստանի հրատ., 1976, էջ 1605:  
<sup>2</sup> Տե՛ս **Танимов О.В.**, Теория юридических фикций, М., изд-во Проспект. 2016. С. 6.  
<sup>3</sup> Տե՛ս Современный словарь иностранных слов: ок. 20000. М., Рус. яз. 1999. С. 647.  
<sup>4</sup> Տե՛ս **Дормидонтов Г. Ф.** Классификация явлений юридического быта, относимых к случаям применения фикций. Казань. Типо-литография Имп. ун-та, 1985. С. 30.  
<sup>5</sup> Տե՛ս **Дормидонтов Г. Ф.** նշված աշխատ. էջ 137.  
<sup>6</sup> Տե՛ս **Баршова О. А.** Понятие и виды юридических фикций // Материалы XVIII международной научной конференции студентов аспирантов и молодых учёных Ломоносов. М., 2011.  
[https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov\\_2011/1371/31579\\_5a09.pdf#25.03.2021/](https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2011/1371/31579_5a09.pdf#25.03.2021/)

կան ֆիկցիան համապատասխան իրավական աղբյուրներում ամրագրված և իրավաբանական պրակտիկայի կողմից օգտագործվող հատուկ բնույթի իրավական նորմ է, որի միջոցով իրականությանը չհամապատասխանող կամ դրան հակասող իրավիճակը նորմատիվորեն հռչակվում է գոյություն և իրավաբանական նշանակություն ունեցող, որի նպատակը հասարակական հարաբերություններում անհատությունների հաղթահարումն է<sup>7</sup>:

Յու. Գ. Ջուլեվը իր հերթին նշում է, որ իրավական ֆիկցիաները իրենցից ներկայացնում են յուրահատուկ իրավունքի նորմեր<sup>8</sup>:

Ֆիկցիաների անհրաժեշտության և օգտակարության մասին խոսել են նաև այլ հեղինակներ<sup>9</sup>:

Իրավական ֆիկցիաներն, անկասկած, դրական դեր են խաղում նորմաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում: Նրանք ապահովում են հասարակական շահի պահպանությունը և նպաստում են տնտեսական շրջանառության, դատավարական իրավահարաբերությունների և իրավունքի այլ ճյուղերի արդյունավետ կարգավորումներին:

Հարկ է նշել, որ իրավագետներից շատերն իրավական ֆիկցիան համարում են հատուկ բնույթի իրավական փաստ<sup>10</sup>, փաստից բխող ենթադրություն, որը չի համապատասխանում իրականությանը<sup>11</sup>: Որոշներն իրավական ֆիկցիան դիտարկում են որպես իրավական հատուկ նորմ, ըստ որի ֆիկցիան ամրագրվում է համապատասխան իրավական նորմերում և օգտագործվում է իրավակիրառ պրակտիկայի կողմից<sup>12</sup>: Այսուհանդերձ ինչ է իրավական ֆիկցիան:

**Քննարկվող թեմայի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում բացահայտել իրավական ֆիկցիայի հատկանիշները.**

1. Իրավական ֆիկցիայի բացահայտման հիմքում, նախ և առաջ, պետք է դնել՝ «ենթադրություն» եզրույթը: Ընդ որում, այստեղ հարկ է ընդգծել, որ ենթադրություն բառը որևէ կապ չունի իրավական կանխավարկածի հետ: Այսինքն, իրավական ֆիկցիան իրականությանը չհամապատասխանող փաստի վերաբերյալ ենթադրություն է: Իրավական ֆիկցիայի հիմնական հատկանիշը իրականությանը չհամապատասխանելն է, որն ընդգծում է դրա ունիկալ բնույթը: Օրենսդիրն իր նորմաստեղծ գործունեության ընթացքում, մասնավորապես տարբեր տեսակի իրավական ակտեր ընդունելիս, իրավական ֆիկցիան ներառելով դրանց մեջ, գիտակցաբար փոփոխում է իրականությունը, ոչ իրական իրավիճակը ներառելով իրավական նորմում, որի արդյունքում այն ձեռք է բերում իրականության բնույթ, քանի որ իրավական նորմերն ունեն համապարտադիր և իշխանական բնույթ:

2. Իրավական ֆիկցիան նորմատիվ բնույթի մտահանգում է, որով իրականում գոյություն չունեցող իրավիճակը ճանաչվում է գոյություն ունեցող (կամ հակառակը)<sup>13</sup>: Իրավական ֆիկցիան իրականությանն առավելապես չհամապատասխանող մտահանգում է: Իրավական ֆիկցիային ներհատուկ է գոյություն չունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն ունեցող կամ գոյություն ունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն չունեցող<sup>14</sup>: Օրինակ, երբ անձը օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել վարչական մարմնին որևէ իրավունք տրամադրելու խնդրանքով և վարչական մարմինը այդ դիմումի հիման վրա

<sup>7</sup> Տե՛ս **Душаклова Л. А.** Правовые фикции: дис. ... канд. юрид. наук. Волгоград, 2004. С. 28.

<sup>8</sup> Տե՛ս **Зуев Ю. Г.** Презумпции в уголовном праве: дис. ... канд. юрид. наук. Ярославль, 2000. С. 86.

<sup>9</sup> Տե՛ս **Волков А. В.** Принцип недопустимости злоупотребления гражданским правом в законодательстве и судебной практике. М., 2011. С. 503. **Зайцев И.** Правовые фикции в гражданском процессе // Российская юстиция. 1997. N 1. С.35-36; **Кузнецова О. А.** Специализированные нормы российского гражданского права: теоретические проблемы. Екатеринбург, 2007. С.3-4.

<sup>10</sup> Տե՛ս **Панько К.К.** Фикции в уголовном праве и правоприменении. Воронеж: Истоки, 2010. С. 453.

<sup>11</sup> Տե՛ս **Зацепина О.Е.** К вопросу о сущности правовой фикции // Пролог: журнал о праве. 2017. N 2. С. 5

<sup>12</sup> Տե՛ս **Душаклова Л.А.** նշված աշխտ. էջ.21.

<sup>13</sup> Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն/ Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան**, Լուսաբաց հրատ., 3-րդ լրամշակված հրատ., Երևան, 2018, էջ 382:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

հարուցված վարչական վարույթով, օրենքով սահմանված ժամկետում, որևէ որոշում չի կայացրել, ապա վարչական ակտը համարվում է ընդունված և անձը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված): Մեկ այլ օրինակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն, դատավարության մասնակիցը պարտավոր է դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իր հասցեի, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է այն հասցեով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, որով դատավարության մասնակիցը վերջին անգամ ծանուցվել է, և համարվում է հանձնված, թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել: Վկայակոչված օրինակներում ակնհայտ է, որ առաջին դեպքում վարչական մարմինը, թեև չի ընդունել վարչական ակտ, սակայն օրենսդիրը գիտակցաբար ճանաչում է, որ այն ընդունվել է և անձին պատգամել է դրսևորել այնպիսի վարքագիծ, ինչպիսին կդրսևորեր, երբ վարչական ակտն ընդունված լիներ հոգուտ իրեն: Երկրորդ օրինակում ևս ակնհայտ է, որ թեև դատավարության մասնակիցը (հասցեատերը) փաստացի չի ստացել ծանուցագիրը, սակայն օրենսդիրը գիտակցաբար ճանաչել է այն ստացված:

3. Իրավաբանական ֆիկցիան նորմատիվ բնույթի մտահանգում է, քանի որ այն կազմում է իրավական նորմի բովանդակությունը: Գրականության մեջ առավել տարածված է այն մոտեցումը, որ իրավական ֆիկցիան իրավաբանական տեխնիկայի միջոց է, սակայն, ինչպես իրավական կանխավարկածը, իրավական ֆիկցիան նույնպես կարող է հանդես գալ որպես իրավաբանական տեխնիկայի միջոց միայն իրավաստեղծ գործունեության ընթացքում, իսկ իրավական կարգավորման հիմնական փուլերում հանդես է գալիս որպես իրավական նորմ, քանի որ այն ամրագրվում է իրավունքի կոնկրետ աղբյուրում:

4. Իրավաբանական ֆիկցիաները խիստ նպատակային դրույթներ են, քանի որ օրենսդիրն իրավական ֆիկցիայի է դիմում ծայրահեղ դեպքերում, երբ իրավական խնդիրը կարող է լուծվել միայն իրավական ֆիկցիա նախատեսելով: Վերը բերված օրինակներում վարչարարության արագ և արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը կգործի կանխատեսելի և ողջամիտ ժամկետում, դրանով իսկ կատարելով իր պոզիտիվ պարտականությունը անձի հանդեպ: Այս նպատակին հասնելու համար օրենսդիրը, որպես վարչարարության ընդհանուր ժամկետ սահմանել է առավելագույնը երեսուն օր և եթե այդ ժամկետում վարչական մարմինը դրսևորում է անգործություն, ապա անձի իրավունքը համարվում է տրամադրված: Հաջորդ օրինակում, արդարադատության արդյունավետությունն ապահովելու նպատակով օրենսդիրը համարում է դատական ծանուցագիրը հանձնված, թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել:

5. Իրավական ֆիկցիաներն անհերքելի մտահանգումներ են: Բանն այն է, որ օրենսդիրը իրականությանը չհամապատասխանող մտահանգմանը գիտակցաբար տվել է իրավական ուժ: Ուստի եթե դրան զուգահեռ նախատեսվի նաև իրավական ֆիկցիան հերքելու հնարավորություն, ապա կարժեգրկվի իրավական ֆիկցիայի նշանակությունը և հնարավոր չէր լինի լուծելու իրավական որոշակիության կամ սոցիալական արժեքների հատուկ պաշտպանության խնդիրը<sup>15</sup>:

*Կարևորված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական ֆիկցիան հանդես է գալիս նաև որպես իրավահարաբերությունների կարգավորման գործուն և ճկուն մեխանիզմ:*

Ինչպես իրավագիտորեն նշում է ռուս իրավագետ Տ.Վ. Կաշանինան, օրենսդիրը իրավական ֆիկցիաները ներդնում է օրենսդրության մեջ ոչ լավ կյանքից: Իրավական կարգավորումների այլ տարբերակները համարվում են առավել ծախսատար (ժամանակի կամ նյութական առումներով) և այդ պատճառով ոչ էֆեկտիվ են<sup>16</sup>:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 382:

<sup>16</sup> Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника. М., НОРМА: ИНФРА-М, 2011. Ст. 200-201.

Ֆիկցիաները դրանք յուրահատուկ փրկության օղակներ են, որոնք օրենսդիրը տալիս է իրավունքի սուբյեկտներին, որպեսզի լուծվեն կոնկրետ իրավական իրավիճակներ<sup>17</sup>:

Իրավահարաբերությունների կարգավորման ընթացքում բազմաթիվ են դեպքերը, երբ իրավական անվտանգությունից ելնելով օրենսդիրը այս կամ այն փաստի գոյությունը կամ բացակայությունը պետք է ճանաչի, որպեսզի հնարավոր լինի անձանց իրավունքների արդյունավետ իրացումը: Բացասել իրավական ֆիկցիաները կարող է բերել նրան, որ ընդհուպ կարող է կանգ առնել կոնկրետ իրավահարաբերության շրջանառությունը: Օրինակ, որպեսզի ծագեն ժառանգական իրավահարաբերություններ, ապա պարտադիր պետք է լինի անձի մահը: Այլ կերպ ասած, քանի դեռ անձը չի մահացել, ապա նրան պատկանող գույքը և այլ արժեքները չեն կարող համապարփակ իրավահաջորդությամբ անցել այլ անձանց: Իսկ ինչ անել, երբ մենք չգիտենք անձը մահացել է թե՞ ոչ: Զորօրինակ անձի վերաբերյալ տևական ժամանակ առկա չէ որևէ տեղեկություն:

«Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 1184-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անձի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն) միայն այդ անձի մահվան դեպքում: Օրենսգրքի 1187-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանով քաղաքացուն մահացած ճանաչելն առաջացնում է նույն իրավական հետևանքները, ինչը՝ քաղաքացու մահը:

Ակնհայտ է, որ այս դեպքում օրենսդիրը դիմել է իրավական ֆիկցիայի օգնությանը՝ ելնելով այն բանից, որ չկանգնի կամ չխոչընդոտվի քաղաքացիա-իրավական հարաբերությունների շրջանառությունը, մասնավորապես, որ անձի գույքը համապարփակ իրավահաջորդությամբ անցնի այլ անձանց և այլն: Նման կարգավորում չտալն անխուսափելիորեն կարող էր առաջացնել ծանր հետևանքներ ինչ-

պես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներին, այնպես էլ հանրությանը՝ լայն իմաստով: Հայտնի է, որ անգամ սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքում սեփականատիրոջ իրավունքներն ու պարտականությունները չեն դադարում, քանի դեռ այլ անձինք ձեռք չեն բերել այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը (Օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն, գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը ոչ միայն իրավունք է այլև պարտականություն և այդ պարտականությունը կատարելով է, որ քաղաքացիա-իրավական սուբյեկտների և հանրության շահերին վնաս չի պատճառվում (բազմաբնակարան շենքում բնակարանի նկատմամբ հոգ տանելը, առավել վտանգի աղբյուրը կառավարելը և այլն):

Այսպիսով՝ վերոգրյալից ակնհայտ է, որ առանց իրավական ֆիկցիաների իրավական կարգավորումները ոչ միայն կդժվարանան, այլև մի շարք դեպքերում դրանք ուղղակի գոյություն չեն ունենա, ինչն էլ իր հերթին կարող է բերել իրավունքի սուբյեկտների շահերի ոտնահարման, ինչպես նաև իրավական անվտանգության խաթարմանը: Հասարակական հարաբերություններն օր-օրի զարգանում են ներառելով տարբեր ոլորտներ և դրական դինամիկայի կողքին առաջանում են տարբեր տեսակի իրավական խնդիրներ, որոնք անհնար է լուծել առանց իրավական ֆիկցիաների: Այսինքն, օրենսդիրը ոչ բոլոր դեպքերում է կարող պարզել օբյեկտիվ իրականությունը և դրա հիման վրա կազմակերպել իր իրավաստեղծ գործունեությունը: Ճշմարտության (որը հիմքն է արդարության) պարզումից հետո է, որ օրենսդիրը կարգավորումներ է տալիս հասարակական հարաբերություններին: Այս տեսակետից վերացական ճշմարտությունը, որն ընդունելի է բոլորի համար, հենց այն գործիքն է, որի միջոցով ապահովվում է հասարակական հարաբերությունների անխափան շրջանառությունը:

<sup>17</sup> Տե՛ս **Зайцев И.** նշված աշխատ. էջ С.36-37:

**ԶԱՎԵՆ ՍՄՐԱՏՅԱԼ**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱԳՈՂ ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՆԵՂԻՐՆԵՐԸ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ**

Մարդու իրավունքների երաշխավորման և ժողովրդավարության հիմնասյունների ամրացման նպատակով կարևոր նախապայման է պետական այնպիսի կառուցակարգերի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի մարդու իրավունքների երաշխավորման ոլորտում պետական ռազմավարության անարգել իրացմանը:

Իրավունքի գերակայության, անձի պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման և անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի ընտրության հնարավորության երաշխավորման գործում առանցքային դերակատարում ունի վարչական մարմինների և փաստաբանների միջև կայուն արդյունավետ համագործակցության ստեղծումը:

Տեղեկատվության հասանելիությունը ժողովրդավարության առարկայական նախապայմաններից մեկն է, որն ենթակա է երաշխավորման պետական մարմինների կողմից:

Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:<sup>1</sup>

Ընց այս հայեցակարգի իրացմանն է ուղղված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում, 3-րդ կետում և

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներում գետեղված իրավական դրույթների օրենսդրական ամրագրումները, ինչպես նաև այս նորմերի չարաշահումների դեմ հակազդման և այլոց իրավունքների չտոնահարման տրամաբանությամբ պայմանավորված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայով սահմանված անձնական տվյալների և օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող այլ տվյալների գաղտնիության երաշխիքները:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ **տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:**

Ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ փաստաբանը իրավունք ունի՝ դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տասնօրյա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականին ՍԴՈ-1010 որոշումը:

Ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում: Փաստաթղթերի (տեղեկությունների) տրամադրման մերժումը պետք է տրվի գրավոր և պատճառաբանված: Սույն կետում նշված դեպքում փաստաբանից կարող է գանձվել փաստաթղթերի (տեղեկությունների) կամ դրանց պատճենների տրամադրման համար վճար, որը չի կարող գերազանցել դրա պատրաստման ծախսերը, եթե օրենսդրությամբ վճարման այլ չափ նախատեսված չէ:

Անդրադառնալով տեղեկատվության հայցելու և ստանալու անձանց իրավունքի բովանդակությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ տեղեկություն որոնելու և ստանալու իրավունքը հանդիսանում է արտահայտվելու ազատության իրավունքի բովանդակությունը կազմող տարր, որը ներառում է հասարակության, ինչպես նաև անհատի հիմնական իրավունքը՝ հանրային շահի վերաբերյալ փնտրել և ստանալ տեղեկություն:<sup>2</sup>

Վերոգրյալ իրավակարգավորման նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չափորոշիչներին համահունչ մեկնաբանման արդյունքում կարելի է փաստել, որ հիշյալ իրավական դրույթը պարունակում է հստակ չափորոշիչներ, որոնց առկայության պարագայում փաստաբանը կարող է ձեռք բերել իրեն օրենսդրությամբ տրամադրված իրավունքն իրացնելու հնարավորություն, իսկ այդ պայմաններից մեկի բացակայությունը, *per se* («ինքնին»), հանգեցնում է նշյալ իրավունքի իրացման հնարավորության կորստի:

Այսպես՝ վերոհիշյալ իրավանորմով ամրագրված իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Վերոգրյալ իրավանորմի տրամաբանությունից բխում է, որ դրանով փաստաբաններին տրվող իրավունքը հնարավոր է իրագոր-

ծել բացառապես իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, որը պայմանավորված է վերջիններիս տվյալ իրավահարաբերություններում իրավունքի հատուկ սուբյեկտ հանդիսանալու հանգամանքով:

Հատկանշական է, որ հատուկ սուբյեկտի, որպես այդպիսին հանդիսանալու կարգավիճակի կարևորագույն տարր է հանդիսանում այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակի առկայությունը:

Այսինքն, եթե փաստաբանն օգտվելով իր օրենսդրորեն նախատեսված իրավունքից որևէ վարչական մարմնից պահանջում է ներկայացնել որոշակի նյութեր կամ տեղեկատվություն, ապա միևնույն ժամանակ կաշկանդված լինելով իր որպես հատուկ սուբյեկտ հանդես գալու օրենսդրական պահանջով չի կարող կամայական գործել և սուբյեկտիվ իրավունքի չարաշահմամբ ստանալ իրեն անհրաժեշտ նյութերը, ասել է թե չի կարող օրենսդրական այս ամրագրումն օգտագործել իր ենթադրյալ իրավունքները պաշտպանության նպատակով, քանի որ հիշյալ իրավանորմը հստակ պարունակում է «իրավաբանական օգնություն ցույց տալու համար» ամրագրումը, որի տրամաբանությունը կայանում է այլոց իրավունքների պաշտպանության մեջ

Որպես օրինակ, կարելի է դիտարկել մի իրավիճակ, երբ քաղաքացին, որն ունի փաստաբանական գործունեության արտոնագիր, անձնական գործով դիմում է վարչական մարմին և խնդրում իրեն տրամադրել իր հետ առնվող նյութերը (օրինակ, վարչական մարմնին պատկանող տեսանկարահանող սարքերի միջոցով ֆիքսված փաստաբանի տրանսպորտային միջոցից կատարված հափշտակության դեպքը, կամ իր տրանսպորտային միջոցի վթարը ֆիքսած տեսագրությունը):

Վերոգրյալի լույսի ներքո տրամաբանական է, որ այլոց իրավունքների պաշտպանության նպատակի հիմնավորման բեռը ըստ էության պատկանում է հենց փաստաբանին, իսկ դրա չիմնավորման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների վրա հասնելու ռիսկը կրում է հենց ինքը, որպիսի հանգամանքով

<sup>2</sup> Տե՛ս MAGYAR HELSINKI BIZOTTSÁG v. HUNGARY գործով Եվրոպական դատարանի 08.11.2016 թվականի վճիռը, կետ 142:



պայմանավորված, որպես իրավական հետևանք չփարատված կասկածները մեկնաբանվում են ի վնաս իրեն:

Ավելին՝ նշյալի համատեքստում, մեր կարծիքով, ի հայտ է գալիս ևս մեկ իրավական հիմնահարց, այն է՝ արդյո՞ք փաստաբանն այլ անձի իրավունքների պաշտպանության նպատակով կարող է հայցել նյութեր անկախ վերջինիս կամահայտությունից, թե փաստաբանի այդ իրավունքից օգտվելու հնարավորությամբ օժտվելուն ուղղակի կապի մեջ է ներկայացվող սուբյեկտի կամահայտությունից:

Վերոգրյալ հիմնախնդրի իրավական լուծումը թեև չունի օրենսդրական ամրագրում, սակայն պայմանավորված է տնօրինականության սկզբունքի տրամաբանությամբ, իսկ տնօրինչականության սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է դիսպոզիտիվության սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, այսինքն՝ անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել փաստաբանին, իրականացնել, թե չիրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել պահանջների առարկան, ծավալը, հիմքը և այլն:<sup>3</sup>

Այսինքն, անձն է փաստաբանին օժտում իր իրավունքների պաշտպանության նպատակով այս կամ այն վարչական մարմին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով դիմելու իրավազորությամբ, որպիսի պայմաններում հիշյալ հանգամանքի ապացուցման բեռը ևս կրում է հարցումը կատարած փաստաբանը: Որպես այդ վիճելի փաստը հիմնավորող ապացույց կարող է հանդես գալ ներկայացվողի անունից փաստաբանին տրված լիազորագիրը կամ իր իրավունքների պաշտպանության խնդրանք-

գրությունն ուղղված փաստաբանին (օրինակ՝ հանրային պաշտպանի ինստիտուտի առնչությամբ անձը դիմում է ներկայացնում փաստաբանների պալատ՝ խնդրելով իրեն անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերել):

Հիշյալ փաստական հանգամանքի ապացուցման գործընթացի անցնելուց հետո միայն կարող է քննարկման առարկա դարձվել հայցվող տեղեկատվության կամ նյութի տրամադրման թույլատրելիության հարցը, մասնավորապես՝ եթե հայցվող նյութը կամ տեղեկատվությունն իրենում պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ապա ՀՀ Սահմանադրությամբ և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով սահմանված անձնական տվյալների գաղտնիության երաշխիքներից ելնելով վերջինիս պահանջը ենթակա է մերժման:<sup>4</sup>

Վերոգրյալ չափորոշիչներին համապատասխան, և հիշյալ իրավական վերլուծությունների հայեցակարգի տրամաբանության մեջ ներառվող դիմումները, որոնցով հայցվող թույլատրելի նյութ կամ տեղեկատվություն ենթակա են վարչական մարմնի կողմից բավարարման:

Այն դեպքում, երբ վարչական մարմինը այս կամ այն պատճառով որոշում է կայացնում մերժել փաստաբանի պահանջը, ապա դրա վերաբերյալ պետք է կայացնի գրավոր վարչական ակտ, դրանում նշելով մերժման բոլոր պատճառները, այն դեպքում երբ վարչական մարմինը մերժում է դիմումը, առանց որևէ իրավական և փաստական պատճառաբանվածության, ապա հիշյալ վարչական ակտը չի պարունակի իրավական որոշակիության և հիմնավորվածության սկզբունքների չափորոշիչներին, այսինքն կայացված կհամարվի նյութական իրավունքի կոպտագույն խախտմամբ, ինչը կհանգեցնի հիշյալ վարչական ակտի ոչ իրավաչափ լինելուն:

Միաժամանակ, քննարկման առարկա դարձնելով «օրենքով պահպանվող գաղտնիք» եզրույթը, կարելի է փաստել, որ նշյալ իրավա-

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականին թիվ ՍԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով կայացված նախադեպային որոշումը:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականին թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործով կայացված նախադեպային որոշումը:

կան կատեգորիայի ներքո կարելի է հասկանալ թե՛ օրենքով ուղղակիորեն ամրագրում ստացած դեպքերը, երբ արգելվում է կոնկրետ տեղեկատվություն փոխանցում (որպես օրինակ, կամ առանց իրավական հիմքի այլոց անձնական տվյալների հավաքագրումը և մշակումը, կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տարածումը, կամ հետաքննական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության կամ նյութի տարածումը), թե՛ այն դեպքերը, որոնց պարագայում առկա չէ օրենսդրական հստակ ամրագրում, սակայն պահանջվող նյութերի տարածումը աներկբա կվնասի պետության անվտանգությանը, ինչպես նաև պետական գերակա շահին:

Պետական մարմինների կողմից տեղեկատվության կամ հայցվող նյութի տրամադրման մերժման վերաբերյալ իր դիրքորոշումն է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանն իր 30.11.2006 թվականին թիվ 3-2316(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված նախադեպային որոշմամբ: Ի մասնավորի, ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է հետևյալը. մերժելով անձին տեղեկատվության տրամադրումը խախտվում է նրա տեղեկատվություն ստանալու իրավունքը, որը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով:

Այն դեպքում, երբ պահանջվող տեղեկատվությունը կամ նյութը անհրաժեշտ է այլ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, ապա վարչական մարմնի կողմից այդ տեղեկատվության կամ նյութի չտրամադրումով խախտվում են ոչ միայն անձի տեղեկատվություն ստանալու իրավունքն, այլ նաև դատական և պետական մարմինների առջև արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հստակ արձանագրել է, որ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապն-

դած շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: (...)

Վերը նշված նորմերի պահանջները հաշվի առնելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբանը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կամ կազմակերպություններից կարող է փաստաթղթեր պահանջել և ստանալ ոչ միայն կոնկրետ գործով որպես ներկայացուցիչ կամ պաշտպան հանդես գալու ժամանակ, այլ նաև օրենքով չարգելված ցանկացած այլ ձևով իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում:<sup>5</sup>

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները հանգում ենք հետևյալին.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վարչական մարմնին դիմելու կապակցությամբ վարչական մարմնի կողմից փաստաբանի դիմում-պահանջը ենթակա է բավարարման կամ մերժման հետևյալ հարցերի հաջորդական պարզումից հետո: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ հարցադրումը պարզվում է, եթե նախորդ հարցի պարզմամբ արձանագրվել է, որ առնվազն այդ մասով հարցումը համապատասխանում է օրենսդրական ամրագրմամբ պայմանին:

Քայլ առաջին՝ վարչական մարմինը պետք է պարզի, արդյո՞ք անձը, ով դիմել է վարչական մարմնին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, հանդիսանում է այդ իրավական դրույթով նախատեսված չափանիշներին համապատասխանող հատուկ սուբյեկտ, թե ոչ:

Քայլ երկրորդ՝ վարչական մարմինը պետք է պարզի, արդյո՞ք անձը, ում իրավունքների պաշտպանության նպատակով փաստաբանը դիմել է վարչական մարմնին, օրենսդրությամբ իրեն տրված տնօրինչականության սկզբունքի հայեցակարգով պայմանավորված՝ համաձայն է իր իրավունքների պաշտպանության այդ եղանակին, թե ոչ:

Քայլ երրորդ՝ վարչական մարմինը պետք է պարզի, արդյո՞ք փաստաբանի կողմից որևէ անձի կամ անձանց շրջանակի իրավունքների պաշտպանության նպատակով հայցվող տեղե-

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2006 թվականին թիվ 3-2316(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված նախադեպային որոշումը:

կատվության կամ նյութի տրամադրումն արգելված է օրենքով, թե ոչ: Այսինք՝ վարչական մարմնի վրա դրված է պարտավորություն պարզելու, արդյո՞ք պահանջվող տեղեկատվության կամ նյութի տրամադրումը ունեւորում է այլոց իրավունքները և օրինական շահերը, թե ոչ, ինչպես նաև արդյո՞ք պահանջվող տեղեկատվության կամ նյութի տրամադրումը կվնասի հանրային և պետական շահին:

Իրավիճակն ավելի պարզեցված է այն դեպքերի համար, երբ տեղեկատվությունը կամ նյութը հայցվում է ոչ թե «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-

րդ կետի հիմքով, այլ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի հիմքով, քանի որ տվյալ նորմը չի պահանջում հատուկ սուբյեկտի և այլոց իրավունքների պաշտպանության նպատակի պարտադիր առկայություն: Միևնույն ժամանակ, նշյալ հիմքով տեղեկատվության կամ նյութի ստանալու գործընթացը կաշկանդված է մարդու իրավունքների և պետական գերակա շահի պահպանման անհրաժեշտությամբ, որպիսի պայմաններում հիշյալ իրավունքի իրացման հնարավորությունը ևս բացարձակ չէ և կարող է ենթարկվել տրամաբանական սահմանափակման:



**КАРИНЕ ДАВТЯН**

Помощник судьи в Апелляционном административном суде РА  
 Соискатель кафедры гражданского и гражданско-процессуального права  
 Российско-Армянского (Славянского) Университета г. Ереван

**ПОНЯТИЕ СПЕЦИАЛЬНЫХ ЗНАНИЙ В  
 ГРАЖДАНСКОМ И АДМИНИСТРАТИВНОМ ПРОЦЕССЕ РА**

Институт судебных доказательств и доказывания - один из центральных институтов гражданского процесса и всякого судебного процесса в целом. Именно процесс доказывания составляет сердцевину всякого судебного процесса, ведь только с помощью доказательств суд получает знание о фактах, имеющих значение для разрешения дела. Сведущие лица, обладая специальными знаниями вносят существенный вклад в деятельность суда, которая направлена на установление фактических обстоятельств рассматриваемых дел.

В общем понимании знание представляет собой «продукт общественной, материальной и духовной деятельности людей; идеальное выражение в знаковой форме объективных свойств и связей мира, природного и человеческого»[1].

В соответствии с Конституцией РА правосудие осуществляется только судом. Действующим законодательством на судьи возлагается обязанность правильно разрешать дела, возникающие из гражданских, трудовых, семейных, административных и иных правоотношений, в пределах своей компетенции.

В зависимости от концепции доказательств, проводимой национальным законодательством того или иного государства, складывается его концепция правосудия. Зная, какими параметрами обладает доказательственная система государства, можно судить и о качественных характеристиках его судебной системы[2].

Гражданский процессуальный кодекс РА (далее ГПК РА) и Административный процессуальный кодекс РА (далее АПК РА) оперируют понятием «специальные знания».

В соответствии со ч.1 ст.86 действующего ГПК РА, суд, в процессе судебного разбирательства, по ходатайству сторон или же в случае, предусмотренным законом, по своей инициативе,

назначает судебную экспертизу.

Правовое основание назначения судебной экспертизы в гражданском процессе определено законодательно в ст. 84 ГПК РА «Заключение эксперта». В соответствии с ч.1 данной статьи, заключение эксперта - это письменный документ, относительно вопросов, возникающих в процессе разбирательства дела, которые требуют *специальных знаний* в области науки, техники, искусства, ремесла и в прочих сферах.

Необходимо отметить, что ст. 67 ГПК РА в качестве самостоятельного вида доказательств рассматривает показания специалиста. Согласно ч.1 ст. 45 ГПК РА: специалистом является лицо, обладающее теоретическими или практическими знаниями, которое по инициативе лиц, участвующих в судопроизводстве, приглашается на заседание суда, для дачи показаний по вопросам, имеющим существенное значение для данного дела, не проводя предварительных исследований. В то же время, в ч.5 данной статьи указано, что специалист вправе отказаться от дачи показаний по тем вопросам, которые вне пределов его специальных знаний.

АПК РА так же предусматривает возможность применения специальных знаний. В частности, в ч. 1 ст. 37 АПК РА, посвященной назначению экспертизы, закреплено следующее: суд, для разъяснения вопросов, возникающих в процессе разбирательства дела, которые требуют *специальных знаний*, по ходатайству сторон или же по собственной инициативе назначает судебную экспертизу, выполнение которой может быть поручено либо специализированному экспертному учреждению, либо эксперту.

Необходимо отметить, что пределы использования специальных знаний определяются исходя из правил относимости и допустимости, а так же достоверности доказательств, которые

достаточно для понимания существа исследуемого явления и формирования внутреннего убеждения, вынесения правильного и обоснованного решения, установлении истины по делу, с учетом возможностей науки и техники отвечать на выдвинутые вопросы, требующие специальных знания (специальные основания).

Итак, вышеизложенные статьи предусматривают возможность привлечения сведущих лиц в судопроизводство для разъяснения вопросов, которые требуют применение специальных знаний, однако в процессуальном законодательстве отсутствует само определение специальных знаний.

От того, какой смысл вкладывать в понятие «специальные знания», зависит субъектный состав участников, привлекаемых в гражданский процесс, ведь в широком смысле данного понятия, специальными знаниями могут предположительно обладать и судьи, и истцы, и ответчики, и прокуроры, эксперты и другие лица, которые участвуют в гражданском процессе.

Попытаемся определить место и роль специальных знаний в жизни общества в целом. Знания человеческого общества могут быть житейскими, художественными и научными (эмпирические и теоретические). Иногда встречается деление знаний общества на обыденные, философские и научные знания[3].

Гносеология не выделяет особой категории «специальные знания». Факт употребления законодателем термина «специальные» обусловлен, на наш взгляд, собственно правовым, прикладным, процедурным аспектом существования и использования накопленного человечеством знания для целей правосудия. Не случайно, Е.Г. Коваленко отмечает, что данное понятие является отраслевым, юридическим, применяемым для разграничения знаний различных специалистов, привлекаемых для содействия в решении определенных вопросов [4].

Указанная позиция была принята со стороны большинства ученых. Причем, многие стали противопоставлять специальные знания с общеизвестными (обыденными) знаниями. По этому поводу Е.В. Селина пишет: «Специальные знания - это знания не общеизвестные, не общедоступные, выходящие за рамки общеобра-

зовательной подготовки и житейского опыта». Знания, применяемые судьей при рассмотрении и разрешении гражданских дел, иных субъектов, условно можно разделить на две составляющие: *обыденные знания* и *профессиональные знания* [5].

Д. А. Керимов приходит к выводу о целесообразности в структуре правового сознания вычленять три уровня сознания: *обыденное, непосредственное (эмоциональное)*, отражающие правовые отношения людей в повседневной жизни; *практическое*, основанное на опыте правового строительства; *научное*, связанное с исследованием того круга явлений, познание которых необходимо для решения правовых проблем» [6].

Таким образом, представляется возможным с определенной долей условности выделить *три уровня знания в социуме*: обыденные знания; практические (профессиональные) знания; научные (теоретические) знания.

По мнению А. А. Эйсмана, специальные знания - это «знания не общеизвестные, не общедоступные, не имеющие массового распространения; короче, это знания, которыми располагает ограниченный круг специалистов, причем, очевидно, что глубокие знания в области, например, физики, являются в указанном смысле специальными для биолога, и наоборот» [7].

В приведенном определении отмечен важнейший признак специальных знаний, а именно то, что они не являются общеизвестными. Однако данное утверждение является относительным, поскольку соотношение специальных знаний с общеизвестными по своей природе изменчиво, поскольку зависит от уровня развития общества и степени интегрированности научных знаний в повседневную жизнь человека.

З. М. Соколовский заметил, что попытка определить специальные знания путем их противопоставления общежитейским, общеизвестным неудачна. В зависимости от обстоятельств дела, квалификации лиц и иных факторов, одни и те же знания могут быть отнесены либо к специальным, либо к общеизвестным.

Поэтому, несмотря на объективно существующий процесс - переход части специальных знаний в категорию общеизвестных, спе-

циальные знания не утрачивают от этого своей специфики и остаются такими в части, которая не является общеизвестной «среднему» индивиду.

Таким образом, профессионализм, в отличие от дилетантства, «непрерывно связывается с наличием специальных знаний», имеющих прочную научную основу [8].

Наиболее полно отражает суть специальных знаний следующее определение: «Под специальными знаниями в форме судебной экспертизы следует понимать такую совокупность профессиональных знаний, навыков и умений, которая приобретена в результате специального образования или опыта работы, соответствует современному уровню развития соответствующей области науки, техники, искусства или ремесла и является достаточной для проведения экспертного исследования и дачи компетентного заключения по интересующим суд вопросам по конкретному делу» [9].

В. И. Шиканов отмечает, что из понятия «специальные знания» исключаются общеизвестные знания, а также познания в области права [10].

В литературе дискуссионным является вопрос о возможности проведения «правовой экспертизы» в судопроизводствах в целом.

В. П. Зезьянов пишет: «Специальные знания - это любые не правовые в своей основе знания, используемые в процессе раскрытия, расследования и предупреждения преступлений, путем привлечения по инициативе субъекта доказывания соответствующих специалистов, на основании норм уголовно - процессуального закона, и в связи с установлением необходимости использования специальных знаний, которые могут быть неизвестны широким общественным массам» [11].

По мнению Е.Р. Российской, «... в настоящее время судья, следователь, лицо, производящее дознание, лицо, рассматривающее дело об административном правонарушении, как правило, обладают знаниями только в определенных отраслях права и не могут в необходимой степени ориентироваться во всех тонкостях современного обширного законодательства, которое к тому же постоянно изменяется и развивается» [12].

Отметим также, что в связи с реформированием законодательства о судостроительстве, да и фактически, на практике, имеет место определенного рода специализация судей. Важным представляется только определить цель и границы специализации. В частности, В. Яковлев отметил: «Нам надо делать решительные шаги по углублению специализации судей... Без специализации у нас ничего не получится» [13].

В то же время специализация судов и судей не должна послужить основанием к умалению роли сведущих лиц в гражданском судопроизводстве.

Необходимо отметить, что вопрос о возможности проведения «правовой экспертизы» в гражданском процессе является дискуссионным, однако вопрос об участии специалиста (как процессуальной фигуры) в области какой-либо отрасли права не может быть отнесен к разряду таковых.

Возможность применения специальных знаний по правовым вопросам подтверждается ст. 1255 ГК РА: в целях установления существования и содержания норм иностранного права, суд может обратиться в установленном порядке к компетентным органам, находящимся в Республике Армении и за границей за содействием либо привлечь специалистов.

Вышеизложенная норма предоставляет возможность привлечения к делу специалистов, для выяснения определенных правовых вопросов.

Лукьянова И.Н. считает возможным как экспертизу по правовым вопросам, так и участие специалиста. Она предлагает следующий критерий, отграничивающий экспертизу по правовым вопросам от заключения специалиста по правовым вопросам: специалист не должен решать вопрос о применимости конкретной нормы права к рассматриваемому делу или о том, каким образом эта норма должна применяться в данном случае [13]. В вышеизложенной статье речь идет именно об установлении содержания норм иностранного права, и соответственно специалистом не решается вопрос о применимости конкретной нормы права к рассматриваемому делу.

Итак, проведенный анализ свидетельствует

о том, что **специальные знания представляют собой разновидность профессиональных знаний**, причем, как правило, в их основе - методы, приемы научного познания мира. При «несложных» делах бывает достаточно профессиональных знаний, не выходящих за рамки повседневной практической деятельности, в иных случаях - могут потребоваться глубокие научные знания (являющиеся для отдельных лиц профессиональными знаниями). Наука все больше проникает в повседневную деятельность (включая отправление правосудия), а повседневная жизнь (практика) ставит вопросы, требующие научного осмысления с целью последующего разрешения.

Суду с целью установления истины по делу часто бывает необходимо применение специальных знаний.

Обобщая вышеизложенное, считаем возможным выделить следующие признаки, которые характеризуют специальные знания. Итак, специальные знания не являются общеизвестными, приобретаются в процессе теоретической и практической подготовки к конкретной деятельности; имеют научную основу; вовлекаются в процесс в установленном законом порядке и при наличии у суда потребности в таких знаниях; обеспечивают вынесение законного и обоснованного акта судебной власти; используются в предусмотренных процессуальным законодательством формах.

Лица, обладающие данными знаниями, будут являться сведущими лицами в какой-либо области, которые могут именоваться по-разному: «специалисты»; «эксперты»; «сведущие лица».

Необходимо отметить, что ст.30 и ст. 31 ГПК РА посвящены участникам судопроизводства и субъектному составу лиц, участвующих в деле.

Согласно ст. 30 ГПК РА «Участники судопроизводства», участниками гражданского судопроизводства являются:

1. лица, участвующие в деле и их представители,
2. свидетель,
3. эксперт,

4. специалист,
5. переводчик,
6. уполномоченные лица и органы, в порядке предусмотренном законом.

Ст. 31 ГПК РА посвящена составу лиц, участвующих в деле:

1. стороны,
2. третьи лица,
3. заявители и лица, заинтересованные с исходе рассмотрения заявления, в отношении дел, предусмотренных настоящим кодексом.

Как следует из вышеуказанных статей, процессуальное законодательство четко разграничивает круг лиц участвующих в деле (в состав которых лица, обладающие специальными познаниями не входят), от состава участников судопроизводства.

Итак, исходя из вышеизложенного, принимая во внимание тот факт, что процессуальное законодательство оперирует таким понятием как специальные знания, однако на законодательном уровне отсутствует данное определение, на основании изложенного, можно дать следующее авторское определение специальных знаний. Итак, специальные знания в судопроизводстве - это не являющиеся общеизвестными, профессиональные знания, за исключением профессиональных знаний субъектов доказывания (судья, стороны спорного правоотношения, третьи лица), которые соответствует современному уровню развития соответствующей сферы, и которые используются в установленном законом порядке при рассмотрении и разрешении дел с целью вынесения законного и обоснованного акта судебной власти.

Вышеизложенное позволяет дать также определение сведущих лиц в судебном процессе - это компетентные, незаинтересованные в исходе дела и не являющиеся участвующими в деле лица, которые обладают специальными знаниями и навыками, привлекаемые в установленном законом порядке в судебный процесс с целью содействия в разрешении дела и выполнения отдельных процессуальных действий.

**ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆ ՀԱՏՈՒԿ (ԱՆՀԱՏԱԿԱՆ) ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Զինվորական հանցավորության կանխմանն ուղղված կարևոր ուղղություններից է, այսպես կոչված, անհատական պրոֆիլակտիկան, այսինքն նպատակաուղղված աշխատանքների իրականացումն այն կոնկրետ անձանց հետ, որոնց վարքագիծը կամ անձը բնութագրող առանձնահատկությունները վկայում են հետագայում նրանց կողմից հանցանք կատարելու հնարավորության մասին<sup>1</sup>:

Զինծառայողների փոխհարաբերությունների ոլորտում հանցավորության հետ պայքարի միջոցների համակարգը, հիմնականում, բաղկացած է երկու հիմնական խմբերից, որոնցից մեկը տվյալ տեսակի հանցագործությունների սոցիալական կանխարգելման ընդհանուր միջոցներ, մյուսը սոցիալական կանխարգելման հատուկ քրեագիտական միջոցներն են, քանզի հանցագործության կանխարգելումը ենթադրում է համապատասխան ազդեցություն հանցավորություն ծնող պատճառների և պայմանների վրա: Քրեագիտության մեջ այդ պատճառների առումով ընկալվում են բացասական (քրեածին) անհատական հատկությունների համախումբը, որոնք իրենք իրենց (վարքագծային հակահասարակական դրույթների առկայության դեպքում) կամ արտաքին քրեածին իրավիճակների (հակահասարակական իրավիճակային դրույթների առկայության դեպքում) հետ համագործակցության մեջ ստեղծում են որոշակի քրեական տեսակի հանցագործ վարքագծի դետերմինացման իրական հնարավորություններ:

Հրամանատարը (ղեկավարը) պարտավոր

է ենթակաների նկատմամբ ցուցաբերել նրբագացություն և ուշադրություն, փոխհարաբերություններում չթույլատրի անտակտություն, կոպտություն, համակցի բարձր պահանջկոտությունը և սկզբունքայնությունը անհատական արժանապատվության հարգանքի հետ, հստակ գիտենա սեփական ծառայողական գործունեությանը վերաբերվող օրենքները, զինվորական օրենսդրությունը, գործի դրանց հետ խիստ համապատասխանությամբ և ենթականերից պահանջի դրանց պահպանություն: Կանոնադրքային պահանջներում առավել արտահայտվում է իրավական տարրը, ինչն էլ վերջիններիս չի զրկում բարոյական իմաստից<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով հրամանատարները (ղեկավարները) պետք է օժտված լինեն ոչ միայն մասնագիտական, այլ նաև բարձր բարոյական հատկանիշներով, իրավական և քաղաքական բարձր մշակույթով: Քննարկելով անհատի վարքագծում բարոյականության և իրավունքի համագործակցությունը, անհրաժեշտ է նշել, որ բարոյական ազդեցությունը առավել ազդեցիկ է, նուրբ և արդյունավետ իրավական կարգավորումներից: Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել ռազմական բարձր կարգապահության աջակցության հրամանատարների (ղեկավարների) մասնագիտական գործունեության մեջ: Այնպիսի զգայուն օրգանիզմում, ինչպես զինվորական անձնակազմն է, ցանկացած գործի լուծումներում մանրունքներ չկան: Այստեղ միահյուսվում են արդարությունը, իրավաչափությունը, ճշմարտությունը և օրինականությունը<sup>3</sup>: Առանց մարդու, նրա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 124 2021

<sup>1</sup> Տե՛ս **Анденес И.** Наказание и предупреждение преступлений. Пер. с англ., М., Прогресс. 1979, 1:2 34- 35, **Алексеев А. И.** Причины преступлений и их устранение органами внутренних дел. М., 1982, |ф 16-17, **Антонян Ю. М.** Проблемы индивидуальной профилактики преступлений //Пути совершенствования мер по предупреждению преступности. М., 1988, 1:2 64-65, **Бурлаков В. Н.** Криминогенная личность и индивидуальное предупреждение преступлений: Дис. ... д-ра юрид. наук. СПб., 1998, 1:2 341-342:  
<sup>2</sup> Տե՛ս **Блувштейн Ю. Д.** Профилактика преступлений. Минск, 1986, էջ 57-58:  
<sup>3</sup> Տե՛ս **Гилинский Я. И.** Криминология. СПб., Питер, 2002, էջ 223-224:



իրավունքների և օրինական շահերի նկատմամբ հարգանքի և դաստիարակության, իրավական և քաղաքական բարձր մշակույթի, մասնագիտական էթիկայի նորմերի նկատմամբ խորը հարգանքի, փոխադարձ պահանջի բարդ է բացառել բացասական երևույթները, իսկ հետևաբար, սոցիալական արդարության սկզբունքների խախտումները: Ըստ մեր խորը համոզման, զինվորական անձնակազմում նման բացասական երևույթները քիչ կլինեն, եթե դրանցում պատշաճ կազմակերպվեր դաստիարակչական և անհատական-դաստիարակչական աշխատանքները: Ներկայումս ըստ դաստիարակչական աշխատանքների հրամանատարների տեղակալների պաշտոններում նշանակվում են ռազմական բարձրագույն հրամանատարական ուսումնական հաստատությունների շրջանավարտները: Չունենալով դաստիարակչական աշխատանքների անցկացման փորձ և հմտություններ, նման սպա-դաստիարակները, ինչպես իրենց հրամանատարները, դաստիարակչական աշխատանքները հանգեցնում են ըստ ռազմական կարգապահության և իրավակարգի ամրապնդումը, անձնակազմի շարքում իրավախախտումների կանխարգելումը ապահովող «ծեծկոտուքի», այլ անօրինական եղանակների, միայն իրենց առաջադրված նպատակների ցանկալի արդյունքների ձեռք բերման համար: Իրավախախտումների և հանցավորության կանխարգելման մեջ մեծ օգնություն կարող են ցուցաբերել իրավագիտության, իրավաբանական և ռազմական հոգեբանության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության, քրեագիտության, մանկավարժության և այլ ոլորտում լավ պատրաստված, մասնագետները: Բանակին անգնահատելի օգնություն են ցուցաբերում զինվորական դատախազները, քննիչները, ովքեր քննության ընթացքում բացահայտում են իրավախախտումների և հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառները և պայմանները: Ըստ մեր տեսանկյան, էական

կերճատվեր հանցավորությունը, ոչ կանոնագրքային հարաբերությունները, եթե հրամանատարական կազմը իր վարքագծով օրինակ ծառայեր ստորադասների համար՝ իր մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով, ինչպես նաև բարձր բարոյահոգեբանական կեցվածքով: Միննույն ժամանակ գոյություն ունի իրականության նաև հակառակ կողմը՝ դա կանոնագրքերի և հաստատված կանոնների, շփման և համագործակցության տարրական նորմերի չպահպանումն է, ինչպես նաև սպաների անտարբերությունը, չեզոք վերաբերմունքը, հաճախ նաև զինվորական կոլեկտիվներում առկա բացասական գործընթացներին և ավանդույթներին ուղղակի աջակցությունը<sup>4</sup>:

Բանակում հանցագործությունները՝ վտանգավոր ապակայունացնող գործոն, որը բացասաբար է ազդում ոչ միայն բանակի, այլ նաև ամբողջ պետության վրա, քանի որ ժամանակակից հայկական պետության հատուկ գործառույթ հանդիսանում է երկրի պաշտպանության ձևով գործունեության հատուկ տեսակը: Նման գործառույթը դասվում է պետական գործունեության հատուկ ձևերին:

Քրեագիտական հետազոտությունները<sup>5</sup> հաստատում են, որ հանցագործություն կատարած անձը ըստ սեփական անհատական հատկանիշների տարբերվում է օրինապահ քաղաքացուց ներքին բարոյահոգեբանական ոլորտի ձևախեղմամբ: Եվ երբ նման մարդու մոտ բարոյական և արժեքային որակների հիպերտրոֆիան ձեռք է բերում կայուն բացասական ուղղվածություն, մենք խոսում ենք հակահասարակական դրույթի առկայության վերաբերյալ:

Յու. Մ. Անտոնյանը սահմանում է անհատի հակահասարակական դրույթը որպես սեփական հայացքներին, պահանջներին և շահերին համապատասխան հասարակական շահերին դեմ գործելու պատրաստականություն<sup>6</sup>: Համանման տեսանկյուն ունեն բազմաթիվ գիտ-

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս **Лунеев В.В.** Преступность в армии и криминология. Изд. БЕК, М., 2002.  
<sup>5</sup> Մասնավորապես տե՛ս **Бурлаков В. Н.** Криминогенная личность и индивидуальное предупреждение преступлений: проблемы моделирования. СПб., 1998, **Соколов С. А.** Ответственность за преступления против военной службы: уголовно-правовое регулирование и криминологический аспект. Автореферат. Дисс. канд. юр. наук. Н. Новгород. 2002.  
<sup>6</sup> Տե՛ս **Ю. М. Антонян.** Роль конкретной жизненной ситуации в совершении преступлений. Академия МВД. СССР. М. 1973, էջ 42:

նականներ<sup>7</sup>: Հակահասարակական դրույթների ձևավորման վրա ազդում են տարբեր գործոններ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, իրավական բնույթի, հասարակության սոցիալական կառուցվածքը, ինչպես նաև քաղաքացիների նյութական ապահովածության մակարդակը: Մեր հասարակության կտրուկ շերտավորումը, քաղաքացիների ճնշող մեծամասնության կենսամակարդակի անկումը հանդիսանում է հակահասարակական դրույթների ձևավորման, հանցագործության կատարման սննդարար միջավայր: Պետք չէ մտածել, գրում է ակադեմիկոս Վ. Ն. Կուդրյավցևը, որ սոցիալական տարբերությունը հանգեցնում է նրան, որ բնակչության որոշ խմբեր հանցագործություններ են կատարում, իսկ մյուսները դրանից զերծ են: Նման տեսանկյունը կհանդիսանար միամիտ և սխալական: Մարդկանց վարքագծի վրա սոցիալական տարբերությունների ազդեցությունը կայանում է նրանում, որ այդ տարբերություններն արտահայտվում են պահանջների, շահերի, վարքագծային նպատակների և դրդապատճառների ձևավորման վրա<sup>8</sup>: Այդ իսկ պատճառով հակահասարակական տեսանկյունները, հակումները, սովորույթները սկսում են գործել այն դեպքում, երբ առկա են քրեածին իրավիճակներ, որոնք էլ, որպես կանոն, հանդիսանում են պատճառաբանող և իրենցում պարունակում «դրդիչ» պահեր: Կանխարգելիչ միջոցառումների անցկացման ուղիով նշված պահերի չեզոքացումը կնվազեցնի զինվորական կոլեկտիվներում իրավախախտումները, կկանխարգելի ծանր հանցագործությունների կատարումը: Հանցավորության կանխարգելման քրեագիտական տեսության մեջ կիրառվում են «նախականխում», «կանխարգելում», «կանխում» եզրույթներն ըստ հանցագործությանը հակադրման բարդ համակարգակառուցվածքային գործունեության նշման համար, որոնք ըստ Ի. Ի.

Իվանովի արդարացի պնդման, համընկնում են ըստ իմաստային բովանդակության և մասնագետների մեծամասնության կողմից կիրառվում որպես հոմանիշներ<sup>9</sup>:

Մենք ևս կհետևենք այդ տեսանկյանը: Քրեագիտական և քրեաբանական գրականության մեջ հեղինակների մեծամասնության կողմից պնդվում է, որ հանցավորության կանխարգելումը իրականացվում է հետևյալ մեթոդներով,

- ա) քրեաիրավական,
- բ) քրեադատավարական,
- գ) քրեակատարողական,
- դ) քրեագիտական,
- ե) քրեաբանական կանխարգելման:

Նշված մեթոդները լիարժեք կարող են կիրառվել նաև զին ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման խնդրում:

Հանցավորության քրեաբանական կանխարգելումն իրենում ներառում է ըստ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և կառավարական- ղեկավարական բնույթի միջոցառումների իրականացման գործունեություն, որը կողմնորոշված է հանցավորության քրեածին գործոնների բացահայտմանը և շտկմանը: Զինվորական հանցագործությունների քրեաբանական կանխարգելման մեջ կարևոր տեղ գրավում են քրեագիտական կանխատեսումները:

Քրեագիտական կանխատեսումը հանցավորության ապագա վիճակի (մակարդակի, կառուցվածքի, դինամիկայի) վերաբերյալ հնարավոր դատողություններ, դրա դետերմինանտը (պատճառների և պայմանների բնութագրությունը) և ժամանակի որոշակի հատվածում կանխարգելման հնարավորությունները ներառելով առաջարկվող փոփոխությունների որակական և քանակական գնահատականները և դրանց մոտավոր ժամկետների նշումները: Հան-

<sup>7</sup> Տե՛ս Зуйко Г. Г., Гришанин П. Ф., Кривошеев А. С., Ратинов А. Р. и др. Выявление причин преступности и предупреждения преступлений. М., 1967 Теоретические основы предупреждения преступности. М. 1977, Предупреждение преступлений. М. 1962, Игошев К. Е. Социальный контроль и профилактика преступлений. Горький. 1976, Стучков Н. А. Проблема личности преступника. Лекции по криминологии. Л. 1983, Жалинский А. Э. Специальное предупреждение преступностей в СССР. Львов, 1976 и др.

<sup>8</sup> Տե՛ս Кудрявцев В. Н. Причины правонарушений. М. 1976. էջ158

<sup>9</sup> Տե՛ս Иванов И. И. Кримиалистическая профилактика преступлений (Комплексное научное- ”практическое исследование). Санкт-Петербург, 2004. էջ53:

ցավորության զարգացումը կանխատեսել խիստ բարդ է<sup>10</sup>: Կանխատեսումը կառուցվում է վիճակագրական իրավիճակում առկա ելակետային տվյալների հիման վրա, այդ իսկ պատճառով հնարավոր չէ հաշվառել բոլոր գործոնները, որոնք ազդում են հանցավորության կառուցվածքի և դինամիկայի վրա: Նման գործոնների թվին կարելի է դասել.

- **իրավական գործոնը:** Զինծառայողները ի զորու չեն կանխատեսել օրենսդրական փոփոխությունները, այսինքն նույն արարքը ներկայումս կարող է հանդիսանալ իրավախախտում, իսկ վաղը՝ հանցագործություն,
- **կանխարգելիչ գործոն:** Հասարակությունն ի դեմս պետական մարմինների և հասարակական կազմակերպությունները մշտական պայքար են մղում հանցավորության դեմ այս պայքարում կիրառելով իրավաբանական, կազմակերպչական և դաստիարակչական միջոցներ: Այս պայքարի զարգացումը նախապես կանխատեսել հնարավոր չէ, առավել ևս որ պետական և հասարակական կազմակերպությունների կառուցվածքներին բնորոշ է փոփոխականության բնույթը,
- **սոցիալական գործոնը:** Հանցավորության վրա արտացոլվում են հասարակության մեջ ընթացող օբյեկտիվ սոցիալական գործընթացները: Կանխատեսել նաև այդ գործընթացները, նաև արդյունքները, որոնց դրանք կարող են հանգեցնել, ճշտության բարձր աստիճանով բավականին բարդ է: Հատկապես, դա վերաբերվում է ժամանակակից հասարակական-քաղաքական իրավիճակին,
- **սուբյեկտիվ գործոն:** Չի կարելի մերժել ղեկավարի ազդեցությունը, ընդ որում ամենատարբեր մակարդակների, այն գործընթացների վրա, որոնք կապ-

ված են հանցավորության դեմ և այն շրջապատող ֆոնային ազդեցությունների պայքարի հետ:

Քրեագիտական կանխատեսման առանձին խմբում անհրաժեշտ է առանձնացնել **անհատական հանցավոր վարքագծի կանխատեսումը**<sup>11</sup>, որի տակ ընկալվում է այս կամ այն կոնկրետ անձի կողմից ապագայում հանցագործության կատարման հավանականության սահմանումը: Անհատական կանխատեսումը ստորաբաժանվում է հանցագործություն կատարած անձանց հետհանցագործային վարքագծի և առաջնային հանցագործ վարքագծի կանխատեսումը<sup>12</sup>: Անհրաժեշտ է ընդունել, որ էական աստիճանով անհատական կանխատեսումը սուբյեկտիվային է, քանի որ կառուցվում է մեկ անձի կարծիքի հիման վրա (կամ անհատի հետ ըստ գործունեության տեսակի կապված մարդկանց աննշան թվի):

Միջանձնական հարաբերությունների ոլորտում իրավախախտումների կանխատեսումը սահմանվում է իրավախախտումների կոնտինգենտի (զինծառայողների) և կանխատեսման օբյեկտի (կայուն և մասշտաբային սոցիալաբացասական քրեական երևույթներ, ինչն էլ իր հերթին ենթադրում է կանխատեսվող վարքագծի լայն և բազմազան սպեկտոր՝ հանցագործությունից մինչև իրավախախտումներ և տարբեր ֆոնային երևույթներ) առանձնահատկությամբ: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, կանխատեսումային գնահատականների համար անհրաժեշտ է հաշվի առնել զինծառայողների պահանջները, շահերը և սովորույթները, նրանց ուսման, աշխատանքի, այլ մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, կենցաղում վարքագիծը, բնավորության գծերը, տարիքը, կրթությունը, քաղաքացիական մասնագիտությունը, դաստիարակության, կրթության պայմանները, բանակում վարքագիծը, ծառայության և զորամասում դաստիարակության պայմանները, կոնկրետ քրեական իրավիճակը:

<sup>10</sup> Стів Паска Э.Э. Криминологическая профилактика преступности: Теоретические и методологические основы: Автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1988, Саркисов Г. С. Теоретические основы индивидуальной профилактики преступлений. Автореф. дисс. ... д-ра юрид. науки. М., 1985 и др.

<sup>11</sup> Стів Актуальные проблемы уголовного права и криминологии: Сборник статей. Под ред. Э. В. Плывачевского, Э. М. Гузик-Макарук. М., 2019, էջ 467-469:

<sup>12</sup> Մանրամասն տե՛ս **Аванесов Г. А., Вицин С. Е.** Прогнозирование и организация борьбы с преступностью. М., 1972, **Аванесов Г. А.** Криминологическое прогнозирование и планирование борьбы с преступностью. М., 1972.

Անհրաժեշտ է նշել, քանի որ կյանքի բացասական երևույթների քրեական ազդեցությունն իրականանում է անհատի բացասական սոցիալական և սոցիալ- հոգեբանական վարքագծային ակտերի ձևավորման և իրականացման ուղիով (հակասոցիալական տեսանկյուններ, սովորույթներ, դրդապատճառներ, բնավորության գծեր և այլն), զինծառայողների շարքում իրավախախտումների կանխարգելումը ներառում է ըստ անհատի շտկման միջոցառումներ:

Ցանկացած անհատի ձևավորումն իրականացվում է մարդու և կոլեկտիվի վարքագծի սոցիալական կարգավորման պայմաններում: Առանձնահատուկ ռելևեային դա արտահայտվում է զինվորական զորամասերում: Սոցիալական միջավայրը հանդիսանում է այն ուժը, որի օգնությամբ իրականացվում է ինչպես դրական, այնպես նաև բացասական կողմնորոշումներով անհատի ձևավորումը<sup>13</sup>:

Բացի վերը թվարկված բոլոր գործոններից գոյություն ունի ևս մեկը, առանց որի բանակի արմատական վերակառուցումը հնարավոր չէ. վերաբերմունքը մարդկային կյանքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով զորակոչի չեղյալականացման անպտուղ երազանքների փոխարեն լավ է մտածել ըստ առկա բանակի բարելավման իրական քայլերի վերաբերյալ:

Առաջինը, անհրաժեշտ է «թափանցիկ» դարձնել բանակում ֆինանսական գործառույթների համակարգը, քանի որ առանց դրա Զինված ուժերում դրամական միջոցների հոսքը անիմաստ է: Գումարները սպառվում են անհայտ ուղղությամբ, երբեմն ուղղակի թալանվում ռազմական չինովիկների և «բարեփոխիչների» կողմից: Երկրորդը, անհրաժեշտ է հնարավորինս կրճատել պարտադիր զորակոչիկների թիվը, իսկ ազատված միջոցներն ուղղել պայմանագրայինների վճարմանը և ժամանակակից տեխնիկայի ու սպառազինության գնմանը:

Երրորդը, անհրաժեշտ է խստորեն պայքարել նրանց դեմ, ովքեր բանակում անօրինությամբ են զբաղվում, կհանդիսանան շարքային զինծառայողներ թե սպաներ: Յուրա-

քանցյուր զորանոցին առնթեր պետք է ստեղծվի հատուկ ծառայություն, որտեղ առանց խնդրոտների կարող են բողոքել ոչ կանոնագրքային փոխհարաբերություններից տուժողները:

Զինծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման առումով լուրջ ուշադրության է արժանի Զինված ուժերի բարեփոխությունների վերաբերյալ հարցը, որի տարրեր, ըստ մեր տեսանկյան, պետք է դառնան.

- տարիքի ավելացումը, որից իրականացվում է զինծառայության զորակոչը (19-20 տարեկան),
- մասնագիտական (պրոֆեսիոնալ) բանակին ակտիվ անցումը,
- Զինված ուժերի և զինծառայողների իրենց զբաղեցրած պաշտոններին համապատասխանությամբ գործառնական պարտականությունների օրենսդրական կարգավորումը,
- սպա-դաստիարակների ինստիտուտի զարգացումը,
- առանձին ստորաբաժանման մասում ըստ իրավական ապահովման հրամանատարի օգնականի պաշտոնի ներածումը, որը կզբաղեցնեն իրավաբանական բարձրագույն կրթությամբ սպան:

Տվյալ տարրը հնարավորություն կընձեռեք զորամասի հրամաններից անկախ իրականացնել ըստ հանցագործությունների բացահայտման աշխատանքները, բացառել հանցագործությունների և հատկապես զինծառայողների միջև փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման թաքցման ցանկացած դեպք:

Դիտարկվող հանցագործությունների բարձր լատենտայնությունն ուղեկցվում է, ամենից առաջ պատանեկական տարիքի հոգեբանական առանձնահատկություններով<sup>14</sup>, կողմնորոշված հասակակիցների և առավել տարիքավորների շրջանում ինքնահաստատմանը, սեփական անձում այնպիսի հատկությունների ձևավորմանը, ինչպես՝ կայունությունը, արիությունը, ձևա-

<sup>13</sup> Տե՛ս **АНТОНЯН**. Преступника как объект предупредительного воздействия //Личность преступника и предупреждение преступлений: Сб. науч. трудов. М., ВИИ МВД СССР, 1987, էջ 3-13:

<sup>14</sup> Տե՛ս **АНТОНЯН Ю. М.** Психология преступления и наказания. М., 2000, էջ 213-214:

վորված կյանքի պայմանները ինքնուրույն լուծելու ունակությունները, հոգևոր այնպիսի հատկությունների հետ հարևանակից, ինչպես սեփական գործողությունների ճշտության մեջ անվստահությունը, սեփական անլիարժեքության տարբեր համալիրները, աննշան կենսափորձի արդյունքում իրավիճակի սկզբունքային գնահատման անընդունակությունը, անհավատությունը (հաճախ օբյեկտիվ պայմանավորված) նրանում, որ հրամանատարը, անմիջական ղեկավարը ունակ չէ սահմանազատել նրան զինակցների հետ հարաբերություններում ծագող խնդիրներից:

Մի շարք դեպքերում, ընդհարվում ենք տուժողի կայուն համոզմունքի հետ, որ «մատնիչ» մականունը նրա համար կհանդիսանա առավել սարսափելի, քան կասկածյալի կողմից իրեն պատճառված առողջական վնասը:

Որպես կանոն, նման տեսակի իրավախախտումները հայտնի են դառնում հրամանատարությանը և իրավապահ մարմիններին այն դեպքերում, երբ տուժողին առողջական վնաս է պատճառվել, ինչը հնարավոր չէ թաքցնել կողմնակի անձանցից, հատկապես բուժաշխատողներից, տուժողը ինքն է դատաստան տեսնում իր վիրավորողների հետ, ինչը, որպես կանոն, ևս հանգեցնում է ծանր հետևանքների, քանի որ դեպքերի մեծամասնությունում նման տեսակի գործողությունները կատարվում են աֆեկտի վիճակում կամ անհրաժեշտ պաշտպանության սահմանների գերազանցմամբ, տուժողը կյանքը ավարտում է ինքնասպանությամբ կամ ինքնակամ հեռանում զորանոցից կամ ստորաբաժանումից, տուժողը կատարում է ցուցադրական գործողություններ որոնց նպատակ, որպես կանոն, հանդիսանում է առավել բարձր կարգի հրամանատարության կողմից սեփական անձի նկատմամբ ուշադրության գրավման փորձերը, ուժեր, ըստ նրա կարծիքի, կարող են իրականացնել նրա այլ ստորաբաժանում փոխանցելու խնդրանքը, սպաները, ենթասպաները, բուժաշխատողները տուժողի մարմնին առավոտյան պլանային մարմնական և բժշկական զննությունների ժամանակ հայտնաբերում են հարվածների հետքերը, բաղնիքում լողանալու ժամանակ, սպաները, ենթասպաները հին ծառայողներին հայտնաբերում են հանցագործության

վայրում, երբ վերջիններս ծեծում են երիտասարդ զինակիցներին:

Դրա հետ կապված ծագում է ողջամիտ հարց. բացի իրավաբան մասնագետից ո՞վ պետք է անմիջական պաշտպանի զինծառայողների կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը: Իսկ առայժմ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների հետ հիմնականում պայքարում են ստորաբաժանումների և զորամասների հրամանատարները, ում կյանքը երբեմն ստիպում է իրենց վարույթային ստորաբաժանումներում շահագրգիռ լինել բացասական երևույթների թաքցման մեջ:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ բոլոր աստիճանների հրամանատարների և ղեկավարների, ինչպես նաև ըստ դաստիարակության և իրավական աշխատանքի տեղակալների գործունեության մեջ ըստ կանոնագրքային փոխհարաբերությունների խախտումների բացահայտման և կանխարգելման հիմնական ուղղություն եղել, կա և կլինի զինծառայողների հետ աշխատանքը:

Անհատական աշխատանքի հիմնական ուղղություններն են.

1. Ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների շրջանակներում ընդգրկված անձանց ուսումնասիրություն և դաստիարակություն, միևնույն ժամանակ.

- հաշվի առնել զինծառայողների օրինական շահերը և պահանջները, ինչպես նաև սովորույթները,
- լինել կենցաղում և ծառայության մեջ նրա վարքագծի իմացությունում, գիտենալ ծառայության, աշխատանքի, այլ անձանց, սեփական անձի նկատմամբ զինծառայողի վերաբերմունքը,
- գիտենալ նախքան զորակոչը զինծառայողի դաստիարակության պայմանները,
- ունենալ լիարժեք տեղեկություններ նրա առողջության, նախկինում կրած հիվանդությունների, տրավմաների, անձի հոգեբանության վերաբերյալ,
- գիտենալ վատ սովորույթների և հակումների վերաբերյալ:

2. Դրա հետ կապված անհրաժեշտ է պատեհաժամ բացահայտել անձանց, որոնց մոտ արտահայտվում է գրգռվածություն, հուզական

ուժեղ բռնկումներ, դեպրեսային խորը արտահայտումներ, սեփական անձով և շրջապատողներով դժգոհություն, զինձառայողների շարքում ինքնահաստատման ձգտումներով:

Այսպիսով, հանցակազմի ուսումնասիրվող քրեական ասպեկտն իրենից ներկայացնում է տվյալ տեսակի իրավախախտումների պատճառների և պայմանների բացահայտմանը, վերլուծությանը և չեզոքացմանը կողմնորոշված գիտելիքների և (գործնական միջոցների բավականին բարդ համալիր:

3. Չին ծառայության ժամանակ իրավախախտումներից տուժողը, որպես կանոն, ըստ զորակոչի զինձառայող, ըստ տարիքի առավել երիտասարդ և ըստ զորակոչի առավել ուշ ժամկետների, հանցագործ ոտնձգությունների վերաբերյալ չհայտարարող, նախքան ծառայությունը ապագա նվաստացումներին պատրաստ անձը (ապագա նվաստացումները ավանդույթ համարող, որով պարտավոր է անցնել յուրաքանչյուր «իրական» տղամարդը), թույլ ֆիզիկական հարաբերությունում և ոչ ֆիզիկական, ոչ հոգեբանական բեռնումներին չնախապատրաստված, բանակային պայմաններին հարմարեցման փուլում գտնվող, ում մոտ բացակայում է իրավախախտներին հակադրության ցուցաբերման իրական հնարավորությունները:

4. Տուժող զինձառայողներին պայմանական կարելի է բաժանել թույլ և քիչ հարմարվող, կամակոր բնավորությամբ անձանց:

5. Ռազմական որոշ հոգեբանների<sup>15</sup> և իրավաբանների կողմից առանձնացվում է նաև երրորդ հատուկ խումբը: Նրանց դասվում են ըստ զորակոչի զինձառայողները, ովքեր ըստ մի շարք պատճառների հեշտությամբ վերապրել են զինձառայության առաջին բարդությունները և բանակային «տառապանքների» համար ընդգրկվել զինակիցների կողմից երիտասարդ զինվորների «դաստիարակությանը»:

Չինվորական հանցագործությունների քրեական կանխարգելման կառուցվածքում էական, տեղ են զբաղեցնում իրավական բնույթի միջոցները: Չինձառայության մասին իրավական ակտերը պարտավորեցնում են ամենից առաջ զորամասի հրամանատարներին ձեռ-

նարկել ըստ հանցագործությունների և իրադարձությունների կանխարգելման միջոցներ, հարուցել քրեական գործեր: Այդ իսկ պատճառով հրամանատարը պետք է օժտված լինի քրեական իրավունքի, քրեագիտության, քրեական դատավարության, վարչական, քաղաքացիական և աշխատանքային առումով անհրաժեշտ գիտելիքներով: Բոլոր մակարդակների սպանների իրավական գիտելիքների իմացության վերաբերյալ գրականության մեջ բազմակի հարց է առաջադրվել: Բավական չէ գիտենալ իրավունքի նորմերը, անհրաժեշտ է մշակել սեփական ենթակաների և սեփական անձում այդ նորմերի պահանջների հարգման և խիստ կատարման սովորույթներ: Ինչպես հայտնի է իրավունքի նկատմամբ հարգանքը իրենից ներկայացնում է իրավունքի նկատմամբ անձի վերաբերմունքը բնութագրող իրավագիտության տարր: Եթե հրամանատարը չի տիրապետում օրենքներին, այստեղ նաև հնարամտությունը չի օգնի: Անհրաժեշտ է զինձառայողների իրավական պատրաստվածության պետական ծրագիր: Նման պատրաստվածությունը պետք է անցկացվի ուսումնարաններում, ինստիտուտներում և ակադեմիաներում: Պետք է լինի նաև բազային պատրաստվածություն:

Այսպիսով, պետք չէ կարծել, որ կանոնագրքային կանոնների խախտման մեջ պայքարում օրենսդրական հիմքերը բավարար չեն, չնայած անհրաժեշտ է նշել ըստ քննարկվող խնդրի, այդ թվում նաև քրեական օրենսդրության թույլ կողմերը: Ըստ մեր տեսանկյան օրենսդրության կանխարգելիչ գործառույթը պետք է կառուցվի կատարվածի հասարակական վտանգավորությունից, առաջացող հետևանքներից և իրավախախտող անձից կախված քրեական և կարգապահական պատասխանատվության դիֆերենցման հիման վրա: Դրա հետ կապված նպատակահարմար է համարվում Չինված ուժերի կանոնագրքային կանոնների խախտման համար պատասխանատվության հատուկ հոդվածը, մանր խուլիգանության համար վարչական պատասխանատվության համանմանությամբ, ինչը հնարավորություն

<sup>15</sup> См Виллюнас В. К. Психология эмоциональных явлений. М., 1976. Волков Б. С. Мотивы преступлений (уголовно-правовое и социально- психологическое исследование. Казань. 1982.

կտա իրավախախտին մեկուսացնել, այլ ոչ ենթարկել նրան քրեական պատասխանատվության, ինչի արդյունք կարող է հանդիսանալ պայմանական դատապարտումը: Մեր կարծիքով, եթե սպաները, սկսած ցածր օղակից, տիրապետեին անհրաժեշտ իրավական և մանկավարժական գիտելիքներով, ապա նրանք կկարողանան դաստիարակչական գործընթացի ընթացքում

զինծառայողներին ներարկել բարձր բարոյական հատկանիշներ, իրավունքի և զինվորական կանոնագրքային հարաբերությունների նկատմամբ հարգանք:

Կրիմինալոգիական կանխարգելումը ամփոփվում է նրանում, որ նախաքննության գործընթացում հաստատելով ըստ քրեական գործի հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքները, քննիչը իրավասու է համապատասխան կազմակերպությանը կամ համապատասխան պաշտոնատար անձին տրամադրել տեղեկություններ ըստ նշված հանգամանքների կամ օրենքի այլ խախտումների չեզոքացման միջոցների ձեռնարկման համար: Տվյալ տեղեկությունները ենթակա են քննության ընդունման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ընդունված միջոցների վերաբերյալ պարտադիր տեղեկացման հետ: Նույն կերպ քննիչներն ընդունում են տվյալ զորամասում կամ ստորաբաժանումում իրավախախտման կատարման պատճառների և պայմանների չեզոքացման վերաբերյալ պաշտոնական անձանց հասցեին մասնավոր որոշումներ: Հանցագործությունների կանխարգելման ազդեցիկ միջոց հանդիսանում են զինվորական դատախազի նախազգուշացումները:

**Հանցավորության քրեական կանխարգելումը:** Հանցավորության քրեական կանխարգելման հարցերին նվիրված քրեագետների աշխատությունների և հանցավորության դինամի-

կայի վերլուծությունը վկայում է, որ զինվորական հանցագործությունների քրեագիտական կանխարգելման հիմնական ուղղություններն են.

- հանցավոր արարքի արագ բացահայտումը,
- հանցագործության վերաբերյալ հնարավորինս (առանց խախտելու նախաքննության գաղտնիքը) լայն տեղեկացումը զինվորական անձնակազմին,
- հանցագործության պատճառների և պայմանների բացահայտում և համապատասխան միջոցառումների իրականացում՝ դրանց կանխարգելման նպատակով,
- արդար նախաքննության և դատաքննության իրականացում:

Վերոշարադրյալից կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների.

1. Զինծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը հանդիսանում է քրեաիրավական օրենսդրության և քրեագիտության հիմնական խնդիր:

2. Հանցագործությունների պատճառները և պայմանները հիմնականում «թաքնված» են միջանձնական հարաբերություններում և կախված անհատի հակահասարակական կեցվածքից:

3. Հակահասարակական դիրքորոշման դրսևորման համար պահանջվում է քրեածին իրավիճակի առկայություն, որը հետևանք է ցածր կարգապահության և կանոնագրքի փոխհարաբերությունների խախտումների:

4. Հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների և պայմանների հաստատումն իրականացվում է հանցագործությունների քրեագիտական, քրեաիրավական, քրեադատավարական, քրեակատարողական և կանխարգելման միջոցներով:



**ՆԵՐՄԱՆ ԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության  
ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով  
վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ  
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Պաշտոնական փաստաթուղթ» հասկացության բովանդակության բացահայտումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ օրենքոր ընդլայնվում է պաշտոնական փաստաթղթաշրջանառության ոլորտը, ստեղծվում են փաստաթղթերի նոր տեսակներ, օրինակ՝ էլեկտրոնային փաստաթղթերը, ՀՀ քրեական օրենսգրքով տվյալ հասկացությունը սահմանված չէ, ինչն իրավակիրառ պրակտիկայում տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս՝ խոչընդոտելով համապատասխան արարքների հստակ և միատեսակ որակմանը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարելու կարևոր չափանիշ է այն, որ տվյալ անձը պետք է օժտված լինի իրավական նշանակություն ունեցող իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Հետևաբար, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ կարող է համարվել այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթղթեր տրամադրել քաղաքացիներին և դրանով իսկ կարգավորել նրանց վարքագիծը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի՝ պաշտոնական կեղծիք է համարվում պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ

կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը:

Նշված ձևակերպումից հետևում է, որ տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է առարկան՝ պաշտոնական փաստաթուղթը, այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է մանրամասն քննարկել այդ հասկացությունը:

«Պաշտոնական փաստաթուղթ» հասկացության էությունն ու բովանդակությունը բացահայտելու համար նախ և առաջ հարկ է անդրադառնալ «փաստաթուղթ» հասկացությանը: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ իրավական համակարգում մի շարք իրավական ակտեր անդրադառնում են ինչպես «փաստաթուղթ», այնպես էլ «պաշտոնական փաստաթուղթ» հասկացություններին: Մասնավորապես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:

Համաձայն «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ փաստաթուղթ է համարվում պահպանության և հանրային օգտագործման համար ժամանակի և տարածության մեջ փոխանցման ենթակա տեղեկություն պարունակող տեքստային, պատկերային, տեսաշարային և (կամ) ձայնաշարային և այլ նյութական կրիչը: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով սահմանվում է, որ պաշտոնական փաստաթղթեր են օրենսդիր, գործադիր մարմինների ընդունած և պաշտոնապես հրապարակված փաստաթղթերը, որոնք ունեն նորմատիվ կամ տեղեկատվական բնույթ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 124, 2021



«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» կոնվենցիայի (կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 14-ին) 1-ին հոդվածով սահմանվում է.

(...) Սույն Կոնվենցիայի նպատակների համար պաշտոնական փաստաթղթեր են համարվում՝

ա) պետության դատարանների կամ տրիբունալների կամ դրանց հետ կապված պաշտոնատար անձանց, ներառյալ դատախազի, դատարանի քարտուղարի կամ դատական կատարածուի կողմից ընդունված փաստաթղթերը,

բ) վարչական փաստաթղթերը,

գ) նոտարական փաստաթղթերը,

դ) մասնավոր կարգավիճակով գործող անձանց կողմից ստորագրված փաստաթղթերի վրա կատարված պաշտոնական հավաստագրերը, ինչպիսին են փաստաթղթի գրանցումը կամ որոշակի ամսաթվին դրա գոյության փաստն արձանագրող պաշտոնական հավաստագրերը, ինչպես նաև ստորագրությունների պաշտոնական և նոտարական հաստատումները:

Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիան չի կիրառվում՝

ա) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարված փաստաթղթերի նկատմամբ,

բ) առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերի նկատմամբ:

Ըստ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ պաշտոնական փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության դատարանների, վարչական և այլ մարմինների, այդ մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև նոտարների կողմից իրենց պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում թղթային կրիչի կամ էլեկտրոնային ձևաչափով կազմված և տրամադրված փաստաթղթերն են:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2002) 2 հանձնարարականը (Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է 2002 թ. փետրվարի 21-ին, փոխնախարարների 784-րդ հանդիպման ժամանակ) ուղղված անդամ պետություններին վերաբերում է պաշտոնական փաստաթղթերի մատչելիությանը, որի համաձայն՝ «պաշտոնական փաստաթղթեր» նշանակում է ամբողջ տեղեկատվությունը արձանագրված ցանկացած ձևով, կազմված կամ ստացված և պահվող պետական մարմինների կողմից և կապված ցանկացած հանրային կամ վարչական գործառույթի հետ՝ բացառությամբ նախապատրաստվող փաստաթղթերի (Եվրոպայի խորհուրդ, 2002)<sup>1</sup>: Ավելի ուշ՝ 2008 թվականին, Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան, որի 1-ին հոդվածն առավել լայն է մեկնաբանում «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը՝ սահմանելով այն հետևյալ կերպ՝ տեղեկատվություն, որն ամրագրված է ցանկացած ձևով և որը կազմվել կամ ստացվել և պահվում է պետական մարմինների կողմից<sup>2</sup>: 2020 թվականի ապրիլի 9-ին ՀՀ կառավարությունը թիվ 511-Ա որոշմամբ հավանություն է տվել վերոնշյալ կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը:

Միջազգային աղբյուրներում պաշտոնական փաստաթղթի բնութագրական հատկանիշներն են համարվում հետևյալները՝ 1. այն պետք է բովանդակի որոշակի տեղեկատվություն, 2. այդ տեղեկատվությունը պետք է որևէ ձևով ամրագրված լինի (գրավոր, թվային և այլն) և պետք է բովանդակի որոշակի տարրեր (ռեկվիզիտներ, կնիք, դրոշմ), 3. այդ տեղեկատվությունը պետք է ամրագրված լինի համապատասխան նյութական կրիչի վրա դրա հետագա պահպանման, օգտագործման կամ տարածման նպատակով, 4. փաստաթուղթը պետք է վավերացված, տրված կամ այլ կերպ տարածված լինի լիազորված անձի կողմից, 5. պետք է առաջացնի կամ ի վիճակի լինի առաջացնելու իրավական հետևանքներ կամ կա-

<sup>1</sup> Տե՛ս [https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset\\_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-rec-2002-2-of-the-committee-of-ministers-to-member-states-on-access-to-official-documents](https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-rec-2002-2-of-the-committee-of-ministers-to-member-states-on-access-to-official-documents):

<sup>2</sup> Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680084826>:

րող է օգտագործվել որպես փաստաթղթային ապացույց իրավակիրառ պրակտիկայում<sup>3</sup>:

Գերմանական քրեական իրավութունում փաստաթուղթ հասկացությունը բնութագրում են 3 հատկանիշներով՝ պաշտոնական բնույթ ունենալը, այն կազմող անձից բխելը, փաստաթղթաշրջանառության մեջ ապացույցի գործառույթ կատարելը<sup>4</sup>:

Մասնագիտական գրականության մեջ, մինչև վերջերս, առավել տարածված էր այն կարծիքը, որ «...պաշտոնական փաստաթուղթը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների այն գրավոր ակտն է, որը հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ և օժտված է համապատասխան ռեկվիզիտներով (համապատասխան ձև, կնիք, դրոշմ, համապատասխան պետական ծառայողի ստորագրություն և այլն)»<sup>5</sup>:

Տեղեկատվության ամրագրման և պահպանման բնագավառում վերջին տարիներին տեղի ունեցող զարգացումները, սակայն, բավարար հիմքեր են տալիս պնդելու, որ պաշտոնական փաստաթղթի նման սահմանումը հնացած է: Մասնավորապես, ժամանակակից գրեթե բոլոր քրեագետները այն կարծիքին են, որ չի կարելի պաշտոնական փաստաթուղթը սահմանել միայն որպես գրավոր ակտ: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն ու իրադարձությունները ներկայումս հաճախ ամրագրվում են համակարգիչների, այլ տեխնիկական սարքերի և կրիչների վրա<sup>6</sup>:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ փաստաթղթերը, կախված դրանց ծագման աղբյուրից, բաժանվում են երկու տեսակի՝ 1) պաշտոնական (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող) և 2) մասնավոր (ոչ պաշ-

տոնական): Այլ կերպ ասած, փաստաթղթերի նշված տեսակները սահմանազատվում են ըստ դրանք կազմող և տրամադրող սուբյեկտների:

Այս առումով հարկ է նշել, որ փաստաթղթերի վերոհիշյալ տեսակների առանձնացումը կարևոր նշանակություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցագործության որակման համար: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ի բովանդակությունից հետևում է, որ պաշտոնական կեղծիքի առարկա է համարվում միայն պաշտոնատար անձից բխող պաշտոնական փաստաթուղթը: Հետևաբար, մասնավոր (ոչ պաշտոնատար) անձից բխող փաստաթղթերը (դիմումը, բացատրագիրը, ստացականը, նոտարական վավերացմամբ պայմանագիրը, կտակը և այլն) պաշտոնական համարվել, ուստի և՛ քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության առարկա դիտարկվել չեն կարող:

Միևնույն ժամանակ, պաշտոնատար անձի կողմից իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ վավերացվող փաստաթղթերը, որոնք կարող են իրավական հետևանքներ առաջացնել (իրավունք վերապահել, պարտականություն առաջացնել կամ պատասխանատվությունից ազատել) պետք է պաշտոնական համարվեն: Այսպես, օրինակ՝ քննիչը, իր ստորագրությամբ վավերացնելով անձի կողմից տրված բացատրությունները, կազմում է պաշտոնական փաստաթուղթ, որը կարող է հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու համար: Հետևաբար, եթե քննիչը միտումնավոր ստորագրի կեղծ տեղեկություններ պարունակող բացատրությունները և դրա հիման վրա հետազայում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնի, նրա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ով՝ որպես պաշտոնական կեղծիք: Նույն կերպ

<sup>3</sup> Տե՛ս <https://www.abacademies.org/articles/Official-document-as-a-legal-act-essential-aspects-1544-0044-22-6-443.pdf>:

<sup>4</sup> Տե՛ս Strafgesetzbuch mit Nebengesetze., erläutert von Dr. Thomas Fischer. 62. Auflage. Verlag C.H. Beck oHG. München, 2015. S. 2128:

<sup>5</sup> Տե՛ս Дорохов В.Я. Понятие документа в советском праве // Правоведение, 1982, № 2, էջ 55:

<sup>6</sup> Տե՛ս օրինակ՝ Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право, էջեր 178-179, Толеубекова Б.Х. Компьютерная преступность: уголовно-правовые и процессуальные аспекты. Караганда, 1991, էջեր 35-36:

պետք է որակվի, օրինակ՝ հարկային տեսուչի՝ իր մասնակցությամբ իրականացված ստուգումների ընթացքի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող զեկուցագիրը, որը կարող է հիմք հանդիսանալ նրա նկատմամբ ծառայական քննություն չիրականացնելու համար<sup>7</sup>:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 314-ի իմաստով՝ որպես պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրամադրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ: Միևնույն ժամանակ, տվյալ հանցակազմով նախատեսված հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ առևտրային, հասարակական և այլ ոչ պետական կազմակերպությունների կողմից տրվող փաստաթղթերը, քանզի պաշտոնական կեղծիքը պետական ծառայության և տեղական ինքնակառավարման նորմալ գործունեության դեմ ուղղված հանցագործություն է:

Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Սամվել Գաբրիելյանի վերաբերյալ 2010 թ. հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 գործով որոշման 16-րդ կետում արձանագրվում է, որ «պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ»<sup>8</sup>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Ս. Պապիկյանի և Ա. Սարգսյանի վերաբերյալ ԱԲԴ/0116/01/15 որոշմամբ արձանագրել է, որ փաստաթուղթը

ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի իմաստով պաշտոնական դիտարկվելու համար պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝

1) այն պետք է ունենա իրավաբանական նշանակություն, մասնավորապես՝ պետք է պարունակի կամ դրանով պետք է տրամադրվի իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկատվություն (...),

2) հաշվի առնելով քննարկվող հանցագործության օբյեկտը (այն ուղղված է պետական ծառայության բնականոն գործունեության դեմ), ինչպես նաև հանցագործության սուբյեկտը (սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին՝ կարող է լինել միայն պաշտոնատար անձը, ով համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշներին)՝ այն, որպես կանոն, պետք է տրված լինի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կողմից,

3) այն պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինի: Մասնավորապես՝ փաստաթուղթ՝

- պետք է գտնվի նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա,
- պետք է ունենա որոշակի վավերապայմաններ, օրինակ՝ կնիք, դրոշմ, ստորագրություն և այլն (...)<sup>9</sup>:

Այսպիսով, պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ: Ընդ որում, անկախ նրանից, թե ինչ տեսքով է հանդես գալիս պաշտոնական փաստաթուղթը, այն պետք է ունենա համապատասխան ռեկվիզիտներ (կնիք, դրոշմ, համապատասխան ձև և այլն) և հավաստվի պետական ծառայողի ստորագրությամբ կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

<sup>7</sup> Տե՛ս <http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf>:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: 2010 թ. 2-րդ կիսամյակ – 2011 թ.: Եր.: Ամարաս, 2012: Հ. 3, էջեր 81-82:

<sup>9</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=117520>;

**ԱՐՈՒՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր քննչի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

**ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՏՄԱՆ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հոդվածում կատարված վերլուծության արդյունքում եզրահանգում է կատարվել առ այն, որ քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի գործարկման պայմաններում ևս հնարավոր է կազմակերպել դատավարական միջոցների խնայողություն՝ այդ միջոցները առավել ծանր և բարդ հանցագործությունների քննությանը նպատակաուղղելու համար: Անընդունելի է համարվել այն պնդումները, թե նպատակահարմարության և օրինականության սկզբունքների դեպքերում գործ ունենք հանրային շահի տարբեր բովանդակությունների հետ: Օրինականության սկզբունքի գործարկումը չի ենթադրում յուրաքանչյուր հանցագործությամբ անկախ հանգամանքներից քրեական հետապնդման հարուցում: Թե՛ քրեական հետապնդման հարուցման օրինականության, թե՛ նպատակահարմարության սկզբունքների դեպքում հանրային շահի բովանդակությունը չի փոխվում, այլ փոխվում են դրան հասնելու (այն ապահովելու) միջոցները:

**Բանալի բառեր.** օրինականություն, նպատակահարմարություն, հանրային շահ, քրեական հետապնդում, պատասխանատվության անխուսափելիություն, խնայողություն:

**АРУСЯК АЛЕКСАНИЯ**

Следователь по особо важным делам управления по расследованию преступлений общего характера специальной следственной службы РА, советник юстиции третьего класса, соискатель кафедры уголовного права и уголовного судопроизводства института права и политики Российско-Армянского университета

**АРТАК КАЗАРЯН**

Главный специалист экспертного аналитического отдела правового консультативного управления аппарата Конституционного суда РА

**Օ ՎՈՓՐՈՑԱՅ ԿԵՐՈՒՄ ԲՐԻՆՑԻՓԱ ՎՈՅԲՈՋՆԵՐԻ ԱՂՈՒՄՆԻ ՍԵՐԵՏՈՎՈՐՈՒՄ ԵՎ ԵՔՈՆՈՄԻԱ ՍՐՈՑԵՍՍԱԿԱՆ ՄԵԾՏՎԵՐՆԵՐԻ**

В результате анализа, проведенного в статье, был сделан вывод о том, что в условиях применения принципа законности возбуждения уголовного преследования также можно организовать экономию процессуальных средств для направления последних на рассмотрение более тяжких и сложных преступлений. Считались неприемлемыми утверждения о том, что в случае принципов целесообразности и законности мы имеем дело с различным содержанием публичного интереса. Задействование принципа законности не предполагает возбуждения уголовного преследования по каждому преступлению независимо от обстоятельств. Как в случае законности возбуждения уголовного преследования, так и в случае принципов целесообразности, содержание публичного интереса не меняется, а меняются способы его достижения (обеспечения):

**Ключевые слова:** законность, целесообразность, публичный интерес, уголовное преследование, неизбежность ответственности, экономия.

**ARUSYAK ALEKSANYAN**

Investigator of Particularly Important Cases  
of the General Crimes Investigation Department  
of the RA Special Investigation Service Applicant  
of the Department of Criminal law and  
Criminal Procedure Law of the Institute of Law and  
Politics of the Russian-Armenian University

**ARTAK GHAZARYAN**

Chief Specialist of the Expertise-Analytic Division  
of the Legal-Advisory Department of Staff  
of the RA Constitutional Court

**ON THE CHOICE OF THE PRINCIPLE OF INITIATION OF CRIMINAL PROSECUTION AND  
ON THE ISSUE OF SAVING OF PROCEDURAL MEANS**

As a result of the analysis made in the article, it was concluded that in the conditions of applying the principle of legality of criminal prosecution, it is possible to organize savings of procedural means to direct those means to the investigation of more serious and complex crimes. Claim that in cases of expediency and principles of legality we are dealing with different contents of public interest, were considered unacceptable. The application of the principle of legality does not imply criminal prosecution for every crime, regardless of the circumstances. In the case of both the legality and expediency principles of initiating criminal prosecution, the content of the public interest does not change, but the means of achieving it (securing it) change.

**Keywords:** legality, expediency, public interest, criminal prosecution, inevitability of responsibility, saving.

\* \* \*

**ԴԱՎԻԹ ՕՃԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

